ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱԳԻԿ ՊԱՐՈՒՅՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ



Ե Ր Ե Վ Ա Ն
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2 0 1 1

ՀՏԴ 37
ԳՄԴ 74
Մ 806

Երաշխավորված է
ՀՀ ԿԳ նախարարի՝ 30.12.2010 № 1838-Ա/Ք հրամանով

Մկրտչյան Գ. Պ.
Մ 806 Կրթական համակարգն արտասահմանյան առաջավոր երկրներում /Գ.Պ. Մկրտչյան.-Եր.: Կրթության ազգային ինստիտուտ, 2011, - 160 էջ:

Ներկայացվող ձեռնարկը կարող է օգտակար լինել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 0312. «Դասավանդում տարրական դասարաններում», 0313. «Նախադպրոցական կրթություն» և 0314. «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտությունները նախընտրած ուսանողներին, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակին:

ՀՏԴ 37
ԳՄԴ 74

ISBN 978-9939-806-24-2
© Կրթության ազգային ինստիտուտ, 2011

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայաստանի Հանրապետության որդեգրած սոցիալ-տնտեսական քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում կրթության և ուսուցման ոլորտը: Վերջին տասնամյակում իրականացվող կրթական ոլորտի բարեփոխումները և տարբեր մակարդակներում տեղ գտած կառուցվածքային փոփոխություններն անչափ կարևորում են համաշխարհային, հատկապես, եվրոպական կրթական տարածքի հետ մեր ազգային կրթահամակարգի միասնականացման գործընթացները: Այսօր արդեն հրատապ են դարձել արտասահմանյան առաջավոր երկրների կրթական ձեռքբերումների ուսումնասիրությունն ու դրանց հետ թեկուզև հպանցիկ ծանոթությունը, որոնց էլ նվիրված է ներկայացվող աշխատանքը:

Հեղինակի համոզմամբ՝ քննարկվող հարցերը, բերված փաստերն ու աղյուսակ-սխեմաները կհետաքրքրեն ոչ միայն կրթության ոլորտի պատասխանատուներին, այլև մանկավարժներին, աշակերտներին, ուսանողներին և ծնողներին: Աշխատանքային սույն նախագիծը հատվածաբար կներկայացնի 9-ական երկրի կրթական համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները՝ առաջնորդվելով մշակութային տարբեր արժեհամակարգեր ունեցող պետությունների ընդգրկմամբ:

«Կրթական համակարգն արտասահմանյան առաջավոր երկրներում» գրքի առաջին մասում ներգրավված են Ֆրանսիան, Գերմանիան, Հնդկաստանը, Ավստրալիան, Կորեայի Հանրապետությունը, Նոր Զելանդիան, Ճապոնիան, Իսրայելը և Դանիան:

Գրքի երկրորդ մասում կներկայացվեն Չինաստանի, Ռուսաստանի, Սինգապուրի, Մալայզիայի, Կանադայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Շվեդիայի և Ֆինլանդիայի կրթական համակարգերի համառոտ նկարագրերն ու վերլուծությունը:

Աշխատանքի հեղինակ՝

Գագիկ Պարույրի Մկրտչյան

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Ֆրանսիայի Հանրապետությունը զբաղեցնում է ***551 հազար քառ. կմ*** մակերես, բնակչության թվաքանակը կազմում է ***61 մլն.մարդ,*** ազգաբնակչության միջին խտությունը ***111 մարդ/ քառ. կմ*** է, իսկ ուրբանիզացման մակարդակը՝ ***77%:***

Ֆրանսիայի Հանրապետության կրթական համակարգի հիմնական սկզբունքները ձևավորվել են ավելի քան հարյուր տարի առաջ՝ 1880-90-ական թվականներին, իսկ ընդհանուր առմամբ, ժամանակակից կրթական համակարգի հիմքերը դրվել են էլ ավելի վաղ՝ շուրջ 200 տարի առաջ՝ հանդիսանալով ներկայիս համաշխարհային կրթական ոլորտում առաջատարներից մեկը:

Ֆրանսիայի կրթական համակարգի առանցքային առանձնահատկություններից են պետական ուսումնական հաստատությունների թվային գերակայությունը ոչ պետականների (այսուհետ՝ մասնավորների) նկատմամբ և որակյալ կրթություն ստանալու հնարավորությունը բոլորի, այդ թվում նաև օտարերկրացիների համար, որն անվճար է, չունի կրոնական բովանդակություն ու պարտադիր է 6 -16 (17) տարեկան երեխաների համար:

Ֆրանսիայում գործող կրթական հաստատությունների մասնավոր հատվածում ընդգրկված է ընդհանուր սովորողների շուրջ 20%-ը: Ֆրանսիայի կառավարությունն ամեն տարի հսկայական միջոցներ է ներդնում կրթության և գիտության զարգացման ծրագրերում, մասնավորապես, պետական բյուջեի 25%-ն ուղղվում է կրթական համակարգի զարգացմանը: Ընդհանրապես, այդ միջոցները հատկացվում են համամասնական և հավասարակշռված սկզբունքով, հետևաբար, մայրաքաղաքային ու ծայրամասային ուսումնական հաստատություններն ի վիճակի են ապահովել համանման որակի և մակարդակի կրթու-

թյուն: Պետության իրավասության տակ են պետական և մասնավոր հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրերի հաստատումը, տարբեր ուղղվածության մրցույթների կազմակերպումը, ընթացիկ ու ավարտական քննությունների անցկացումը և մինչև *բակալավրի (baccalaureat)* մակարդակը շնորհվող դիպլոմների ու վկայականների տրամադրման իրավունքը:

Համաձայն *Դեբրեի օրենքի,* որն ընդունվել է *1959 թ.*-ին, կրթական համակարգի մասնավոր հատվածը գտնվում է պետական հոգածության ներքո և պետությունից ստանում է ֆինանսական մեծ աջակցություն՝ ըստ նախապես կնքված *երկկողմ պայմանա·րի (contract d'association):* Վերջինիս առանցքային պարտավորությունների ցանկի համաձայն, պետությունն իր վրա է վերցնում ուսուցիչների աշխատավարձերի վճարման և ուսումնառության ընթացքում կատարվող տարբեր ծախսերի փոխհատուցման, հատկապես, նյութատեխնիկական բազայի հագեցման ու վերազինման խնդիրները: Ներկայումս, միջին հաշվով յուրաքանչյուր ինը մասնավոր դպրոցից ութն օգտվում է Դեբրեի օրենքի ընձեռած հնարավորություններից: Ֆրանսիայի կրթական համակարգն առանձնանում է իր ցայտուն արտահայտված ազգային նկարագրով: Այստեղ գործում է դիպլոմների և գիտական աստիճանների շնորհման նեղ ազգային համակարգ, առավել բարձր են գնահատվում պետական ուսումնական հաստատությունների շրջանավարտների հնարավորություններն ու աշխատանքային-մասնագիտական կարողությունները, թեև օրինակ՝ հրուշակագործության բնագավառում անհամեմատ ավելի բարձր վարկանիշ են վայելում մասնավոր, վարպետային ուսուցում անցած մասնագետները:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ֆրանսիայի կրթական համակարգն ունի հետևյալ կառուցվածքային մակարդակները.

- *նախադպրոցական կրթություն* – մինչև 6 տարեկան.
- *նախնական կամ տարրական կրթություն* - 6-ից 11 տարեկան.
- *միջնակար· կրթություն,* որն ավարտվում է բակալավրի կոչման համար նախատեսվող քննությամբ - 12-ից 18 տարեկան.
- *բարձրա·ույն կրթություն* :

Կրթական յուրաքանչյուր մակարդակում առանձնացվում են փուլային սանդղավորումներ, որոնք պարբերաբար ենթարկվում են բարեփոխումների, հատկապես, վերջին 30 տարվա ընթացքում: Ի դեպ, կրթական բարեփոխում-

ներն իրականացվում են հասարակական լայն քննարկումների վերջնական արդյունքների հիման վրա՝ առաջնորդվելով կրթության ժողովրդավարական հիմնադրույթներով և հասարակության զարգացման գործընթացներին դրանք աստիճանաբար հարմարեցնելով:

Այսօր Ֆրանսիայում գործում է *71* համալսարան, շուրջ *300* բարձրագույն դպրոց, *5* «կաթոլիկ ինստիտուտ», մի քանի «պոլիտեխնիկական ինստիտուտ», բազմաթիվ «տեխնոլոգիական ինստիտուտներ», ինչպես նաև քոլեջներ, ճեմարաններ, բիզնես-դպրոցներ, առևտրի ու կառավարման դպրոցներ:

ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Վերջին տասնամյակի կրթական բարեփոխումների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում հետևյալ միջոցառումները.

- ✓ մանկապարտեզների *(ecoles maternelles)* ցանցի ընդլայնումը, որպեսզի 4-5 տարեկան բոլոր երեխաներն, ըստ բնակության վայրի, ապահովված լինեն համապատասխան նախակրթարանով.
- ✓ տարրական դպրոցից քոլեջ տեղափոխվելու համար նախկինում նախատեսվող պարտադիր քննությունների վերացումը.
- ✓ ցածր առաջադիմությամբ սովորողների համար հատուկ դասարանների *(classes de soutien)* ստեղծումը, ինչը հնարավորություն է տալիս առավել թույլ կարողություններով երեխաներին աստիճանաբար ու առանց հոգեբանական լարվածության հաղթահարել կրթական բնագավառում հանդիպող դժվարությունները և արգելքները.
- ✓ կրթության հիմունքների հստակեցումը հանրակրթական դպրոցից մինչև քոլեջ՝ առանց մասնագիտությունների և մասնագիտացումների տարանջատման.
- ✓ անվճար ուսուցման համակարգի ներդրումը, երբ ուսումնառության ողջ ընթացքում սովորողներն անհատույց ապահովվում են դասագրքերով ու ձեռնարկներով, ստանում են դրամական փոխհատուցում՝ մինչև ուսումնական հաստատություն հասնելու նպատակով փոխադրավարձի ծախսերը հոգալու համար.
- ✓ դասավանդվող առարկաների ցանկում կատարված նորամուծությունները, մասնավորապես, ֆիզիկայի, ինֆորմատիկայի և քաղաքացիական կրթության հիմունքների դասընթացների ավելացումը:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն տարվա նոյեմբերի վերջին Ֆրանսիայի դպրոցներում, քոլեջներում ու համալսարաններում անցկացվում են դասախոսական կազմի և ուսանողության, ինչպես նաև գործատուների ու պետական կառավարման ապարատի աշխատողների հարցումներ՝ նպատակ ունենալով պարզել կրթության արդյունավետության մասին հասարակական կարծիքն՝ ըստ սոցիալական տարբեր շերտերի: 2008-2009 թթ.-ի հարցումների արդյունքներով, ըստ հարցման ենթարկված 10 000-ական ֆրանսիացիների ճնշող մեծամասնության.

- ✓ կրթության բնագավառում անհարկի մեծ տոկոսաբաժին են կազմում տեսական դասընթացները (հարցման ենթարկվածների 74%-ը).
- ✓ երկար ժամանակ մոռացության մատնված տեխնիկական կրթությունը զարգանում է դանդաղ տեմպերով և չի համապատասխանում ոչ միայն համաեվրոպական, այլև ներազգային աշխատաշուկայի պահանջներին (62%).
- ✓ ուսուցման պայմանները մի շարք առումներով չեն բավարարում ժամանակակից պահանջներին, ինչի համոզիչ վկայությունն են գերծանրաբեռնված դասասենյակները և լսարանները, մանկավարժների ու դասախոսական կազմի տարիքային բարձր ցենզը, նոր մանկավարժական կադրերով ուսումնական հաստատությունների համալրման դժվարությունները, ուսումնամեթոդական բազայի մաշվածությունը, միևնույն դասարանում կամ կուրսում տարբեր կարողությունների և ունակությունների տիրապետող սովորողների համատեղումը, ուսումնական ծրագրերի շատ արագ ու երբեմն չհիմնավորված փոփոխությունները, ուսուցման «նոր» մեթոդների ոչնչով չարդարացված կիրառումը, հասարակության շրջանում ուսուցչի դերի և վարկանիշի անկախընթաց անկումը (83%).
- ✓ կրթական ոլորտում գերիշխում է սոցիալական (դասակարգային) անհավասարությունը (68%). օրինակ՝ 1950 թ.-ի համեմատ, 2008 թ.-ին բակալավրի կոչման համար քննություն հանձնողների թվաքանակն ավելացել է 10 անգամ, և եթե բակալավրի կոչմամաբ քաղաքացիները 1950 թ.-ին կազմում էին Ֆրանսիայի ազգաբնակչության 4,4 %-ը, ապա 2006-2009 թթ. այդ ցուցանիշը հասել է 31,9% -ի: Հետաքրքիր է, որ բակալավրի կոչում ունեցողների 58%-ը հանդիսանում է սոցիալա-

պես ապահով և բարձր կենսամակարդակով ընտանիքների ներկայացուցիչ, այն դեպքում, երբ հասարակության նշված շերտը կազմում է Ֆրանսիայի տնտեսապես ակտիվ բնակչության ընդամենը 7,2%-ը.

Չնայած կրթական համակարգում տեղ գտած թերություններին և բացթողումներին, կառավարությունը ջանում է բարեփոխել երկրի կրթական համակարգը, ինչը հաջողվում է իրականացնել փոխնիփոխ ձեռքբերումներով: Տարեցտարի մեծանում է կրթության ոլորտին տրվող բյուջետային հատկացումների ծավալը, որը 2008-2010 թթ.- ի վիճակագրական տվյալներով կազմել է ՀՆԱ-ի 6,3-6,5 %-ը: Որքան էլ որ տեսանելի են օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պայմաններից բխող թերացումները, այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ Ֆրանսիայի Հանրապետության կրթական համակարգը լավագույներից մեկն է Եվրոպայում ու դրանից շատ բան կարելի է փոխառնել և տեղայնացնել:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.Մանկապարտեզներն ընդունում են 2 տարին բոլորած երեխաներին:

2.Մանկապարտեզ հաճախելը պարտադիր չէ, սակայն գործնականում 3-6 տարեկան երեխաների ճնշող մեծամասնությունն օգտվում է նախակրթական ծառայություններից:

3.Ֆրանսիայի ողջ կրթական համակարգում նախադպրոցական կրթության ոլորտն ամենակայացածն է, քանի որ խմբերը ձևավորված են նախընտրելի թվակազմով՝ 8-10 երեխա մեկ խմբում, խաղասենյակները ձևավորված են ճաշակով, մաքուր են ու լուսավոր, ունեն տեղային ջեռուցման և օդորակման համակարգեր, հագեցած են տեսողական ու խաղային ժամանակակից սարքավորումներով, հայրենագիտական դաստիարակությանը և աշխարհաընկալմանը նպաստող բազմաթիվ պարագաներով, որոնցով շրջապատված երեխան անցկացնում է հարուստ և բովանդակալից առօրյա, վայելում երջանիկ մանկություն:

4. Նախադպրոցական համակարգում առանձնացվում է երեք ենթախումբ.

ա/ փոքրերի խումբ՝ 2-4 տարեկաններ. երեխաները զբաղվում են բացառապես խաղով.

բ/ կրտսերների խումբ՝ 4-5 տարեկաններ. երեխաները խաղից բացի զբաղվում են նկարչությամբ, երգեցողությամբ, ձեռքի աշխատանքով, շփման և հաղորդակցման կարողություններ մշակելով.

գ/ ավագների խումբ՝ 5-6 տարեկաններ. սովորում են հաշվել, ծանոթանում են տառերին, գրում են պարզ համադասական նախադասություններ, կարդում և պատմում են 4-5 նախադասությամբ կազմված ու տարիքային առանձնահատկություններից բխող տեքստային շարադրանքներ, կազմակերպում են դերային փոքրիկ թատերականացված խաղեր.

դ/ մանկապարտեզներն աշխատում են ամբողջ տարին, շաբաթական 5 օր, օրական 6+1 ժամ՝ առավոտյան ժամը 9-ից մինչև 16-ը, իսկ խոշոր արդյունաբերական քաղաքներում՝ մինչև ժամը 18-ից 19-ը:

Նկ.1. Ֆրանսիայի նախադպրոցական հաստատությունները հարմարավետ են և գրավիչ:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ (ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ)

Հանրակրթության առաջին մակարդակը կամ տարրական (նախնական) կրթությունը Ֆրանսիայաում պարտադիր է և անվճար: Այն բաժանվում է երեք խմբակազմի. տարրական դպրոց՝ հաճախում են 6 – 11 տարեկանները և անցկացնում ուսումնառության 5 տարի, քոլեջ՝ հաճախում են 11 – 15 տարեկանները և անցկացնում ուսումնառության 4 տարի, ճեմարան (լիցեյ)՝ հաճախում են 15 -17 կամ 15 -18 տարեկանները և անցկացնում ուսումնառության համապատասխանաբար 2 – 3 տարի: Պարտադիր են համարվում տարրական դպրոցն ու քոլեջը:

Տարրական դպրոցում ուսուցանվում են մինչև 11 տարեկան երեխաները: Տարրական դպրոցն ավարտելը պարտադիր է և անվճար բոլորի համար՝ հանդիսանալով պարտադիր կրթության առաջնային փուլ, որն ավարտելուց հետո սովորողները հանձնում են ստուգարք-հարցազրույց՝ նախնական կրթության մասին վկայագիր ***(certificat d'etudes primaire, CEP)*** ստանալու ակնկալիքով:

Նախնական կամ տարրական կրթությունը տևում է 5 տարի: Կրթական այս մակարդակը բաժանվում է աստիճանների.

1. Նախապատրաստական դասընթաց (CP).
2. Նախնական դասընթաց, առաջին տարի (CE 1).
3. Նախնական դասընթաց, երկրորդ տարի (CE 2).
4. Միջին դասընթաց, առաջին տարի (CM 1).
5. Միջին դասընթաց, երկրորդ տարի (CM 2).

Տարրական դպրոցում ուսուցումը տևում է շաբաթական 27 ժամ, ամեն օր ժամը 9 -12 և 14 -17 սահմաններում, շաբաթվա մեջ 4 օր վեցական դասաժա-

մով ու շաբաթ օրը 3 դասաժամով: Կիրակի և չորեքշաբթի օրերին երեխաները հանգստանում են:

Ընդհանուր առմամբ, տարրական դպրոցում արգելվում են տնային առաջադրանքների հանձնարարումը, սակայն որոշ մասնավոր դպրոցներ կիրառում են ինքնակրթության խրախուսական մեխանիզմներ՝ տնային հանձնարարականների տեսքով: Դասարանները կազմավորվում են երկսեռ սկզբունքով, մինչդեռ հեռավոր բնակավայրերում մինչ օրս էլ կարելի է հանդիպել հատուկ դպրոցներ «աղջիկների համար» կամ «տղաների համար»:

Տարրական դպրոցի դասարաններում բոլոր առարկաները դասավանդում է միևնույն ուսուցիչը:

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (ՔՈԼԵՋԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ)

Տարրական դպրոցից հետո, ֆրանսիացիները 11 տարեկանում ընդունվում են ***քոլեջ (college),*** որը հանդիսանում է միջնակարգ կրթության առաջին աստիճանը: Ֆրանսիական քոլեջներում դասարանները համարակալվում են հակառակ կարգով, այսինքն՝ սվորողն ընդունվում է 6-րդ դասարան, իսկ 4 տարի անց ավարտում է 3-րդ դասարանը:

Ֆրանսիայի Հանրապետությունում միջնակարգ կրթությունը կազմված է երկու փուլից՝ առաջին կամ ծանոթության ու դիտողականության փուլ և երկրորդ կամ կողմնորոշման փուլ.

6-րդ և 5-րդ դասարաններ՝ ծանոթության ու դիտողականության փուլ.

Քոլեջ ընդունված բոլոր երեխաներն առաջին երկու տարում իրենց ուսումնառությունը ձեռք են բերում միևնույն ծրագրով, առանց որոշակի կողմնորոշվածության՝ պարտադիր կարգով ուսումնասիրելով որևէ «կենդանի» լեզու՝ մայրենիին (պետական լեզվին) զուգընթաց:

Հինգերորդ դասարանի վերջում այն սովորողները, ում մոտ նկատվում են լուրջ դժվարություններ շփման և ծրագրային պահանջներին հարմարվելու տեսանկյունից, տեղավորվում են հատուկ նրանց համար նախատեսված ուսումնական խմբակներում:

4 - րդ և 3 - րդ դասարաններ՝ կողմնորոշման փուլ.

Սովորողներն ուսումնասիրում են երկրորդ «կենդանի» օտար լեզու և համատեղ կարող են ընտրել լատիներենի, հունարենի կամ մեկ այլ լեզվի դասընթաց:

Երրորդ դասարանն ավարտելուց հետո աշակերտները հանձնում են քննություն՝ քոլեջի ավարտական վկայական ստանալու նպատակով, որը նախկինում կոչվում էր *BEPC* փաստաթուղթ:

Հետագա ուսուցման այս կամ այն ծրագիրն ընտրելիս՝ ամենևին կարևոր և պարտադիր չէ քոլեջի ավարտական վկայականի առկայությունը, քանի որ այդ վկայականն ավելի շատ կատարում է կրթական որոշակի նպատակի հասնելու վավերագրի դեր, իսկ աշակերտները հնարավորություն են ստանում իրենց կրթությունը շարունակել ուսուցման և մասնագիտական կրթության «կարճաժամկետ» կամ «երկարաժամկետ» ծրագրով:

Թե որ ծրագրով կշարունակի աշակերտն իր հետագա ուսումնառությունը, որոշվում է դասարանի խորհրդի կայացրած կարծիքի հիման վրա, որը ձևակերպվում է համադասարանցիների և սովորողի ընտանիքի անդամների հետ անցկացրած խորհրդակցությունների արդյունքներով: Ի դեպ, ամեն դեպքի համար վերապահված է աշակերտի կամ նրա ծնողների կողմից բողոքարկելու իրավունք:

Վերջին տարիներին մի շարք քոլեջներում ստեղծվում են առողջական կամ վարքի շեղվածությամբ երեխաների խմբակային ուսուցման առանձնացված դասարաններ, որտեղ դասավանդող մանկավարժները պետք է ունենան հատուկ պատրաստվածություն և «դժվար» երեխաների հետ աշխատելու մանկավարժական փորձ: Այդպիսի դասարաններն անվանվում են *SEGPA*.

Լիցեյները (lycee) կամ ճեմարանները հանդիսանում են միջնակարգ կրթության եզրափակիչ փուլը՝ անցողիկ դիրք զբաղեցնելով միջնակարգ և բարձրագույն կրթահամակարգերի միջև: Ֆրանսիական լիցեյները լինում են *ընդհանուր կրթության* (ավարտական փուլում շնորհվում է բակալավրի կոչում) և *մասնա·իտական կրթության* (ավարտական փուլում շնորհվում է բակալավրի կոչում և մասնագիտական որակավորում): Քոլեջների մի շարք շրջանավարտներ, ովքեր նպատակամղված են շուտափույթ ձեռք բերել որևէ մասնագիտություն, նախընտրում են *մասնա·իտական լիցեյները* կամ *վարպետային ուսուցման կենտրոնները* ***(CFA),*** որտեղ ստանում են ընտրած մասնագիտության կամ մասնագիտացման համապատասխան գիտելիքներ և հմտություններ: Շրջանավարտների ավելի ծանրակշիռ հատվածը նախընտրում է ուսումը շարունակել բուհում, հետևաբար, ընդունվում է *ընդհանուր* կամ *տեխնոլո·իական ուղղվածության լիցեյ,* որտեղ երեք տարվա ուսումնառության արդյունքներով հանձնում է բակալավրի կոչմանը հավակնելու քննություն:

Ի դեպ նկատենք, որ մասնավոր դպրոցները նախընտրում են մեկ կառույցի իրավասության ներքո իրականացնել և' տարրական, և' քոլեջային, և' լիցեյական համատեղ ուսումնառություն:

Ֆրանսիայի ավելի քան 60 միլիոնանոց ազգաբնակչության 1/4 -ից ավելին կամ շուրջ 15 մլն. մարդ ներգրավված է հանրակրթական ոլորտի սովորողների շարքում, ովքեր կրթվում և ուսումնառություն են ստանում համաձայն մեկ միասնական ազգային կրթական համակարգի, պետական ծրագրերի ու չափորոշիչների՝ երկրի ողջ տարածքում գործող 7260 դպրոցում և լիցեյում: Դա հնարավոր դարձավ միայն նախորդ դարի 60-70-ական թվականներին, երբ վերացվեց տարրական և միջնակարգ կրթահամակարգերի սահմանաբաժանը: 1975 թ.-ից քոլեջային կրթահամակարգն անցավ միասնական ու կենտրոնացված տիպի կրթակարգին և շրջանավարտներին հնարավորություն տրվեց ընտրել շարունակական կրթության երեք տարբերակներից մեկը՝ ընդհանուր, տեխնիկական կամ մասնագիտական՝ շրջանավարտներին հնարավորություն տալով բակալավրի կոչում ձեռքբերել 18 տարեկանում: Վերջին տասնամյակում էականորեն հստակեցվել են ընդհանուր և տեխնոլոգիական լիցեյների գործառույթները: Առաջինները խորացած են բանասիրության, տնտեսագիտության և բնական գիտություններ բնագավառում, իսկ երկրորդները՝ բժշկագիտության, սոցիոլոգիայի, արդյունաբերական տեխնոլոգիաների, հասարակագիտության ու քաղաքագիտության բնագավառներում:

Մեր օրերում Ֆրանսիայի կրթական համակարգը տարեկան ծախսում է 600 մլրդ. ֆրանկ կամ 70-80 մլրդ. եվրո, որի 2/3-ից ավելին կազմում է մանկավարժների ու դասավանդողների աշխատավարձների, սովորողներին տրվող կրթաթոշակների ու նպաստների միագումար արժեքը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ «ԿԱՐԵԱԺԱՄԿԵՏ» ՓՈՒԼ

Մասնա·իտական լիցեյները (ՀՀ օրինակով՝ արհեստագործական ուսումնարանները) կամ *LEP-երը* երկու տարում սովորողներին նախապատրաստում են մասնագիտական դիպլոմ ստանալու համար: Եթե սովորողը ձեռք է բերում որոշակի տեխնիկական կամ բանվորական մասնագիտություն, ապա նրան շնորհվում է մասնագիտական պատրաստվածության վկայագիր կամ *CAP*, իսկ եթե սովորողը ստանում է սպասարկման ոլորտի մասնագիտություն, հատկապես հյուրանոցային ենթակառուցվածքում, ապա ստանում է *BEP* կարգի վկայագիր:

Ֆրանսիան եվրոպական երկրներից առանձնանում է նրանով, որ այստեղ մասնագիտական միջնակարգ և ընդհանուր միջնակարգ կրթական համակարգերը խիստ տարանջատված են, հետևաբար, ֆրանսիական հասարակության

շրջանում նախնական և միջին մասնագիտական կրթությունը չունի բարձր արժեք: Օրինակ՝ LEP-ը հասարակության մեջ բնութագրվում է վատ ու ստորադաս վարկանիշով, քանի որ համարվում է սոցիալական ոչ բարձր մակարդակի վավերագիր՝ երաշխավորելով բավականաչափ ցածր աշխատավարձ: Դա պայմանավորված է նրանով, որ այս շրջափուլում սովորաբար ուսանում են անչափ ցածր կրթական մակարդակով աշակերտները: Այլ բան է BEP կարգի վկայագիրը, որի հավակնորդների կեսից ավելին հետագայում նախընտրում է «անցումային դասարաններում» ստանալ շարունակական կրթություն՝ նպատակ ունենալով հասնել բակալավրի կամ ***«բակ»***-ի կոչման:

Մեր պատկերացմամբ ընկալվող քոլեջները, որպես միջին մասնագիտական կրթություն և ուսումնառություն իրականացնող ուսումնական հաստատություններ, Ֆրանսիայում չեն գործում, քանի որ «քոլեջ» բառի տակ ընկալվում է միջնակարգ դպրոցի II մակարդակը՝ մեր իրականության մեջ՝ միջին դպրոցը: Մասնագիտական լիցեյներն իրենց բովանդակային կառուցվածքով շատ նման են հայաստանյան նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններին (ուսումնարաններին), որոնցում ուսումնառության 2-3 տարի անցկացնելով, կարելի է ձեռք բերել բանվորական որոշակի մասնագիտություն: Թեև Ֆրանսիայում չկա հստակ սահմանազատում միջին մասնագիտական և բարձրագույն կրթահամակարգերի միջև, այնուամենայնիվ՝ առանց բակալավրի կոչման անհնար է ընդունվել բուհ:

Նկ.2. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ֆրանսիական ուսումնական հաստատությունների հիմնական մասը նախապատվությունը տալիս է համալսարանական ընդունելության նախապատրաստական դասընթացներին:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ «ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ» ՓՈՒԼ

Մասնագիտական լիցեյները երեք տարում սովորողներին նախապատրաստում են բակալավրի կոչման քննության: Առաջին տարում սովորողը ստանում է ընդհանուր գիտելիքներ, երկրորդ տարում դրանք խորացնում է առանց որևէ մասանգիտական կողմնորոշման, իսկ ավարտական տարում անցնում է խորացված մասնագիտական ուսուցման: Առաջին ուսումնական տարվա վերջին սովորողները ֆրանսերենից հանձնում են թեստ, որի գնահատականը հաշվի է առնվում «բակ»-ի շնորհման պարագայում: Սովորաբար, ավարտական տարին անվանում են ***«թերմինալ»:*** Թեև «բակ»-ը չի կարելի նույնացնել դիպլոմի հետ, սակայն միջանկյալ օղակ է բարձրագույն կրթություն ստանալ ցանկացողների համար: Ֆրանսիական լիցեյներում ուսումնական մեկ տարվա վարձավճարը կազմում է ***2 500 - 4 000 եվրո:***

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիայում բարձրագույն կրթություն ստանալու համար պետք է ունենալ «բակ»: Բարձրագույն կրթությունն իրականացվում է կարճաժամկետ և երկարաժամկետ փուլերով, բացառապես բարձրագույն դպրոցներում ***(Grandes ecoles)*** կամ համալսարաններում:

Կարճաժամկետ ուսուցումը տևում է երկու տարի և ավարտողները մեծ հաջողությամբ ու շատ արագ տեղավորվում են աշխատանքի՝ նախապես իրենց կրթությունն իրականացնելով.

- Բարձրագույն տեխնիկական քոլեջներում, որտեղ կարելի է ստանալ բարձրագույն տեխնիկական կրթության դիպլոմ ***BTS (brevet de technicien superieur):***
- Համալսարաններին կից գործող տեխնոլոգիական ինստիտուտներում, որտեղ կարելի է ստանալ համալսարանական ***DUT*** դիպլոմ:
- Մասնագիտացված բժշկական դպրոցներում, որտեղ 2-3 տարի սովորելով կարելի է ստանալ բուժքրոջ, մանկաբարձի կամ բժիշկ-մերսողի որակավորում:

Համալսարաններն իրենց ապագա ուսանողներին ընդունում են առանց նախնական ընտրության, ինչի պատճառով նրանց շարքերում հայտնվում են այնպիսիք, ովքեր չեն կարողացել ընդունվել որևէ մեկ այլ հաստատություն, չնայած որ զուգահեռ գործում է նաև ստվերային հավաքագրում՝ ըստ բակալավրի կոչման համար հանձնած քննությունների արդյունքների:

Բակալավրների կեսից ավելին ընդունվում է համալսարան, սակայն նրանց մոտավորապես 40%-ն առաջին իսկ ուսումնական տարվա ընթացքում ուսումը թողնում է անավարտ՝ պայմանավորված համալսարանական կրթության բարձր պահանջներով:

Համալսարան կարելի է ընդունվել նաև առանց բակալավրի կոչման առկայության՝ հաջողությամբ հանձնած ընդունելության քննության *(ESEU)* արդյունքներով, սակայն դա կատարվում է խիստ սահմանափակ թվաքանակով, այն էլ արհեստավարժ և փորձառու մասնագետների համար՝ բացառության կարգով:

Գործնականում բոլոր համալսարանները պետական են, բացառությամբ ողջ Ֆրանսիայի տարածքում գործող 6 համալսարանի:

Համալսարանական կրթությունն ունի երեք մակարդակ, իսկ բժշկության և դեղագործության ոլորտները հանդիսանում են կրթության առանձնահատուկ ձև՝ իրականացվելով հոսպիտալային տիպի համալսարաններում *(CEU):*

***Առաջին մակարդակ:** Երկու տարվա ընթացքում ուսանողները նախապատրաստվում են ընդհանուր համալսարանական կրթության դիպլոմ *(DEUG)* ստանալուն, որն աշխատաշուկայում որոշակի գործնական արժեք չի ներկայացնում:

***Երկրորդ մակարդակ:** Ուսման տևողությունը երկու տարի է: Առաջին տարում, DEUG–ից հետո, ուսանողները նախապատրաստվում են վկայագրման *(licence)*, իսկ երկրոդ տարում՝ մասնագիտական որակավորման *(maitrise):*

2005 թ.-ից հնարավորություն է տրվում ստանալ խորացված մասնագիտական տեխնիկական կրթություն *(maitrises des sciences et techniques)* և ձեռքբերել մագիստրոսի կոչում *(les magisteres)*՝ ուսանելով երեք տարի:

***Երրորդ մակարդակ:** Այս մակարդակն ունի երկու ուղղվածություն.

- ✓ Հատուկ մասնագիտական բարձրագույն կրթության դիպլոմի ***(DESS)*** շնորհում, որի համար նախատեսվող նախապատրաստական ուսումնառությունը տևում է 1 տարի, անմիջապես հաջորդում է խորացված մասնագիտական տեխնիկական կրթությանը ***(maitrises)***՝ ընդգրկելով նաև ուսումնական և գործնական պրակտիկաների ժամանակահատվածը:
- ✓ Խորացված ուսումնառության դիպլոմի ***(DEA)*** շնորհում՝ նախատեսված ապագա հետազոտական աշխատանքներ կատարողների համար: Այն տևում է մեկ տարի, որին հաջորդող նվազագույնը երկու տարվա ընթացքում նախապատրաստվում է գիտական թեզ:
- ✓ Բժշկական կրթությունը տևում է 2-10 տարի: Առաջին ուսումնական տարվա ավարտին ուսանողները հանձնում են բավականաչափ բարդ քննություն, որի հաջող արդյունքից է կախված ուսուցումը հետագայում շարունակելու իրավունքը:

Ուսուցման վեցերորդ, ավարտական տարին լրանալուց հետո, ուսանողները մասնակցում են ինտերնատուրայի ընդունելության մրցույթին, որտեղ ուսուցումը տևում է երկու տարի: Ավարտողներին շնորհվում է «Ընդհանուր բժշկության» դիպլոմ: Ֆրանսիայի բուհերում այսօր սովորում է 2 մլն. ուսանող, որից 150 հազարը՝ օտարերկրացի: Ֆրանսիական բուհերում ուսումնական մեկ տարվա վարձավճարը կազմում է ***8 500 - 10 000 եվրո***:

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մեծահասակների կրթությունը ժամանակակից աշխարհում ընթացող միջազգային համագործակցության առանցքային հիմնախնդիրներից է: Այդ համագործակցությունն իրականացվում է միջպետական և միջխորհրդարանական մակարդակներում, ոչ կառավարական կազմակերպությունների տարածաշրջանային համագործակցության շրջանակներում կամ ազգային կենտրոնների միջազգայնորեն համաձայնեցված սկզբունքների համատեքստում: Այնուամենայնիվ, մեծահասակների կրթության ոլորտի այսօրվա առաջամարտիկների շարքում են *ՅՈՒՆԵՍԿՕ* -ն, մասնավորապես, *Համբուրգ·ի Կրթության Ինստիտուտը*, մեծահասակների կրթության *Եվրոպական Ֆրասենյակը*, մեծահասակների կրության *Եվրոպական Ասոցիացիան* և այլն, որոնց աշխատանքներին ակտիվորեն մասնակցում է նաև Ֆրանսիան: Մեծահասակների կրթության հանդեպ ցուցաբերվող նմանօրինակ ուշադրությունը պատճառաբանվում է այն հանգամանքով, որ առանց դրա լուծման հայեցակարգային մոտեցումների գրեթե անհանր է պատկերացնել մարդու և հասարակության զարգացման ներդաշնակությունը: Այս ոլորտում կատարված ուսումնասիրություններն ու ձեռքբերումները դեռևս հասանելի չեն աշխարհի երկրներից շատերին: Ֆրանսիայի տարածքում արդեն մեկ տասնամակ շարունակ գործում և տարեցտարի վերանայվում ու թարմացվում է մեծահասակների կրթության պետական ծրագիրը, որը հայտնի է *ՖՐԵՏԱ* անվամբ *(Groupements d'etablissements publics locaux d'enseignement):* Վերջինիս հիմքերը դրվեցին դեռևս նախորդ դարի 90-ական թվականների սկզբին: Այդ տարիներին ընդունված մի շարք օրենքներ հնարավորություն տվեցին նկատելիորեն մեծացնել կրթության մատչելիությունը ոչ միայն երիտասարդության, այլև ամբողջ ազգաբնակչության համար: Այսօր արդեն 18 և ավելի բարձր տարիք ունեցողների շրջանում ճեմարանական կրթություն ունեցողները կազմում են 62%, այնինչ, ընդամենը 20-25 տարի առաջ, այդ ցուցանիշը կազմում էր մոտավորապես 24%: Չմոռանանաք նաև այն հանգամանքը, որ նույն ժամանակահատվածում բուհերում սովորողների թվաքանակն ավելացել է 7 անգամ:

Նմանատիպ աճը մեծամասամբ պայմանավորված է որակյալ կրթության նկատմամբ հասարակության պահանջվածությամբ, թեև ոչ պակաս դերակատարում են ունեցել ժողովրդագրական գործընթացները, հատկապես, բնակչության ցածր ծնելիությունը, կնոջ զբաղվածությունը և այլն: Ժողովրդագրական այսօրվա հիմնահարցերի համատեքստում կրթությունն այնուամենայնիվ հայտնվել է շահեկան վիճակում, քանի որ տարրական դպրոցների մեկ դասա-

ռանի միջին աշակերտական համակազմը հասել է 26 սովորողի, այն դեպքում, երբ 1960 թ.-ին եղել է 40-42 սովորող, իսկ 1970 թ.-ին՝ 30-33 սովորող: Այսպիսով, մեծանում է յուրաքանչյուր 1000-ական աշակերտին բաժին ընկնող ուսուցիչների և դասավանդողների թվաքանակը, ինչն էական նախապայման է կրթության որակի բարձրացման համար: Կրթական բարեփոխումների շրջանակում մշակվում և ներդրվում են նախագծեր, որոնց նպատակն է պայքարել «երկտարեցիության» երևույթի դեմ: Այս առումով բավականաչափ արդյունավետ են ընթացիկ, կիսամյակային և ամփոփիչ թեստավորման ու հարցազրույցների անցկացման պետական չափորոշիչները և դրանց հիման վրա ստեղծված ուսումնական ծրագրերն ու դասարանից-դասարան փոխադրման մեխանիզմները, որոնք հաստատվել են հասարակական լայն քննարկումների արդյունքով: Երկտարեցիությունը կանխարգելելու նպատակով՝ սովորողին առաջարկվում է հաջորդ դասարան փոխադրվելու մասին տեղեկանքի տրամադրում՝ պայմանով, որ նա կփոխի իր ուսումնական հաստատությունը կամ մնալով նույն հաստատությունում, կփոխի մասնագիտական կողմնորոշումը, հակառակ դեպքում, եթե սովորողը հաստատակամ է ընտրած մասնագիտության հարցում, ապա պարտավոր է երկրորդ տարին անընդմեջ կրկնել թերի յուրացրած դասընթացը:

Տարբեր միջազգային գիտաժողովներում հնչած համընդհանուր կարծիքն այն է, որ եվրոպական միասնական կրթական տարածքում մեծահասակների և շարունակական կրթության բնագավառներում վերջին տասը տարում առավելագույն հաջողություններն արձանագրվել են հենց Ֆրանսիայում: 1999 թ.-ի բոլոնյան սկզբունքները հույս ներշնչեցին, որ ֆրանսիական կրթահամակարգի ձեռքբերումները կարճ ժամանակահատվածում կարող են վերածվել համաեվրոպական արժեքի:

Մեծահասակների կրթության տեսական հիմքերը թեև մշակվել են 1993-1996 թթ., սակայն մեթոդաբանական հիմնադրույթները և օրենսդրական փաթեթները ներդրվել են 1996-2000 թթ., իսկ ծրագրային նախագծերը վավերացվել են 2001-2004 թթ.: Այսօր արդեն կարելի է ասել, որ.

1.հստակեցվել են մեծահասակների կրթության զարգացման հիմնական միտումները,

2.հաստատվել են մեծահասակների կրթության կառուցվածքային բնութագրիչները,

3.մշակվել են շարունակական կրթության կազմակերպման մեթոդաբանական հիմքերը,

4.համակարգվել են մեծահասակների կրթության բովանդակային ծրագրերն ու որակավորումների ազգային շրջանակը,

5.բացահայտվել ու խմբագրվել են մեծահասակների կրթության համակարգում անհատական մոտեցումների դրսևորման գործառույթները,

6.ընդհանրացվել են անհատական ուսուցման և խորհրդատվության սկզբունքները,

7.սահմանվել են մասնագիտական որակավորումների մակարդակներն ու դրանցից յուրաքանչյուրին համապատասխանող ավարտական փաստաթղթերը և աշխատանքի տեղավորման հնարավորությունների համակարգը:

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիայի կրթական համակարգում *DESS* դիպլոմի համար ուսումնառությունը հավասարազոր է բարձրագույն կրթության վերջին՝ երրորդ շրջափուլին, որը կարելի է համեմատել ասպիրանտական կրթության և թեկնածուական թեզի պաշտպանության հետ: *DESS* - ի հավակնորդների շրջանակը չի սահմանափակվում միայն բուհերի շրջանավարտներով, քանի որ տարբեր ընկերություններ իրենց այն աշխատակիցներին, ովքեր նպատակ ունեն մասնագիտական որակավորման բարձրացման, գործուղում են համալսարաններ կամ բարձրագույն դպրոցներ՝ համաձայն երկկողմ պայմանագրի, ըստ որի շահագրգիռ կազմակերպությունը (ընկերությունը, ձեռնարկությունը և այլն) հոգում է ուսումնառության և գործնական ստաժավորման ծախսերը, որը մեկ տարվա կտրվածքով կազմում է 3500 եվրո:

DESS դիպլոմի համար ընդունելությունն իրականացվում է թեստ – հարցազրույցով՝ մեկ տեղի համար 4-5 հավակնորդ մրցակցության պայմաններում: Ընդունելության կարևոր նախապայմաններից են որևէ մասնագիտության գծով բարձրագույն կրթության՝ *Maitrise* դիպլոմի առկայությունը և կառավարչական փորձառությունը, իսկ օտարերկրացիների համար՝ լրացուցիչ պահանջվում է ֆրանսերենի վարժ իմացություն, որն ամրագրվում է հատուկ այդ նպատակի համար նախատեսված ու կազմակերպվող *DELF* քննության արդյունքով: Եթե հաջողվում է հաղթահարել նախնական ընտրափուլը՝ հայցվորը կամ ասպիրանտը հայտագրում է իր նախընտրած մասնագիտությունը: Թեև *DESS* մակարդակի մասնագիտությունները մի քանի հարյուրն են, այնուամենայնիվ դրանք խմբավորված են ըստ ոլորտների. ձեռնարկութիւնների ու անձնակազմի կառավարում, միջազգային շուկայաբանություն, դիզայնի և որակի ապահո-

վում, միջին ու փոքր ձեռնարկությունների ղեկավարում, ռազմավարական ծրագրերի նախագծում և այլն: *DESS* ծրագրով ուսումնառության կառուցվածքում տեսական և գործնական պարապմունքների հարաբերակցությունը 2:3 –ի է, ինչն էապես բարձրացնում է դասընթացների ունկնդիրների կիրառական ու գործնական հմտությունների մակարդակը՝ յուրատեսակ պատասխան քայլի դրսևորում հանդիսանալով, երբ շրջանավարտները հետագայում իրենց նպաստն են բերում «հարազատ» ձեռնարկությունների կամ հովանավորների զարգացմանն ու բարգավաճմանը:

DESS հետբուհական կրթության *(formation continue)* հիմնական նպատակն է՝ աշխատաշուկան ապահովել տնտեսության և կառավարման ոլորտի բարձրակարգ մասնագետներով: Կրթության այս մակարդակի շրջանակում սովորողն ինքն է ընտրում սեփական ստաժավորման ուղղվածությունը, ժամանակացույցն ու նախագիծը՝ համատեղ նախաձեռնելով որևէ ձեռնարկատիրական գործունեություն, որը նախապես համաձայնեցվում է տարածաշրջանային գործատուների խորհրդի հետ: *DESS* ծրագրի հաջող իրականացման համար ամեն տարի համալսարանները հրապարակում են ստաժավորման սեփական ծառայությունների ցանկն ու ժամանակացույցը, աշխատատեղերի տոնավաճառների անցկացման օրացուցային ժամկետները, ինքնակենսագրականների *(CV)* ձևակերպման չափանիշներում տեղ գտած փոփոխությունները, որոնք փակցվում են գովազդային ցուցախցիկներում կամ պարբերաբար զետեղվում գովազդային մամուլում *(Figaro GEU, Les Echos* և այլն): Առաջին հայացքից պարզ թվացող մեխանիզմը բոլորովին չի ենթադրում, որ *DESS* դիպլոմի ձեռքբերումը նույնքան պարզ ու հասարակ գործընթաց է: Ամենևին՝ ոչ', քանի որ դա ծանրաբեռնված և լարված աշխատանք է: Ֆրանսիացիների համոզմամբ, հասարակական կյանքում ամուր հիմքեր ունենալու համար պետք է իմանալ ռազմավարական պլանավորման, հաշվառման ու վերահսկողության հիմունքները, տրամաբանական վերլուծության սկզբունքները, արտադրության կառավարման գործառույթները, շուկայի զարգացման միտումները, սպառման քաղաքականության մարտահրավերները, անձնակազմի ղեկավարման հոգեբանասոցիոլոգիական հիմնադրույթները, ֆինանսական և առևտրային օրենսդրական ակտերի կիրառման շրջանակներն ու սահմանափակումները:

DESS դիպլոմի համար կրթական ծրագիրն առավելապես իրականացվում է կառավարման ինստիտուտներում՝ բիզնես-դպրոցների ֆրանսիական տարբերակով կրթօջախներում, որպիսիք ներկայումս Ֆրանսիայում 27-ն են և

հավասարաչափ բաշխված են ըստ վարչատարածքային միավորների՝ դեպարտամենտների:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՋՆԵԿԸ

Թերևս այսպես կարելի է բնութագրել դեռևս 1215 թ.-ին մի քանի եկեղեցական դպրոցների միավորմամբ Փարիզում հիմնադրված ֆրանսիական ամենահին համալարանը, որն ի սկզբանե ունեցել է 4 ֆակուլտետ՝ ազատ արվեստների, բարոյագիտության և իրավունքի, բժշկագիտության ու կրոնագիտության: 1257 թ.-ին աստվածաբան Ռոբեր դե Սորբոնը Փարիզում հիմնադրեց աստվածաբանական քոլեջ՝ նախատեսված աղքատ ընտանիքների երեխաների համար, որն առաջին տարում հավաքագրել էր ընդամենը 16 սովորող:

Նկ.3.Սորբոնի համալսարանը: Հյուսիսային մուտքը: Կենտրոնական գրադարանը:

1554 թ.-ին քոլեջը ստացավ Սորբոնի անունը և աստիճանաբար միաձուլվեց Փարիզի համալսարանին, որտեղ ուսումնառությունը տևում էր 10 տարի: 17-րդ դարից Փարիզի հնագույն կրթօջախն անվանակոչվեց Սորբոնի համալսարան: Ներկայումս Սորբոնի համալսարանը վերածվել է խոշոր գիտակրթական կենտրոնի, որի կազմում ընդգրկված է 4 համալսարան՝ ունենալով 74 000 ուսանող և 1900 դասախոս՝ 1300 գիտության դոկտորով: Այսօրվա բոլոնյան գործընթացների մեկնարկը պայմանավորված է 1997-98 թթ. Սորբոնում սկիզբ առած գիտաժողովների ու սեմինարների շարքով, երբ Ֆրանսիան հանդես եկավ բարձրագույն կրթության ոլորտում համաեվրոպական տարածքի ձևավորման առաջարկով:

Նկ.4.Բորդոյի համալսարանը: Լիոնի համալսարանը: Թուլուզի համալսարանը:

Համալսարանական և ոչ համալսարանական կրթություն		Հետբուհական կամ այլընտրանքային շարունակական ուսումնառություն	Տարիքը	
			21 20 19 18	
Ընդհանուր և տեխնոլոգիական լիցեյ	Մասնագիտական լիցեյ	ԼԻՑԵՅ	17 16 15	ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
Կողմնորոշման փուլ		ՔՈԼԵՋ	14	
Հիմնական փուլ			13	
Հարմարման փուլ			12 11	
Համախմբման փուլ		ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ	10 9	
Հիմնական ուսուցման (տառաճանաչության և թվաճանաչության) փուլ			8 7 6	
Հիմնական (խաղային և հաղորդակցության) փուլ		ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ	5	
Նախապատրաստական փուլ			4 3 2	

Նկ.5.Ֆրանսիայի կրթական համակարգի գծապատկերը:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գերմանիան (տարածքը՝ *357 000 քառ. կմ*, բնակչության թվաքանակը՝ *83 մլն. մարդ*, ուրբանիզացման մակարդակը՝ *88%*) իր հաստատուն տեղն է գրավում կրթական համակարգով աշխարհի առաջատար պետությունների շարքում: 2008 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ Գերմանիայի ողջ տարածքում գործում էր մասնագիտական կրթության և ուսուցման (կամ ՄԿՈՒ իրականացնող) շուրջ *5000* ուսումնական հաստատություն՝ խմբավորված ըստ տնտեսության տարբեր ոլորտների (արտադրական, ոչ արտադրական) և առաջատար ու գերակա ճյուղերի, որոնց աշխատանքները համակարգում է ***Մասնա·իտական կրթության և ուսուցման դաշնային (ֆեդերալ) ինստիտուտի (BIBB) ¶լխավոր Խորհուրդը:***

Գերմանիայի կրթության մասին հիմնական օրենքը յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն զարգացնել սեփական անհատականությունը, ազատ ընտրություն կատարել դպրոցի, շարունակական ուսումնառության, մասնագիտական կողմնորոշման, նախասիրությունների և հետաքրքրասիրությունների բավարարման ու նմանատիպ այլ հարցերի շրջանակում: Կրթական քաղաքականության նպատակն է՝ յուրաքանչյուր քաղաքացու տրամադրել առավելագույն պետական օժանդակություն՝ նպաստելով նրանց կրթության և ուսուցման որակի ապահովմանն ու զարգացմանը: Գերմանիայի ցանկացած քաղաքացի հնարավորություն ունի ողջ կյանքի ընթացքում ձեռքբերել անվճար ***ընդհանուր, նախնական*** ու ***միջին մասնա·իտական*** և ***բարձրա·ույն*** որակյալ կրթություն: Հանդիսանալով աշխարհի հետինդուստրիալ զարգացած պետություններից մեկը, Գերմանիայի կառավարությունը շահագրգռված է ունենալ բարձր որակավորմամբ ու բազմագործառութային

մասնագետների հզոր բանակ, հետևաբար, ամեն տարի հսկայական միջոցներ են տրամադրվում ազգային կրթահամակարգի և գիտության զարգացմանը:

Գերմանիայում ուսուցումն անվճար է ինչպես սեփական քաղաքացիների, այնպես էլ օտարերկրացիների համար: Կրթությունը և ուսուցումն իրականացվում են գերազանցապես պետական ուսումնական հաստատություններում, թեև կան բավականաչափ ոչ պետական (մասնավոր) կրթօջախներ, որոնց հիմնական մասը ծառայում է կրոնական կամ ազգային փոքրամասնությունների համայնքային կարիքներին: Ի դեպ, վերջիններս մատուցում են նաև վճարովի ծառայություններ, սակայն դրանց գնային քաղաքականությունը կարգավորվում է օրենքով սահմանված կարգով :

Գերմանիայի կրթական համակարգի հիմնական պատասխանատուներն են ***Դաշնային Հողերի Կրթության ու Մշակույթի Նախարարների Մշտական Խորհրդակցությունը (Կոնֆերենցիան)*** և ***Գերմանիայի Ուսումնական Հաստատությունների Ռեկտորների Խորհուրդը:*** Դաշնային հողերի սահմաններում կրթական քաղաքականությունն իրականացվում է ճյուղային նախարարությունների համատեղված գործառույթներով՝ ըստ տվյալ վարչատարածքային միավորի կրթության մասին օրենքի, որն առաջնորդվում է ***Կրթության մասին Դաշնային օրենքի*** հիմնադրույթներով:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Նախ արձանագրենք, որ նախադպրոցական հաստատությունների ցանցը Գերմանիայում առանձնապես զարգացած չէ, իսկ եղած մանկապարտեզների հիմնական մասը ոչ պետական է և գտնվում է մասնավոր հատվածի ձեռքում: Այսօրինակ հաստատություններ են հաճախում 3-5 տարեկան երեխաները:

Պարտադիր հանրակրթությունը (կամ ***դպրոցական կրթությունը)*** Գերմանիայում սկսվում է 6 տարեկան հասակից՝ բաժանվելով մի քանի փուլի և շարունակվելով 13 տարի: Հետագայում շրջանավարտները, եթե հաջողությամբ հանձնում են ավարտական քննություններն ու ձեռքբերում հասունության վկայական (ատեստատ - ***Abitur***), հնարավորություն են ստանում ուսումը շարունակել բուհերում: Գերմանիայում յուրաքանչյուր դպրոց ենթարկվում է իր դաշնային հողի կառավարությանը, որն էլ սահմանում և հաստատում է հանրակրթական ուսումնական ծրագրերը, ուսումնառության կանոնակարգն ու տևողությունը, այսինքն՝ տարբեր դաշնային հողերում գործում են ընդունելության,

ուսումնառության բովանդակության և կառուցվածքի տեղային առանձնահատկություններ: Հանրակրթության համակարգը երկաստիճան է.

1. Տարրական դպրոցներում *(Grundschule)* իրականացվող հանրակրթություն *(Primastufe).*
2. Միջնակարգ ուսումնական հաստատություններում իրականացվող հանրակրթություն (*Sekundastufe).*

ՏԱՐՐԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գերմանիայի *տարրական դպրոցներում* ուսումը սկսվում է *6* տարեկանից և տևում *4-6* տարի՝ կախված տվյալ դաշնային հողի սահմանադրությունից: Առաջին երկու դասարանում բացակայում է առարկայական դասավանդման կառուցվածքը, այսինքն՝ համալիր կարգով, որպես մեկ միասնական, ինտեգրված ուսումնադաստիարակչական դասընթաց, երեխաները ձեռք են բերում տարրական և առանցքային գիտելիքներ մաթեմատիկայից, գերմաներենից, հայրենագիտությունից, երաժշտությունից ու կրոնի պատմությունից:

Ըստ սահմանադրության, թույլատրվում է կրթություն ստանալ ոչ պետական (մասնավոր) տարրական և միջնակարգ դպրոցներում, որոնցում կրթվում է Գերմանիայի դպրոցահասակ տարիքի երեխաների մոտավորապես 8%-ը, չնայած այն հանգամանքին, որ դրանց հիմնական մասն ունի կրոնական ուղղվածություն: Մասնավոր դպրոցներն ուսումնական առարկաների և ծրագրերի ընտրության հարցերում ավելի ազատ են, հետևաբար, կարողանում են իրականացնել տարաբնույթ փորձարարական նախաձեռնություններ, դասավանդման այլընտրանքային մեթոդներ ու միջոցներ: Նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության տարածքում (հիշենք, որ ԳԴՀ-ի և ԳՖՀ –ի վերամիավորումը տեղի է ունեցել 1989 թ.-ի աշնանը) մինչ օրս էլ մեծ հեղինակություն են

վայելում ***ժողովրդական դպրոցները***՝ մեր պատկերացմամբ, միջնակարգ ութամյա հանրակրթական դպրոցները:

ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Միջնակարգ հանրակրթությունը ներկայացնում է երկաստիճան կրթահամակարգ: ***Բուն միջնակար· դպրոցներում*** ուսումնառություն են ստանում ***4-6*** տարվա ընթացքում՝ ***10-12-ից մինչև 16*** տարեկանները, իսկ ***միջնակար· ճյուղային դպրոցներում 3-4*** տարվա ընթացքում ուսումնառություն են ստանում ***16-19*** տարեկան պատանիներն ու աղջիկները: Միջնակարգ կրթության լրիվ դասընթացը տևում է 13 տարի և սովորողները, բացի հիմնարար առարկաներից, իրավունք ունեն ընտրել լրացուցիչ դասընթացներ: Գերմանիայի միջնակարգ դպրոցները լինում են հինգ տեսակի. ***·իմնազիա (վարժարան), ծխական (իրական), հիմնական, մասնա·իտական*** կամ ***համալիր*** և ***ընդհանուր*** կամ ***միացյալ:***

Միջնակարգ հանրակրթության առաջին աստիճանում (մակարդակում) ուսուցիչները բացահայտում են արդեն իսկ տարրական դպրոցն ավարտած սովորողների բնատուր տաղանդը և ունակությունները, որոնց ամփոփիչ արդյունքների հիման վրա յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է անհատական բնութագիր ու տրվում շարունակական կրթության հետագա ընթացքի համապատասխան ուղեգիր, որում նշվում է տվյալ աշակերտի համար առավել նախընտրելի և նպատակահարմար միջնակարգ դպրոցի տեսակը: Այն աշակերտներն, ովքեր ընդունվում են գիմնազիա կամ համալիր (մասնագիտական) դպրոց, հանդիսանում են միջնակարգ հանրակրթության երկրորդ աստիճանի (մակարդակի) սովորողներ: Իրական (ծխական) և հիմնական դպրոցներում 2-3 տարի սովորողները տեղափոխվում են ***մասնա·իտական ուսումնարաններ,*** որոնցում ուսումնառելով ևս 2-3 տարի՝ ձեռք են բերում միջնակարգ մասնագիտական կրթություն:

Ըստ վերջին 5-6 տարվա վիճակագրության, Գերմանիայում բնակվող դպրոցահասակների 40%-ը նախընտրում է իրական դպրոցը, իսկ 25%-ը՝ հիմնական դպրոցը: Երկու դեպքում էլ աշակերտները գտնվում են խիստ շահեկան վիճակում, քանի որ նրանց համար երաշխավորվում է որակյալ մասնագիտական կրթություն, հետևաբար, վաղ տարիքում կարիերայի կանխորոշում:

1. Վերոնշյալ միջնակարգ դպրոցներից առավել բարձր վարկանիշ ունեն ***·իմնազիաները (gymnasium),*** որոնց ավարտական դիպլոմները հնարավորու-

թյուն են տալիս առանց քննությունների ընդունվել բուհերի հումանիտար հոսքի ֆակուլտետներ, քանի որ գիմնազիաների ճնշող մեծամասնությունը մասնագիտացած է հումանիտար կրթության ոլորտում: Չնայած այսօրինակ առավելությանը, գիմնազիան (վարժարանը) նախընտրում է դպրոցահասակների 10%-ը:

2. *Ծխական* կամ *իրական դպրոցները (realschule)* ևս հասարակության շրջանում վայելում են մեծ հեղինակություն, սակայն ի տարբերություն գիմնազիաների, ապահովում են մասնագիտական կրթություն սպասարկման ոլորտի, առևտրի ու պետական ծառայության բնագավառների համար: Իրական դպրոցների այն շրջանավարտները, ովքեր ավարտական քննություններից ստանում են բարձր միավորներ, հետագայում հնարավորություն են ձեռքբերում ընդունվել գիմնազիայի բարձր դասարաններ, իսկ դրանք հաջողությամբ ավարտելուց հետո՝ ուսումը շարունակել բուհում:

3. *Հիմնական դպրոցը (hauptschule)* նախատեսված է այն սովորողների համար, ովքեր հակված չեն իրենց ուսումը շարունակել բուհում և մտադիր են ձեռքբերել որևէ բանվորական մասնագիտություն:

4. *Մասնա·իտական* կամ *համալիր դպրոցները (professionlschule)* նախատեսված են այն սովորողների համար, ովքեր չունենալով բարձրագույն կրթություն ստանալու մտադրություն, ջանում են հետագայում մասնագիտանալ որոշակի արհեստի բնագավառում: Այս տեսակի դպրոցը նախընտրում է դպրոցահասակների ընդհանուր թվաքանակի 25%-ը:

5. *Ընդհանուր* կամ *միացյալ դպրոցները* համատեղելով գիմնազիաների և ծխական դպրոցների մի շարք առանձնահատկություններ, շրջանավարտներին հնարավորություն են տալիս միաժամանակ ձեռք բերել և' հումանիտար, և' տեխնիկական կրթություն, իսկ գիմնազիայի ծրագրով քննություն հանձնողները հետագայում իրավունք են ստանում ընդունվել որևէ բուհ:

Գերմանիայի միջնակարգ կրթական համակարգում գործող դպրոցների հինգ տեսակից յուրաքանչյուրում ներկայացված են ցերեկային ուսուցմամբ և գիշերօթիկ կրթօջախներ: Վերջիններիս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ սովորողներն ուսումնական ամբողջ օրը կամ շաբաթն անցկացնում են կրթօջախում: Սովորաբար, 9-րդ դասարանի ցանկացած շրջանավարտ ձեռք է բերում ժողովրդական դպրոցի լրիվ դասընթացը յուրացնելու մասին փաստաթղթային կարգավիճակ, որը սակայն բավարար չէ բուհում ուսումնառությունը շարունակելու համար: 9-րդ դասարանում տարանջատում են ժողովրդական դպրոցի ավարտական և իրական դպրոցի նախաավարտական են-

թախմբեր, երբ իրական դպրոցի համար ավարտական 10-րդ դասարանի շրջանավարտը ստանալով ավարտական վկայական՝ մուտք է գործում վարժարանային մակարդակ: 10-րդ դասարանի առաջին կիսամյակը շատերի համար հանդիսանում է փորձարարական շրջան, քանի որ հստակեցվում է վարժարանային մակարդակի հավակնորդների թվաքանակը, և այն աշակերտներն, ովքեր չեն հաղթահարում փորձաշրջանը՝ դուրս են մղվում վարժարանային կրթությանը հավակնելու մրցապայքարից: Ամեն տարի իրական դպրոցների շրջանավարտների միայն 15-16% -ին է հաջողվում հաղթահարել վարժարանային մակարդակին անցնելու փորձաշրջանը:

Նկ.6. Գերմանիայի հանրակրթական դպրոցներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում յուրաքանչյուր աշակերտի անհատականությանը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴՈՒԱԼ (ԵՐԿԿՈՂՄ) ՀԱՄԱԿԱՐԳԸ

Գերմանիայի մասնագիտական կրթահամակարգի 10-12–րդ դասարաններիի աշակերտների մեծամասնությունը հաճախում է արհեստագործական ուսումնարան կամ տեխնիկական ուղղվածության դպրոց՝ առանց արտադրությունից կտրված հիմունքներով, որն այլ կերպ անվանում են ***դուալ*** կամ ***երկկողմ*** կրթահամակարգ: Համաձայն դուալ համակարգի, ուսումնական հաստատություններին հնարավորություն է տրվում համագործակցել խոշոր, միջին և մանր մասնավոր ձեռնարկությունների հետ, մոտավորապես 400 մասնագիտու-

թյունների *(Ausbildungsberufe)* ուսումնառության բնագավառում: Ձեռնարկություններում պարապմունքներն անցկացվում են շաբաթական 6-8 ժամ տևողությամբ՝ վարպետային ուսուցման կամ աշկերտության սկզբունքով: Գերմանիայի դաշնային կառավարությունն ամեն տարի *28 մլրդ. եվրո* է տրամադրում մասնագիտական կրթության ոլորտի զարգացմանը, որի միացյալ համակարգում ներկայումս ընդգրկված է *1,6 մլն. քոլեջական*: Թեև մասնագիտական կրթության մասին օրենքն ընդունվել է *2005 թ.-ի մարտի 23-ին*, սակայն մինչ այդ էլ Գերմանիայի միջին մասնագիտական կրթահամակարգը զարգացել է առաջանցիկ տեմպերով և համարձակ ու արդարացված բարեփոխումների իրականացման ճանապարհով:

Դուալ համակարգը ենթադրում է, որ սովորողն ուսումնական հաստատությունում նախապես տիրապետում է ընտրած մասնագիտությանն առնչվող տեսական դրույթներին, աշխատանքային հիմնական սկզբունքներին, աշխատանքային պայմանների անվտանգության պահպանման կանոններին, այնուհետև ստացած գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները փորձարկում է գործնական - արտադրական պայմաններում: Ընդհանուր առմամբ, ակադեմիական ժամերի 3/4 մասը սովորողներն անցկացնում են ձեռնարկությունում : Ուսումնառության նման ստորաբաժանումը ոչ թե պարտադրվում, այլ առաջարկվում է կամավորության սկզբունքով իրականացման:

Ուսուցման դուալ համակարգը հնարավորություն է տալիս ցանկացած սովորողի և հնարավոր գործատուի միջև կնքել աշխատանքային պայմանագիր: Համաձայն նմանատիպ պայմանագրի պարտավորությունների, գործատուն սովորողին կցում է իր փորձառու մասնագետներից որևէ մեկին: Խոշոր ձեռնարկություններում ստեղծվում են մասնագիտական կողմնորոշման և նախապատրաստման սեփական կենտրոններ՝ կահավորված բոլոր անհրաժեշտ ուսումնամեթոդական ու նյութատեխնիկական սարքավորումներով և պարագաներով, իսկ փոքր հզորությամբ ձեռնարկություններում նախընտրում են օգտվել արհեստագործական ուսումնարանների կարճաժամկետ ծառայություններից: Դուալ համակարգի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սովորողները հասունության ատեստատից բացի ստանում են գործատու-ձեռնարկության կողմից շնորհվող աշխատանքային պրակտիկայի վկայական: Երկու փաստաթղթերն էլ փոխկապակցված են և գործածական են միայն համատեղ ներկայացման դեպքում: Այդ պահանջը պահպանվում է նաև բուհ ընդունվելու պարագայում: Դուալ համակարգի առավելությունը կայանում է նրանում,

որ հնարավորություն է տալիս նախապես պատրաստել այնքան մասնագետ, որքան որ թելադրում է աշխատաշուկայի պահանջարկը:

Վերջին 20 տարում, երբ արագորեն աճում են ***Վերազ·ային կոնցեռների (ՎԱԿ-երի)*** թվաքանակն ու ընդգրկման ծավալները և բնագավառները, մի շարք մասնագիտությունների գծով (թեթև արդյունաբերության, մետաղաձուլության, քիմիական և շինանյութերի արդյունաբերության) ուսումնական կենտրոնները փակվում են՝ տեղափոխվելով էժան աշխատուժի կուտակման շրջաններ, մասնավորապես, լատինաամերիկյան կամ հարավասիական երկրներ: Ներկայումս մեծ վարկանիշ և պահանջարկ են վայելում շուկայաբանության, շուկայավարության, կառավարման, ծառայությունների, առևտրի ու ձեռներեցության ոլորտի մասնագիտությունները: Դուալ համակարգի խրախուսումը պետությանն ազատում է մի շարք պարտականություններից, քանի որ շրջանավարտների աշխատանքի տեղավորման գործառույթները լուծելի են դառնում գործատուների և մասնագիտական ու արհեստագործական ուսումնարանների համատեղ շահագրգռվածության հաշվին: Բացի վերոնշյալից, դուալ համակարգի պայմաններում սովորողները ստանում են կրթաթոշակ և աշխատավարձ՝ ձեռք բերելով համապարփակ գիտելիքներ բոլորի համար պարտադիր մի քանի առարկաներից. գերմաներեն լեզու և գրականություն, հասարակագիտություն, տնտեսագիտություն, ինֆորմատիկա:

Ընդհանուր ու նախնական մասնագիտական կրթության և ուսուցման փուլում որակավորումների ձեռքբերման համար խիստ կանոնները պայմանավորված են այն իրողությամբ, որ գերմանական աշխատաշուկան գլխավորապես մասնագիտական որակավորումների շուկա է: Անհատները վճարվում են, ըստ իրենց որակավորումների մակարդակի՝ երկկողմանի բանակցային կոլեկտիվ համաձայնագրերի հիման վրա: Գերմանիայում միջնակարգ բարձրագույն մակարդակում կրթական ծրագրերի մասնակցության և իրականացման ցուցանիշն անհամեմատ բարձր է միջազգայինի համեմատությամբ՝ այսպիսով հաստատելով ռազմավարության հարաբերական հաջողությունը: Վերջին քսան տարվա ընթացքում հաստատուն կերպով աճել է բարձրագույն կրթական ուսումնական հաստատություններում որակավորումներով ուսանողների (ընթերականների) ընդունելության համամասնությունը: Բարձրագույն կրթության համար անհրաժեշտ ընդունելության որակավորումներ ձեռք բերելով՝ սովորողները կարող են ընտրություն կատարել մասնագիտական ուսուցման կամ բարձրագույն կրթության միջև, որոնցից երկուսն էլ նախանշում են դեպի գրավիչ կարիերա տանող ճանապարհներ: Կրթության և ուսուցման երկակի համակարգով որակավորումների

բարձր շարժունակությունը կարևոր խթան է այն մարդկանց համար, ովքեր դպրոցն ավարտել են ընդհանուր կրթության ավելի ցածր որակավորումներով և միտված են մասնագիտական որակավորումներ ձեռքբերելուն: Բացի այդ կան ծրագրեր, որոնք օգնում են մասնագիտական որակավորումներ չունեցող մեծահասակներին ձեռք բերել ուշացած մասնագիտական որակավորում՝ ուսումնառության և աշխատանքի զուգակցմամբ, ուսումնական ծրագրերի մոդուլացման ու կրեդիտների կուտակման փաստաթղթերով հիմնավորման միջոցով՝ չհրաժարվելով ամբողջական որակավորում ձեռք բերելու նպատակից: Սրան զուգընթաց պետք է արձանագրել, որ համակարգում բարձրագույն կրթություն կամ մասնագիտական որակավորումներ ունեցող մարդկանց թվի ավելացման միտումը շարունակվում է: Համոզմունք կա, որ բարձրագույն մակարդակի կրթությունն առավել մատչելի կդառնա մասնագիտական որակավորումների և աշխատանքային գործունեության վարկը բարձրացնելու մջջոցով: Որակավորման բարձրացման դասընթացների աջակցության փոփոխված և լրացված կառավարական որոշումները առաջարկում են նաև որակավորման բարձրացման խրախուսական բազմաթիվ միջոցառումներ՝ նախատեսված գալիք տարիների համար:

Գերմանիայի միջին մասնագիտական կրթության ոլորտի առաջատարներից է հյուսիսային հողերում ավելի քան 500 գործատուներից և ձեռնարկություններից կազմված միացյալ ուսումնաարտադրական համալիրը, որի կազմում առանձնանում է, հատկապես, «Նորդմետալի» քոլեջն *(,,Nordmetall,,)* իր ավելի քան 13 000 սովորողով: Ի թիվս այլ վեց քոլեջի, «Նորդմետալը» միավորվել է մեկ ընդհանուր կառույցի մեջ՝ մատուցելով մոդուլային ուսուցում, մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն, մարքեթինգի և մենեջմենթի դասընթացներ, կազմակերպելով թրեյնինգներ, որակավորման ու վերավորակավորման դասապատրաստումներ : «Նորդմետալի» հիմնադիր խորհուրդն իր մեջ ներառում է մետաղածուլական, մետաղամշակման, նավաշինական, ավտոմոբիլաշինական և բարձր տեխնոլոգիաների արտադրական ձեռնարկություններ, որոնք հանդես են գալիս և' որպես պատվիրատու, և' որպես հավասարակողմ սոցիալական գործընկեր՝ սովորողներին տրամադրելով աշխատանքային պայմանագրերի կնքման հնարավորություն: Ըստ նմանատիպ պայմանագրերի, շրջանավարտները պարտավորվում են 3 տարի ժամկետով աշխատել պայմանագրի կողմ հանդիսացող ձեռնարկությունում, հակառակ դեպքում պարտադրված են ետ վերադարձնել ուսումնառության ծախսային մասը կազմող գումարը: Ի դեպ, գերմանական այն ձեռնարկությունները, որոնք

հանդես են գալիս, որպես մասնագիտական կրթության սոցիալական գործընկերներ, իրենց ֆինանսական ծախսերն ու ներդրումները համարում են բավականաչափ արդարացված, քանի որ.

1. ձեռնարկությունները ստանում են պատրաստի որակյալ աշխատուժ.
2. կարողանում են ընտրություն կատարել լավի ու վատի միջև.
3. հսկում են մասնագիտական որակավորումների ձևավորման ընթացքը.
4. ապահովագրում են իրենց՝ մասնագիտական կադրերի հնարավոր արտահոսքից:

Սովորաբար, մասնագիտական կրթության ոլորտում գործածվող ուսումնական ծրագրերն ու դասագրքերը կազմում են քոլեջների դասավանդողները, գիտնականներն ու գործատուները՝ համատեղ սկզբունքով ձևավորված հանձնաժողովների կազմում: Ստեղծված ծրագրերը պարբերաբար ենթարկվում են փորձաքննության:

Նկ.7. Գերմանիայի միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատություններում մեծ տեղ է հատկացվում գործնական դասաժամերին:

Ցկյանս ուսումնառությունը խրախուսելու և գերմանական որակավորումների համակարգը բարեփոխելու նպատակով՝ գերմանական կառավարության կրթական ոլորտին առնչվող վերջին նախաձեռնությունները շեշտը դրել են մի կողմից նախնական ու շարունակական մասնագիտական կրթության և ուսուցման, իսկ մյուս կողմից՝ համալսարանական կրթության միջև սերտ հարաբերությունների զարգացման վրա: Բարեփոխումների փաթեթը միտված է միջնակարգ բարձրագույն (մեր պատկերացմամբ՝ միջին մասնագիտական) կրթության վերջում ձեռք բերած որակավորումներով անհատին բարձրագույն կրթական հաստատություններ ընդունվելուն և զբաղվածության համակարգին անցնելու լայն հնարավորություններ ընձեռելուն: Ուսումնական ծրագրերի հիմնական մասը տևում է մի քանի տարի և նախատեսված է չափահաս սովորողների համար՝ նպաստելով վերջիններիս կողմից ամբողջական որակավորում ձեռքբերելուն: Այնուամենանայնիվ, սովորողների տարիքային տարբեր խմբերի համար նախատեսվում են նաև առավել ինքնուրույնություն և անձնային պատասխանատվություն դրսևորելու մեծ հնարավորություններ:

Միջնակարգ դասական դպրոցի ուսանողներն ունեն իրենց դասընթացների ու քննական առարկաների հետ կապված ընտրության շարժունակ իրավունք՝ ըստ սեփական տարիքի և կրթության մակարդակի: Վերջին տարիներին երկակի համակարգով ուսուցման կառուցվածքը դարձել է պարտադիր և կոչված է բարձրացրել անհատի ներգործությունը՝ որոշելու թե նա ի՞նչ կցանկանար սովորել ու ինչպե՞ս սովորել: Անվիճելի է, որ ամբողջական որակավորման ձեռքբերումը դառնում է, որպես անհատի սովորելու և որակյալ աշխատանք ձեռքբերելու ունակության ապացույց:

Թեև անհատը պետք է ավարտական քննություն հանձնի, այնուամենայնիվ համակարգը չի նախատեսում ամբողջական որակավորում ձևավորելու համար աշխատունակության հմտությունների այնպիսի շրջանակի կուտակում, որը չի համապատասխանում աշխատաշուկայի արդի պահանջներին: Այն նախատեսված է որակավորումների արժեքը պահպանելու և դրանց շարժունակությունը բարձրացնելու համար:

Ցկյանս ուսումնառության խթանումը և լրացուցիչ որակավորումների ներմուծումը զգալի ներուժ են պարունակում, քանի որ մեծ են ակնկալիքները՝ կապված նոր որակավորումների շրջանակների, ոչ պաշտոնապես ձեռք բերված կարողությունների վավերականացման ու կրեդիտների փոխանցման հա-

մակարգի ներմուծման հետ: Այս նախաձեռնությունները նախնական ու շարունակական մասնագիտական կրթության և ուսուցման միջև ավելի սերտ կապերի ստեղծման նոր հիմքեր ու հեռանկարներ կբացեն: Մասնագիտական և շարունակական ուսուցման բնագավառում համեմատաբար բարեհաջող փոխանցման հնարավորություններ կընձեռնվեն այն որակյալ փորձնակների համար, ովքեր հետաքրքրված կլինեն պահանջվող մասնագիտական որակավորումների ձեռք բերմամբ, հատկապես, բարձրագույն որակավորումներ ունեցողների (ընթերականների) համար: Ինտեգրված նախնական մասնագիտական որակավորումներով ուսման բազմաթիվ երկակի դասընթացներից բացի, որակավորման շրջանակների ներմուծումը, որն արդեն իրագործվում է ՏՏ (տեղեկատվական տեխնոլոգիաների) ոլորտում և նախատեսված է մյուս ոլորտների համար, պետք է օգնի, որպեսզի անհատները ձեռք բերեն բարձրագույն կրթահամակարգին համապատասխան որակավորումներ: Շարունակական մասնագիտական կրթության և ուսուցման մատչելիության հարցը հատկապես կարևոր է ֆորմալ մասնագիտական որակավորումներ չունեցողների համար: Այս խմբում ընդգրկվածների համար դասավանդման ճկունությունն ու հմտությունների ձեռք բերման հնարավորությունն այնքանով են կարևոր, որ օժանդակում են նրանց ոչ ֆորմալ ուսումնառության ճանաչմանը: Վերոշարադրյալը վերաբերում է ոչ միայն բավարար սկզբնական հնարավորություններ չունեցող պատանիներին և չափահասներին, այլև կողմնակի ընդունվողներին, ովքեր ի վիճակի են որակավորում ձեռք բերել շարունակական մասնագիտական ուսուցման բնագավառում: Այդ նախաձեռնությունները, որոնք հաստատված են մասնագիտական ուսուցման մի քանի տարի առաջ ընդունված ակտում (23 մարտ, 2005), ուղղված են որակավորումների համակարգը, որպես միասնական ամբողջություն դարձնելուն՝ ուսուցումն ու շարունակական ուսուցումը վերակառուցելուն: Դրան կարելի կլինի հասնել ուսումնառության տարբեր ձևեր ներմուծելու (և ֆորմալ, և ինֆորմալ) ու նախնական մասնագիտական ուսուցումից մինչև շարունակական ուսուցում և/կամ բարձրագույն կրթություն ուսումնառության ճկուն ուղղություններ մշակելու միջոցով: Կնշանակի, սովորողները կներգրավվեն ընտրանքային պայմաններում, որոնք առավել անձնային պատասխանատվություն և ինքնուրույնություն դրսևորելու հնարավորություն կտան որակավորումներ ձեռք բերելիս, կարողություններ զարգացնելիս ու հմտություններ կուտակելիս:

Ներկայումս, ֆորմալ որակավորումների համակարգից դուրս, որոշ նախաձեռնություններ են ձեռնարկվել ցկյանս ուսումնառության խթանման հա-

մար գործիքների և ենթակառուցվածքների մշակման ուղղությամբ: **«Ուսումնառության Տարածաշրջանային Աջակցություն Ցանցերի համար»** դաշնային ծրագիրը ներգրավում է համապատասխան շահագրգիռ կողմերը և հաստատությունները տեղական, տարածաշրջանային ու ազգային մակարդակով (ինչպես օրինակ՝ շարունակական մասնագիտական ուսուցման հաստատություններ, դպրոցներ, համալսարաններ, ձեռնարկություններ, ընկերություններ, սոցիալական գործընկերներ, տեղական համայնքներ և զբաղվածության ծառայություն): Այժմ ցկյանս ուսումնառության համար մշակվում են նոր ենթակառուցվածքներ: 2001- 2009 թթ. ընկած ժամանակաշրջանում օգտագործվել է 118 մլն. եվրո գումար, որից 51 մլն. եվրոն՝ **Եվրոպական Կառուցվածքային Հիմնադրամի (ESF)** հաշվին.

Ուսումնառության Տարածաշրջանների այսօրինակ (ներքևից - վերև) մոտեցումը մեծապես խթանում է որակավորումների համակարգի հետագա զարգացմանն՝ ըստ իրական կարիքների: Ուսումնառության Տարածաշրջանները ձևավորում են շրջանակ՝ նախատեսված ուսուցման նոր դասընթացների վերաբերյալ հաստատությունների կողմից արված առաջարկությունների համատեղ զարգացման համար: Այդպիսիք են արհեստների պալատները, համալսարանները և կիրառական գիտությունների համալսարանները: Բացի այդ, ուսումնառության Տարածաշրջանները փորձարկում են հայեցակարգեր ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչման համար՝ օժանդակելով ձեռնարկությունների կարիքներին, այն է՝ արագ արձագանքելու կարողության զարգացմանը: Կրթական ծրագրման ու հետազոտության խթանման **Bund-Laender** հանձնաժողովի **«Ցկյանս ուսումնառության անձնագիր՝ ինֆորմալ ուսումնառության վավերականացմամբ»** ծրագրի հետ միասին Կրթության և հետազոտության դաշնային նախարարությունը ներկայացրել է լայն կիրառում ունեցող **«Շարունակական կրթության անձնագիր»** փորձնական նախագիծը՝ միասնականացված խորհրդակցական հայեցակարգով: *ProfilPASS-ն* ընդգծում է և' ինֆորմալ և' ոչ ֆորմալ հմտությունների փաստաթղթային հիմնավորման ու ճանաչման կարևորությունը:

Այն կհամադրվի հմտությունների և որակավորումների վավերականացմանն ուղղված այլ համապատասխան փաստաթղթերի հետ ոչ միայն Գերմանիայում, այլև եվրոպական մակարդակում: Ուսումնարտադրական քոլեջների գործունեությանը խթանող կարևոր գործոն են դրանց վերադաս ձեռնարկություններին տրվող արտոնությունների մասին հավաստող տարբեր օրենսդրական ակտերում պարբերաբար կատարվող լրացումները:

Դեռևս 2006 թ.-ին ընդունված **«Ուսումնաարտադրական հաստատություններին տրամադրվող արտոնությունների մասին»** ակտով հաստատվում է, որ այն ձեռնարկությունները, որոնք ունեն իրենց կից գործող քոլեջներ, պարտավոր են դրանց զարգացմանն ու արդիականացմանը հատկացնել իրենց իսկ տարեկան միջին շահույթի դրամական արժեքի 2 - 3% -ը: Դա այնքան էլ փոքր գումար չի կազմում, եթե նկատի ունենանք, որ տարեկան կտրվածքով կարող է տատանվել նվազագույնը մի քանի մլն. եվրոյից մինչև առավելագույնը մի քանի տասնյակ մլն. եվրոյի սահմաններում: Սրան հավելենք, որ Գերմանիայի առաջատար և խոշորագույն քոլեջներում (Համբուրգի նավաշինության և նավավերանորոգման, Քյոլնի էլեկտրատեխնիկական, Շտուտգարտի ավտոհավաքման և ավտովերանորոգման, Մյունխենի տնաշինական և այլն) տարվում է ոչ միայն նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ակտիվ ռազմավարություն, այլև դրանց մշակում ու արտահանում: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը հանդիսանում է ՄԿՈՒ ոլորտում բազմաբովանդակ տեղեկատվական, ֆինանսական և խորհրդատվական օժանդակություններ տրամադրող խոշոր դոնոր երկիր, մասնավորապես մասնակցություն ցուցաբերելով նաև Հայաստանի Հանրապետությունում:

Նկ.8. Գերմանիայի կրթահամակարգի բարեփոխման առաջնահերթություններից է մեծահասակների կրթությունը:

ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գերմանիայի դաշնային կառավարությունը ջանում է ամեն կերպ օժանդակել աշակերտներ ընդունող մասնավոր ընկերություններին, որոնց տրամադրում է լրացուցիչ ֆինանսավորում և էական արտոնություններ: Գործատուներին մի շարք առումներով շահավետ է ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը և սեփական արտադրական հզորությունների օգտագործմամբ՝ երիտասարդ աշխատանքային կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, չնայած այն հանգամանքին, որ ծախսվում են սեփական մջջոցները: Ուսումնական հաստատության շրջանավարտի համար նոր աշխատավայրում սահմանվում է փորձնական շրջան, ինչը հնարավորություն է տալիս ապագա աշխատողին ծանոթանալ աշխատանքային պայմանների առանձնահատկություններին և ստուգել սեփական հնարավորությունների շրջանակը: Միաժամանակ, ձեռնարկություններին ևս հնարավորություն է տրվում համոզվել նորեկ աշխատողի պիտանելիության հարցում: Եթե նորեկի աշխատանքային կարողությունները ու հմտությունները չեն բավարարում գործատուի ներկայացրած պահանջներին, ապա շրջանավարտին գործուղում են լրացուցիչ վերապատրաստման դասընթացների՝ վերջինիս անձնական ֆինանսական միջոցների հաշվին:

Գերմանիայում տիրապետում է այն համոզմունքը, որ ուսուցման և մասնագիտական գործնական պարապմունքների համատեղումը մեծապես բարձրացնում է աշակերտ-աշխատողի շահագրգռվածությունը սեփական գիտելիքների, հմտությունների, կարողությունների ու մասնագիտական ունակությունների շարունակական կատարելագործման հարցում, քանի որ փորձնական շրջանն ավարտելուն պես, նա հայտնվում է գործատուի տեսադաշտում: Աշակերտ-աշխատողի և գործատուի հաջողված համագործակցությունը կարող է հանգեցնել նրան, որ ձեռնարկությունը պայմաններ է ստեղծում, որպեսզի երեկվա աշակերտն ու այսօրվա աշխատողը հնարավորություն ստանա ընդունվել բուհ կամ բարձրացնել մասնագիտական որակավորման մակարդակը:

Թեև Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը հանդիսանում է Եվրոպայի տնտեսական միացյալ համակարգի առաջամարտիկը, նույնիսկ այդպիսի բարեկեցիկ և տնտեսապես կայուն երկրում ոչ ոք չի ցանկանում լինել գործազուրկի կարգավիճակում ու գոյատևել պետական նպաստի հաշվին: Ի դեպ, կցանկանայինք ներկայացնել հանրակրթության ոլորտում շնորհվող վկայականների (հասունության ատեստատների) տարատեսակները.

1. **Hauptschulabschluss** – Տրվում է հիմնական դպրոցի 10-րդ դասարանն ավարտողներին, ինչը հնարավորություն է տալիս ընդունվել որևէ արհեստագործական ուսումնարան:
2. **Fachoberschulreife** – Տրվում է իրական դպրոցի 10-րդ դասարանի շրջանավարտներին, ինչը հնարավորություն է տալիս ընդունվել տեխնիկում կամ հատուկ մասնագիտական ուսումնարան:
3. **Fachhochschulreife** – Տրվում է գիմնազիայի և միացյալ դպրոցի 12-րդ դասարանի շրջանավարտներին, ովքեր տեխնիկումը կամ հատուկ մասնագիտական ուսումնարանն ավարտելուց հետո հնարավորություն են ստանում ընդունվել տեխնիկական ինստիտուտ:
4. **Hochschulreife** – Տրվում է գիմնազիայի և միացյալ դպրացի 13-րդ դասարանի շրջանավարտներին, ովքեր միանգամից հնարավորություն են ստանում ընդունվել համալսարան:

<table>
<tr><td>Դասարաններ</td><td>1</td><td>2</td><td>3</td><td>4</td><td>5</td><td>6</td><td>7</td><td>8</td><td>9</td><td>10</td><td>11</td><td>12</td><td>13</td><td>Հետագա, շարունակական կրթություն</td></tr>
<tr><td rowspan="4">Մանկապարտեզ</td><td colspan="3" rowspan="4">Տարրական դպրոց</td><td colspan="3" rowspan="4">Հիմնական դպրոցի առաջին մակարդակ</td><td colspan="4">Հիմնական դպրոց</td><td colspan="3">ՆՄՈՒ, ՄՄՈՒ</td><td>* * *</td></tr>
<tr><td colspan="4">Իրական դպրոց</td><td colspan="3">Իրական դպրոց</td><td>Բարձրագույն դպրոց</td></tr>
<tr><td colspan="4">Ընդհանուր դպրոց</td><td colspan="3">Ընդհանուր դպրոց</td><td>Համալսարան, Բարձրագույն դպրոց</td></tr>
<tr><td colspan="4">Գիմնազիա</td><td colspan="3">Գիմնազիա</td><td>Համալսարան, Բարձրագույն դպրոց</td></tr>
</table>

Նկ.9. Գերմանիայի կրթական համակարգի կառուցվածքը:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Գերմանիան դեռևս միջնադարից հայտնի է, որպես գիտության և մշակույթի առանձնահատուկ կենտրոն: Հիշենք թեկուզև Շիլլերի, Հումբոլդտի, Կանտի, Հեգելի և այլոց անունները: Առաջին գերմանական համալսարանները հիմնադրվել են 14-րդ դարի վերջին: Դրանք էին *Հեյդելբերգ·ի (1386 թ.)* և *Քյոլնի (1388 թ.)* համալսարանները, որոնցում առ այսօր էլ պահպանվել են տարիներով ձևավորված սո-

վորույթները, սակայն ներկայումս Գերմանիայում հաշվում են 323 համալսարան, որոնք առաջնորդվում են «ակադեմիական ազատության» սկզբունքով, այսինքն՝ բոլոր բուհերն իրենց կառավարման հարցերում ունեն դաշնային կառավարությունից անկախ լիազորություններ, իսկ ուսանողներն էլ ազատ են դասընթացների անվանացանկի, դրանց ժամանակացույցի և տևողության ընտրության հարցերում, քանի որ ամեն ինչ կախված է ուսանողի ինքնավարությունից, անհատական պատասխանատվությունից ու ինքնակրթության մղվածության աստիճանից: Ուսանողը կարող է ունենալ հաճախումների անհատական գրաֆիկ և ուսումնառության անհատական ծրագիր: Գերմանիայի բարձրագույն կրթահամակարգում առանձնացվում են բուհերի հետևյալ տեսակները.

Hochschuie - Համալսարանների այս տեսակն առանձնանում է հումանիտար գիտությունների ուղղվածությամբ կազմակերպվող խորացված ուսումնառությամբ:

Fachhochschuie - Համալսարանների նշված տեսակն առանձնանում է կիրառական գիտությունների խորացված ուսումնառությամբ՝ նմանվելով յուրատեսակ բարձրագույն մասնագիտական դպրոցի, որի կազմում հավասարապես մեծ տեղ է հատկացվում ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքներին: Այսօրինակ համալսարաններում ուսումնական ողջ գործընթացը տևում է 8 կիսամյակ (սեմեստր), և արդյունքում պատրաստվում են ինժեներական գործի, ձեռնարկատիրական կառավարման, դիզայնի ու սոցիալական բնագավառների բարձրակարգ մասնագետներ՝ ներգրավելով մեծ թվով ուսանողներ, ովքեր ցանկություն ունեն կարճ ժամկետում ձեռքբերել բավականաչափ բարձր աշխատավարձ ապահովող մասնագիտություն և աշխատանք: Ըստ վիճակագրական տվյալների, Գերմանիայի ուսանողության 25% -ը նախընտրում է հենց այս տեսակի համալսարանը:

Universitaet - Ներկայացվող տեսակի համալսարաններն ավելի խոշոր են, քան **Hochschuie** -երը և **Fachhochschuie -** երը: Դրանցում դասավանդվող առարկայական դասընթացների ու ֆակուլտետների քանակը կարող է հասնել 400-ի, իսկ ուսանողները զբաղվում են գերազանցապես գիտական գործունեությամբ, կատարում են հիմնարար (ֆունդամենտալ) և կիրառական ուսումնասիրություններ: Նմանատիպ համալսարաններում պատրաստվում են բարձրակարգ բժիշկներ, բնագետներ, իրավաբաններ, տնտեսագետներ, սոցիոլոգներ, գյուղատնտեսներ, տեխնիկական ոլորտի կառավարիչներ և այլն: Միևնույն

ֆակուլտետի շրջանակում առարկայական դասընթացների մեծ ընտրությունը թույլ է տալիս ստանալ համալիր, միասնականացված (ինտեգրված) կրթություն, ինչը հնարավորություն է ընձեռում զբաղվել ոչ միայն գիտահետազոտական աշխատանքով, այլև տեսական հիմնադրույթների մշակմամբ ու զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի նախագծմամբ: Համալսարանական նշված տեսակի կրթությունը շնորհում է տարբեր տեսակի ակադեմիական աստիճաններ և կոչումներ. ավարտական դիպլոմ – *Diplom*, մագիստրոսի աստիճան – *Magister,* գիտության դոկտորի աստիճան- *Doktor,* դոցենտի/պրոֆեսորի կոչում – *Habilitationrecht,* որն իրավունք է տալիս դասավանդել բուհում:

Technische Universitaet - Համալսարանների այս տեսակն առանձնանում է գիտության առանձին ճյուղերի՝ մասնավորապես, քիմիայի, ֆիզիկայի, ինչպես նաև առանձին արտադրական ճյուղերի՝ էլեկտրոնիկայի, էլեկտրատեխնիկայի, մեքենաշինության և նյութաբանության բնագավառների բարձրակարգ մասնագետների պատրաստմամբ:

Բացի համալսարանների նշված տեսակներից, գործում են նաև մանկավարժական, գեղարվեստի, կինոյի ու աստվածաբանության մի շարք բարձրագույն դպրոցներ :

Գերմանիայի կրթական համակարգի ամենավարկանիշային ու հեղինակավոր կրթական հաստատությունը Հեյդելբերգի համալսարանն է, որը ժամանակին հիմնադրվել է ֆրանսիական Սորբոնի համալսարանից փոխառնված տարբերակով: Համալսարանը գտնվում է Մայնի Ֆրանկֆուրտից 60 կմ հեռավորության վրա, Հեյդելբերգ քաղաքում : Դեռևս 19-րդ դարից այն համարվում է եվրոպական կրթական տարածքում իրավաբանական կրթություն և ուսումնառություն իրականացնող առաջատար համալսարանը: Ժամանակին այստեղ դասավանդել են հռչակավոր փիլիսոփաներ Հեգելն ու Յասփերսը, աշխարհահռչակ քիմիկոս Հեմհոլցը, Նոբելյան մրցանակի 8 դափնեկիր: Համալսարանն ունի 15 ֆակուլտետ և 25 000 ուսանող, որի 12%-ն օտարերկրացի են: Կից հիմնադրվել են միջուկային ֆիզիկայի և Հարավային Ասիայի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրման գիտական կենտրոններ:

Գերմանիայի դաշնային հողերի մեծ մասում համալսարանական կրթությունը յուրաքանչյուր կիսամյակի (սեմեստրի) համար նախատեսում է լրացուցիչ 500 եվրո վարձավճար, հետևաբար, նկատի ունենալով այն հանգամանքը, որ համալ-

սարանական ուսումնառությունը տևում է 8, իսկ առանձյն դեպքերում՝ 10 կիսամյակ, պետք է եզրակացնել, որ ուսման գումարային վարձաչափը կարող է հավելագրվել 4000 – 5000 եվրո սահմաններում, իսկ այն ուսանողների համար, ովքեր ունենում են ակադեմիական պարտքեր և ուսումնառությունը կարող է տևել 14 կիսամյակ՝ համապատասխանաբար 7000 եվրո գումարային հավելավճարով: Նախատեսվում է 2010-2011 թ.թ. ուսումնական տարվանից կիսամյակային հավելավճարը հասցնել 800 եվրոյի:





Նկ.10.Հեյդելբերգի համալսարանի գլխավոր մասնաշենքը և հանդիսությունների դահլիճը: Հեյդելբերգի համայնապատկերը:

Վարկանիշային առումով երկրորդը Մյունխենի Լյուդվիգ Մաքսիմիլանի անվան համալսարանն է, որը հիմնադրվել է 1472 թ.-ին: Ներկայումս համալսարանն ունի 19 ֆակուլտետ և 42 000 ուսանող: Եվրոպայում ու աշխարհում հայտնի է իր բժշկական ֆակուլտետի մատուցած ուսումնառության որակով: Համալսարանին կից գործում է Եվրոպայի միակ բիոտեխնոլոգիական կենտրոնը, ինչպես նաև աստղագիտության և ագրոֆիզիկայի հետազոտական լաբորատորիաները : Այստեղ դասավանդում է 800 պրոֆեսոր:

Գերմանիայի վարկանիշային համալսարանների շարքում երրորդը Քյոլնի համալսարանն է, որն ամբողջ 19-րդ դարի ընթացքում չի գործել: Ներկայումս համալսարանում սովորում է 44 000 ուսանող: Կից գործում է բուսաբանական այգի:

Ուսանողներից հավաքագրվող վարձավճարների 20%-ն ուղղվում է ուսանողների փոխօգնության հիմնադրամի ստեղծմանը ***(Studentenwerk)*** և ուսանողական խորհուրդների *(ASTA)* աշխատանքների ֆինանսավորմանը: Գերմանիայի քոլեջներում մեկ տարվա ուսման վարձավճարը կազմում է ***3 500 – 4 500 եվրո***, իսկ համալսարաններում՝ ***9 000 – 11 000 եվրո*** :

Նկ.11. Մյունխենի համալսարանի գլխավոր մասնաշենքը: Քյոլնի համալսարանը: Բեռլինի Ա.Հումբոլդտի անվան համալսարանը:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հնդկաստանի Հանրապետության կրթական համակարգն աշխարհում խոշորագույններից մեկն է սովորողների, դասավանդողների և ուսումնական հաստատությունների թվաքանակով: Ներկայումս Հնդկաստանում հաշվում են ավելի քան *600 000* տարրական և *180 000* միջնակարգ դպրոց, որոնցում ուսումնառություն է ստանում շուրջ *180 մլն.* 6-14 տարեկան դպրոցահասակ երեխա: Հնդկաստանի Հանրապետությունը զբաղեցնում է մոտավորապես *3,3 մլն. քառ. կմ* մակերես, ազգաբնակչության թվաքանակը *1,1 մլրդ. մարդ* է, ուրբանիզացման մակարդակը՝ *29%:*

Հնդկաստանի հասարակությունը միշտ էլ կրթության նկատմամբ դրսևորել է առանձնահատուկ մոտեցում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքակրթությունների փոխներթափանցման արդի պայմաններում յուրաքանչյուր անձի անհատականությունը գնահատվում է նրա մտավոր ունակությունների և փորձառության համակազմով: Հնդկական ասացվածքը մատնանշում է. *«Թռչունը ·եղեցիկ է իր փետուրներով, իսկ մարդն՝ իր մտքի փայլատակումներով»:*

Մինչև 1976 թ. կրթության ոլորտը գտնվում էր վարչատարածքային խոշոր միավորների՝ նահանգների կառավարական օղակների ենթակայության ներքո, իսկ կենտրոնական կառավարությունը զբաղվում էր առավելապես մասնագիտական և բարձրագույն կրթահամակարգերի չափորոշիչների հաստատմամբ ու դրանց կիրարկման գործընթացների համակարգմամբ: Հետագայում, երբ կատարվեցին մի շարք սահմանադրական փոփոխություններ, նահանգային և կենտրոնական կառավարությունները նկատելիորեն հստակեցրին կրթության ոլորտի կառավարման իրավասությունների շրջանակը, մասնավորապես, կրթության կառուցվածքային հարցերի հստակեցումը հանձնարարվեց նահան-

գային կառավարություններին, իսկ կրթության որակի և չափորոշիչների համար պատասխանատվությունը վստահվեց կենտրոնական կառավարությանը: Այժմ Հնդկաստանում գործում է ***Կրթության նախարարության*** հատուկ՝ ***մարդկային ռեսուրսների զար·ացման դեպարտամենտ***, որը զբաղվում է ծրագրավորման ու պլանավորման հարցերով՝ ունենալով իր նահանգային բաժանմունքները:

1935 թ.-ին ստեղծված ***Կրթության կենտրոնական վարչությունը*** զբաղվում է բացառապես կրթական ոլորտի ծրագրային հիմնադրույթների ու ռազմավարական քաղաքականության առաջնահերթությունների մշակմամբ, դրանց իրականացման և որակի վերահսկողությամբ, ինչպես նաև զարգացման հեռանկարային թիրախների ու գործառույթների սահմանմամբ : Հնդկաստանի կրթական համակարգի զարգացման հարցում շրջադարձային նշանակություն ունեցան 1986թ.-ին հաստատված ***Կրթական ոլորտի ազ·ային քաղաքականությունը*** և նույն թվականին հաստատված ***Հիմնական ·ործողությունների և ·ործառույթների ծրա·իրը,*** որոնք ավելի ուշ՝ 1992 թ.-ին էականորեն լրամշակվեցին ու համապատասխանեցվեցին ազգային աշխատաշուկայի պահանջներին: Արդյունքում էականորեն կրճատվեց ազգաբնակչության շրջանում անգրագիտության մասնաբաժինը: 2008 թ.-ի միջանկյալ մարդահամարի տվյալները ցույց տվեցին, որ 1991-2008 թթ. ժամանակահատվածում 7 տարեկան և ավելի բարձր տարիքի ազգաբնակչության թվաքանակն ավելացել է 357 մլն. մարդով, իսկ գրագետների թվաքանակը՝ 389 մլն. մարդով, այսինքն՝ վերջին 18-19 տարում անգրագետների թվաքանակը կրճատվել է 32 մլն. մարդով: Այժմ Հնդկաստանում բնակվող ***1,1 մլդ***. մարդուց ***684 մլն.-ը*** հանդիսանում է գրագետ, ընդ որում դրա 75%-ը կազմում են տղամարդիկ, իսկ 25%-ը՝ կանայք:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1983 թ.-ից գործում է Հնդկաստանի Հանրապետության կրթական համակարգի հետևյալ կառուցվածքը.

1. նախադպրոցական կրթություն.- նախատեսված է 3-5 տարեկան երեխաների համար.
2. տարրական կրթություն. – նախատեսված է 6-10 տարեկան երեխաների համար (5 դասարան).
3. ոչ լրիվ ընդհանուր միջնակարգ և մասնագիտական կրթություն.-նախատեսված է 11-15 տարեկան պատանիների ու աղջիկների համար (5 դասարան).

4. լրիվ միջնակարգ և մասնագիտական կրթություն.- նախատեսված է 16-18 տարեկան երիտասարդների համար (2-3 դասարան).
5. բարձրագույն կրթություն. – նախատեսված է 18-22 տարեկան երիտասարդների համար (3-5 ուսումնական տարի).

Համաձայն ***Կրթական ոլորտի ազ·այինն քաղաքականության*** հիմնադրույթների, նախատեսվում է մինչև 2015 թ.-ը 15 տարին չլրացած բոլոր քաղաքացիներին ապահովել լիարժեք մակարդակի առաջին աստիճանի անվճար միջնակարգ կրթությամբ: Կենտրոնական և նահանգային կառավարությունների կողմից վերջին 10-15 տարում ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր դարձավ գրեթե բոլոր գյուղական բնակավայրերում հիմնել տարրական կրթության հանրակրթական դպրոցներ, ընդ որում, գյուղական բնակավայրերի 94%-ն ապահովված է այդօրինակ ուսումնական գոնե մեկ հաստատությամբ՝ մինչև 1 կմ շառավղով հեռավորության վրա ունեցած տեղաբաշխմամբ:

Այսպիսով, անկախության ձեռքբերումից հետո ***(1947 թ.)*** տարրական և միջնակարգ կրթական հաստատություններում 6-15 տարեկանների ընդունելությունը 1950-2007 թթ. ժամանակահատվածում 50%-ից հասել է 89%-ի, այդօրինակ կրթօջախների թվաքանակն ավելացել է ավելի քան 3 անգամ՝ 223 հազարից հասնելով ***778 հազարի***, իսկ ուսուցիչների թվաքանակն աճել է գրեթե 6 անգամ՝ 624 հազարի փոխարեն կազմելով ***3,92 մլն.***: Նշված ժամանակահատվածում նկատելիորեն ավելացել է իգական սեռի սովորողների թվաքանակը:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Վերջին երկու տասնամյակի կարևոր նվաճումներից են սոցիալապես անապահով խավի ընտանիքների երեխաների համար նախատեսված պետական և նահանգային օժանդակության ծրագրային քաղաքականության ներդրումը, տարբեր պատճառներով ուսումնական գործընթացը դադարեցնող երեխաների ներգրավումը տարածաշրջանային բազմաբովանդակ ուսումնարտադրական խնբակներում, ինչպես նաև սովորողների ընդհանուր առաջադիմության շարունակական աճը: Այս առումով, տարեցտարի ընդլայնվում է ծնողների ներգրավումը սեփական երեխաների հաճախած դպրոցների կառավարման գործընթացին, վերանայվում ու արդիականացվում են հանրակրթական առարկաների ուսումնական ծրագրերը, հստակեցվում է տարրական և միջնակարգ կրթության նվազագույն բավարար մակարդակի ստորին շեմը, կրճատ-

վում է ուսման մեջ ետ մնացողների համար նախատեսված լրացուցիչ դասընթացների վարձավճարը, վերանորոգվում ու վերակահավորվում են հատկապես գյուղական դպրոցները, աստիճանաբար լայն թափ է առնում հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտների համար նախատեսված անվճար սննդի ազգային ծրագիրը:

1998 թ.-ին Հնդկաստանի Հանրապետության ***Ազ·ային Կոն·րեսի (Ազ·ային Ժողովի) Վերին պալատը*** հաստատեց ***Սահմանադրության 83-րդ կետի*** վերախմբագրված փոփոխությունը, համաձայն որի, հետայսու 6-15 տարեկան բոլոր երեխաների համար երաշխավորվում էր անվճար ու պարտադիր հանրակրթություն: Կատարված փոփոխությունը կյանքի կոչելու համար՝ ստեղծվեցին ***Տարրական կրթության հարցերով Ազ·ային խորհուրդը*** և ***Նահանգային կրթության նախարարների Ազ·ային Կոմիտեն:*** Վերջինիս նախագահի պարտականությունները համատեղության կարգով իրականացնում է մարդկային ռեսուրսների զարգացման հարցերով նախարարը:

Մինչև 1985-86 թթ. ուսումնական տարին Հնդկաստանի տարրական դպրոցները գտնվում էին մեծամասամբ կիսավեր, անմխիթար վիճակում, սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց այն բանից հետո, երբ 1986 թ.-ին մշակվեց, իսկ 1987 թ.-ից ներդրվեց ու հետագայում վերաիմաստավորվեց ***¶ործողությունների Հատուկ ծրա·իրը*** **(Operation Blackboard Scheme),** ըստ որի, յուրաքանչյուր գյուղական դպրոց, որում սովորում էր մինչև 100 աշակերտ, գործուղվեց երկու ուսուցիչ, իսկ դպրոցական դասասենյակներն ու մարզադահլիճներն ապահովվեցին առաջին անհրաժեշտության ուսումնամեթոդական և նյութատեխնիկական սարքավորումներով ու պարագաներով: 1993 թ.-ից նմանատիպ դպրոցներում դասավանդող ուսուցիչների նվազագույն պարտադիր թվաքանակը հասցվեց 3-ի, ինչի արդյունքում էապես բարելավվեց տարրական կրթության որակն ու արդյունավետությունը: Ներկայումս երեք ուսուցչով աշխատող տարրական դպրոցների թվաքանակը 72 հազարից ավելին է, չնայած որ առաջիկա 2-3 տարում ծրագրվում է ավելացնել տարրական դպրոցներում դասավանդող երրորդ ուսուցչի ևս 50 հազար հաստիք:

Բրիտանական գաղութատիրության տարիներին նույնիսկ տարրական կրթությունը հասու էր միայն հարուստ և ապահով ընտանիքների երեխաներին, հետևաբար, ազգաբնակչության գրագիտությունը կազմում էր 14%: Մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունները կենտրոնացած էին գերազանցապես նահանգային վարչական կենտրոններում, իսկ բուհերում դասավանդվում էին առավելապես հումանիտար առարկաներ՝ նպա-

տակ ունենալով համալրել պետական ապարատի ստորին ու միջին օղակների աստիճանաբար ուռճացող աշխատակազմը: Համեմատության համար նշենք, որ 1947 թ.-ին Հնդկաստանի 554 մլն. բնակչից տարրական դպրոց էր հաճախում 14 մլն. դպրոցահասակ երեխա կամ ազգաբնակչության ընդհանուր թվաքանակի մոտ 2,5%-ը, թեև բնակչության տվյալ տարիքային խմբում ընդգրկված էր ավելի քան 65 մլն. մարդ, այսինքն՝ դպրոցահասակ յուրաքանչյուր 5 -ական երեխայից իրականում դպրոց էր հաճախում միայն մեկը: Ներկայիս պատկերը բոլորովին այլ է. դպրոցահասակ (6-10 տարեկան) ***105 մլն. երեխայից*** (բնակչության ընդհանուր թվաքանակի 9%-ը) փաստացի տարրական դպրոց են հաճախում 101 մլն.-ը կամ ընդհանուրի 96%-ը:

Այսօր Հնդկաստանում դպրոց հաճախելը շատ առումներով ձեռնտու է ազգաբնակչության բոլոր, հատկապես, չքավոր շերտերին, քանի որ տղաների համար մինչև 8-րդ դասարանը, իսկ աղջիկների համար մինչև 12-րդ դասարանը ներառյալ ուսուցումն անվճար է, տրամադրվում են արտոնություններ, նպաստներ, կրթաթոշակներ, անվճար դասագրքեր, գրենական պիտույքներ և դպրոցական համազգեստ: Հնդկաստանի մի շարք համալսարաններում և քոլեջներում աղջիկների ուսուցումն անվճար է՝ պայմանավորված ժողովրդագրական քաղաքականության արդյունավետության բարձրացման ռազմավարական պահանջներով:

Հնդկաստանի հանրակրթության ոլորտն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում վաղվա հասուն քաղաքացիների բարոյահոգեբանական դաստիարակության հարցում՝ կարևորելով մի կողմից ուսուցչի առաքելությունը, իսկ մյուս կողմից՝ աշակերտների և նրանց ծնողների պատասխանատվության ինքնագիտակցումը: Հանրակրթության դարերով կուտակված ավանդույթները փաստում են, որ յուրաքանչյուր ուսուցիչ պետք է.

1.ընկալի սեփական անձի կարևորության հարաբերականությունը՝ դրսևորելով մեծագույն հարգանք իրեն վստահված գործի նկատմամբ.

2.ցուցաբերի բարձր ինքնատիրապետում՝ խուսափելով բանավոր խոսքի արհամարական տոնայնությունից, աշակերտների հանդեպ ունեցած թեկուզև աննշան քամահրանքից և քինախնդրությունից.

3. ապրի, աշխատի և ստեղծագործի հաստատված բարոյահոգեբանական նորմերին համահունչ.

4. անձնական և ընտանեկան կյանքում երբեմն հանդիպող անհաջողություններով պայմանավորված ծանր հետևանքներն ու ընկճված տրամադրու-

թյունը զսպելով՝ աշակերտների հետ հաղորդակցվի առանց զգայական բռնկումների.

5. կարողանա դասը վերածել բարության և փոխադարձ հարգանքի մթնոլորտում ընթացող բանավեճի, ազատ ու անկաշկանդ արտահայտվելու, մասամբ էլ լիցքաթափվելու միջավայրի:

Հնդկաստանի հանրակրթական դպրոցներում վաղուց են կիրառվում մի շարք, առաջին հայացքից պարզ թվացող նորարարություններ, երբ ասենք դասասենյակների կամ դպրոցի միջանցքների պատերին փակցվում են պարբերաբար թարմացվող «կոչ – պաստառներ», գրատախտակներին առավոտյան ժամերին գրվում են աշակերտներին ուղղված բարեմաղթանքներ, բաժանվում են յուրատեսակ խրատական ասույթներ ավետող կազմերով աշակերտական տետրեր, ազգային հերոսների ու պատմական և քաղաքական նշանավոր դեմքերի դիմապատկերներով օրագրեր, օժանդակ ձեռնարկներ, տարատեսակ գրենական պարագաներ, որոնք աշակերտներին կամա թե ակամա դրդում են խորհել, մտածել կամ վերաիմաստավորել սեփական կեցությունն ու արարքները: Ահա այդպիսի կոչերից մի քանիսը.

1. «Մեր կյանքը պետք է կառավարվի ճշմարտության նկատմամաբ ունեցած սիրով և աշխարաճանաչողության անսահման ձգտումով»:
2. «Վերափոխվե՛ք ինքներդ, եթե ցանկանում եք վերափոխել աշխարհը»:
3. «Չկա ավելի մեծ համարձակություն, քան ընդունել սեփական սխալները»:
4. «Ամեն ինչի մեծագույն գեղեցկությունը թաքնված է պարզության մեջ»:
5. «Երբեք մի մտորեք այն մարդկանց մասին, ում հասցեին չեք կարող արտահայտել լավատեսական մտքեր»:
6. «Աշխարհը խլացել է անօգուտ խոսքերից»:
7. «Եթե կյանքին վերաբերվես ժպիտով, ապա կյանքը քեզ միշտ կժպտա»:
8. «Մարմինը պետք է մշտապես պատրաստ լինի վանել ու դիմագրավել ցանկացած հիվանդություն այնպես, ինչպես գիտակցությունը վանում է սուտն ու կեղծիքը»:
9. «Ինչպիսի դժվարություններ էլ մեզ համակեն, եթե մենք այդ ամենին վերաբերվենք սառնասրտությամբ, ապա հաղթահարման ուղիներն ի հայտ կգան ինքնաբերաբար»:
10. «Յուրաքանչյուրիս վիճակված է ունենալ որոշակի դերակատարում, կատարել որոշակի աշխատանք, իմանալ մեծ աշխարհում այն փոքրիկ տեղը, որ կարող ենք զբաղեցնել միայն ինքներս»:

Հնդկաստանի հանրակրթության ոլորտի ձեռքբերումները չեն սահմանափակվում միայն կոչերով: Այստեղ ակնառու են համակարգային գործընթացները, մասնավորապես, հանրակրթական դասագրքերի բովանդակությունն ու կառուցվածքը, դրանց ստեղծման համար պատասխանատու կառույցների, հատկապես, ***Բաց կրթության ազ·ային ինստիտուտի, Միջնակար· կրթության կենտրոնական խորհրդի, Տեխնիկական և տնտեսական համա·ործակցության Հնդկական ծրա·րի, Կրթական հետազոտությունների և ուսուցման պետական խորհրդի, Ինդիրա Ղանդիի անվան Պետական բաց դպրոցի*** փոխհամաձայնեցված գործողությունները, ինչի արդյունքում դասագրքերի էջերից հոսում են համամարդկային արժեքների հետ հաղորդակցվելու հնարավորությունն ու ազգային ակունքների իմացության բաղադրատոմսերը, հանդուրժողականության, համբերատարության, ճշմարտախոսության, անկեղծության, կառուցողական տրամաբանության, համարձակության ձգտելու անկաշկանդվածության քարոզչությունը:

Նկ.12. Հնդկաստանի հանրակրթական դպրոցների շենքային պայմանները դժվար է համեմատել եվրոպական կրթօջախների հետ:

Մասնագիտական կամ քոլեջային կրթության առանձնահատկությունները հասկանալու համար, նախ ծանոթանանք Հնդկաստանում գործող քոլեջների տեսակներին (կատեգորիաներին), որոնք իրարից տարբերվում են առավելապես առաջարկվող մասնագիտական դասընթացների խմբաքանակով, սեփականության կարգավիճակով (պետական կամ ոչ պետական) և համալսարանների հետ ունեցած համագործակցության բնույթով:

Համալսարանական քոլեջներ: Այս կարգի քոլեջները ղեկավարվում են համալսարանների կողմից՝ գտնվելով համալսարանական կից տարածքներում (կամպուսում) և կազմում են քոլեջների ընդհանուր թվաքանակի ***3%-ը***:

Կառավարական քոլեջներ: Սրանք կազմում են Հնդկաստանի քոլեջների ընդհանուր թվաքանակի մոտ ***20%-ը***, ղեկավարվում են նահանգային կառավարությունների կողմից և մեծամասամբ կցված են որևէ պետական համալսարանի: Ի դեպ, քոլեջներում կազմակերպվող ընդունելության, ընթացիկ և ավարտական քննությունները, ուսումնառության դասընթացների ընտրությունը, կրթական որակավորումների ու աստիճանների շնորհման գործառույթները վստահվում են վերադաս կամ գլխամասային համալսարանին:

Մասնագիտական քոլեջներ: Այս քոլեջները մասնագիտանում են բժշկության, մեքենաշինության և կառավարման ոլորտի մասնագետներ պատրաստելու հարցում: Նմանատիպ ուսումնական հաստատությունները ֆինանսավորվում են կամ պետական միջոցների կամ անհատական ներդրումների հաշվին՝ կազմելովՀնդկաստանի քոլեջների ընդհանուր թվաքանակի ***7%-ը:***

Մասնավոր քոլեջներ: Հնդկաստանի կրթական համակարգում այսօրինակ քոլեջներն ամենամեծաթիվն են՝ ընդհանուր թվաքանակի շուրջ ***70%-ը***, և հանդիսանում են առանձին համալսարանների բաժանմունքներ, ղեկավարվում դրանց կանոնակարգով ու սկզբունքային մոտեցումներով: Չնայած մասնավոր կապիտալ ներդրումների հաշվին ծավալվող գործունեությանը, նահանգային կառավարությունները ևս ցուցաբերում են հովանավորչական աջակցություն:

2009 թ.-ի վիճակով Հնդկաստանում գործում էր բնական և հումանիտար գիտությունների դասավանդման մոտավորապես 4900, մանկավարժական շուրջ 2300, ինժեներատեխնիկական 185 և բժշկական 359, խառը մասնագիտացման 3000-ից ավելի, ընդամենը՝ ***10 545 քոլեջ*** : Դրանցում սովորողների ընդհանուր թվաքանակը կազմում էր գրեթե ***5 մլն. մարդ:***

Հնդկաստանի այն շրջաններում, հատկապես բարձրալեռնային գյուղերում, որտեղ երեխաները հնարավորություն չունեն հաճախել հանրակրթական պետական կամ ոչ պետական դպրոց, ստեղծվում են ***ոչ պաշտոնական (ոչ ֆորմալ) կրթական կենտրոններ (ՈՊԿԿ - եր),*** որոնցում ամրագրված կրթական մեթոդները բավականաչափ ճկուն են, արդյունավետ, հասանելի ու մատչելի են տարբեր տարիքի կամ ինչ-ինչ պատճառներով կրթությունն անավարտ թողած քաղաքացիների համար: Այսօրվա Հնդկաստանում գործում է 280 հազարից ավելի ՈՊԿԿ՝ հասանելի լինելով շուրջ 7 մլն. 6-15 տարեկանների համար, որից 3 մլն.-ը կանայք և աղջիկներ են: Նմանատիպ ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերն ուղղորդվում են սվորողների շահերից ելնելով՝ հաշվի առնելով տարածքի պատմամշակութային, ազգագրական և բնակլիմայական պայմանների առանձնահատկությունները: Նախատեսվում է, որ առաջիկա 3-4 տարվա ընթացքում դպրոցահասակների 1/3 մասը կօգտվի ՈՊԿԿ- երի ծառայությունից:

Մասնագիտական միջնակարգ կրթությունը ներառում է նաև 230 համալսարանական, 40 կիսահամալսարանական կարգավիճակի ***(Deemed Universities),*** 28 գյուղատնտեսական և 6 բաց համալսարանական ուսումնական հաստատություն, որոնցում ընդգրկված ուսանողների 12%-ն ուսումնառություն է ստանում հեռակա հիմունքով:

Այսպիսով, Հնդկաստանում շարունակական կրթական սանդղակը կառուցվում է «10+2+3» ձևաչափով, նկատի ունենալով, որ ուսումնառության ***առաջին տասը տարում*** բոլոր դպրոցականները ստանում են միանման ***ընդհանուր հանրակրթություն***, իսկ հետագա ***երկու,*** մասնավոր դեպքերում ***երեք տարվա*** ընթացքում ձեռք են բերում ***լրիվ միջնակար· կրթություն*** ՝ ավարտելով ավագ դպրոցը: Նկատենք, որ ավագ դպրոցներում ուսումնառությունը կրում է ուղղորդված բնույթ՝ տարանջատվելով հումանիտար-հասարակակագիտական և արհեստագործա-մասնագիտական հոսքերի: Հնդկաստանի նահանգների մեծ մասում ավագ դպրոցի ուսումնակրթական ծրագրերն իրագործվում են արհեստագործական ուսումնարաններում կամ տեխնիկումներում, չնայած այն հանգամանքին, որ արտադրական ուսումնառություն իրականացնող բազմաթիվ միջին (տասնամյա) դպրոցներ նույնպես շնորհում են տեխնիկական որակավորումներ: Հավելենք, որ տեխնիկական կրթություն կարելի է ստանալ նաև ութնամյա կրթական հիմքի վրա՝ ավարտելով մեկ կամ երկու տարի տևողությամբ արդյունաբերաարտադրական որևէ դասընթաց: Համեմատած եվրոպական նմանատիպ հաստատությունների հետ, Հնդկաստանի քոլեջ-

ներում ուսումնական մեկ տարվա վարձավճարը համեմատաբար ցածր է՝ կազմելով **1000 – 2000 եվրո:**

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

1.1979 թ.-ից ներդրվեց ***Ոչ պաշտոնական կրթության (Non-Formal Education) ծրագիրը***, որը նախատեսված էր կրթական անհամեմատ ավելի ցածր մակարդակով տասը նահանգների համար, ինչը նախատեսում էր օժանդակել պաշտոնակարգված (ֆորմալ) կրթության շրջանակից դուրս մնացածներին:

2.Հնդկաստանի կրթական համակարգի արդիականացման և զարգացման հարցում բեկումնային նշանակություն ունեցավ ***1986 թ.-ին*** հաստատված ***Կրթական ոլորտի ազ·ային քաղաքականությունը***, որը սահմանում էր կրթական քաղաքականության ռազմավարությունն ու մարտավարական առաջնահերթությունները, ոլորտի որակի ապահովման համար պատասխանատուների շրջանակն ու պարտականությունները, կրթական բարեփոխումների ժամանակացույցը և ծրագրային հիմնախնդիրներն ու դրանց հաղթահարման միջոցառումները:

3.Կրթական ոլորտի ազգային քաղաքականության անբաժանելի մաս հանդիսացող ու ***1986 թ.-ին*** հաստատված ***Հիմնական ·ործողությունների և ·ործառույթների ծրա·իրը,*** որն ավելի ուշ՝ 1992 թ.-ին էականորեն լրամշակվեց և համապատասխանեցվեց ազգային աշխատաշուկայի պահանջներին, մեծ

տեղ էր հատկացնում տարրական դպրոցների ցանցի ընդարձակմանը, կանանց շրջանում գրագիտության բարձրացմանը, հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստմանը, մասնագիտական կրթության բնագավառում որակավորումների շրջանակի հստակեցմանը, նոր բովանդակությամբ դասագրքերի ու օժանդակ ձեռնարկների հրատարակման ծավալների ընդարձակմանը :

4.1987 թ.-ից ներդրվեց ***Գործողությունների Հատուկ ծրա·իրը* (Operation Blackboard Scheme)** ՝ նախատեսված առավելապես տարրական դպրոցների համար:

5.1997-1998 թթ. գործի դրվեց ներդրումային *Լոկ Ջամբիշ (Lok Jumbish)* նախագիծը՝ ***«Համընդհանուր կրթության ազ·ային շարժման»*** շրջանակում, համաձայն որի Ռաջաստհանում անցկացվեց ավելի քան 4000 գյուղական դպրոցների հաշվառում, ոչ պաշտոնական մոտավորապես 2300 կրթական կենտրոնների հիմնադրում, տարրական դասարանների համար նախատեսված դասագրքերի վերախմբագրում և վերահրատարակում:

6.1998 թ.-ին Հնդկաստանի Հանրապետության ***Ազ·ային Կոն·ռեսի (Ազ·ային ժողովի) Վերին պալատի*** հաստատմանն արժանացած ***Սահմանադրության 83-րդ կետի*** վերախմբագրված փոփոխությունը նոր լիցք հաղորդեց կրթական քաղաքականությանը, համաձայն որի, 6-15 տարեկան բոլոր երեխաների համար երաշխավորվում էր անվճար ու պարտադիր հանրակրթություն, ազգային փոքրամասնությունների համար մայրենիով դասավանդման հնարավորության ընձեռում, հանրակրթական առարկայական ծրագրերի վերանայում և բեռնաթափում:

7. 1998 թ.-ից գործում է ***Կանանց կրթության ազ·ային հայեցակար·ը,*** որը նախատեսում է.

ա/ Համահնդկական Կանանց Խորհրդի ձևավորում,

բ/ համընդհանուր գրագիտության համար պատասխանատու կենտրոնների հիմնադրում,

գ/ ոչ պաշտոնական կրթական կենտրոնների ստեղծում,

դ/ կանանց կրթության որակի ապահովման պետական դրամաշնորհների տրամադրում:

Արհեստագործական դպրոցներ: Այս կարգի ուսումնական հաստատությունները տեղաբաշխված են Հնդկաստանի 25 նահանգից մի քանիսում, որոնցում սովորողներն ուսումնառության ընթացքում նախապատրաստվում են միջին դպրոցի համար նախատեսված քննություններին: Նմանօրինակ դպրոցները թվով 3740-ն են և ունեն ավելի քան 400 000 աշակերտ: Բացի հանրակրթական առարկաներից, որոնց տասնամյա ուսումնառության արդյունքում հանձնվում են քննություններ, սովորողներին, ըստ կամավոր ընտրության, առաջարկվում է որևէ նեղ մասնագիտական դասընթացի, մասնավորապես, ատաղձագործության, դարբնագործության, եռակցման, կապակցման (մոնտաժման), փականագործության, ջրաշինարարության, ծեփագործության, գյուղտեխնիկայի և տեքստիլ տեխնոլոգիաների սպասարկման ուսումնառություն: Արհեստագործական դպրոցներում ակտիվորեն իրականացվում է մեծահասակների կրթություն և բանվորական որակավորման կարճաժամկետ ուսուցում: Այս տեսակի դպրոցների աշխատանքը համակարգելու համար գործում է *Դպրոցական վկայականի համար հանձնվող քննությունների խորհուրդ* (CISCE):

Արդյունաբերական ինստիտուտներ: Արհեստների ուսուցմամբ զբաղվում են նաև շուրջ 2000 պետական ու ոչ պետական արդյունաբերական ինստիտուտում, որոնցում սովորողների թվաքանակը տատանվում է 350-370 հազարի սահմանում: Սովորողներն ուսանում են մոտ 70 մասնագիտություն, որից 40-ը՝ ինժեներատեխնիկական ուղղվածության: Ընդունելությունը կատարվում է 8-ամյա և 10-ամյա հանրակրթության հենքի վրա, իսկ ուսումնառությունը տևում է 1-2 տարի: Մասնագիտական դասընթացներն առավելապես հենվում են տեսական գիտելիքների վրա, մինչդեռ հանրակրթական առարկաները մատուցվում են ընդհանուր կողմերով: Ինստիտուտների աշխատանքը կանոնակարգելու համար ստեղծվել է *Միջնակար· կրթության կենտրոնական խորհուրդ* (CBSE) :

Միջին մասնագիտական լրիվ կրթություն: Մասնագիտական կրթության հիշատակվող մակարդակը նպատակաուղղված է այնպիսի աշխատուժի նախապատրաստմանը, ովքեր հետագայում աշխատելով այս կամ այն ձեռնարկությունում, չեն հանդիսանում որևէ արհեստակցական միության անդամ: Ուսուցումն ընթանում է արտադրական և ոչ արտադրական (սպասարկման)

ուղղություններով: Սովորողները ձեռք են բերում ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև կուտակում են մասնագիտական հմտություններ, ուսուցանում են հարակից մասնագիտացումներ, օտար լեզուներ և հանրակրթական առարկաներ, ծանոթանում են ձեռնարկատիրության (բիզնեսի) հիմունքներին: Կրթական ծրագրերի համակենտրոնացման և համակարգման նպատակով գործում է ***Բաց կրթության ազգային ինստիտուտը*** (NIOS):

Նկ.13. Հնդկաստանի քոլեջներում դասավանդվում են ավելի քան 400 մասնագիտական դասընթաց: Ներքևում աջից՝ Կալկաթայի հայկական քոլեջն է:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հնդկաստանի Հանրապետության որևէ բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար անհրաժեշտ է ունենալ տասներկուամյա միջնակարգ դպրոցի ավարտական վկայական (հասունության ատեստատ): Ուսումնառության եռամյա արդյունքներով ավարտվում է համալսարանական կրթության առաջին մակարդակը, որը մատուցվում է անգլերենով, չնայած որ հանրակրթության ոլորտում իրականացվում է եռալեզու համակարգ. մայրենի կամ հինդի, բենգալերեն և անգլերեն:

Ընդհանուր առմամբ, Հնդկաստանի համալսարաններում սովորում է 17-23 տարեկան շուրջ ***7 մլն. ուսանող***, որը կազմում է նշված տարիքային խմբի ազգաբնակչության ***6%-ը***: Հնդկաստանի համալսարաններն ունեն նեղ մասնագիտացում, մասնավորապես, հնդկական ազգային երաժշտության պատմական ակունքների և զարգացման ընթացքի ուսումնառությամբ զբաղվում են Հայրագահիրի ***Բհարաթի Վիսվա*** և ***Ինդիրա Կալայի*** բուհերում, բենգալերենի ու թագորագիտության ուսումնասիրությամբ՝ Դելիի ***Ռաբինդրա*** և Կալկաթայի, ինչպես նաև Մումբայի (Բոմբեյի) իգական համալսարաններում: Հնդկաստանի առաջատար համալսարաններից են ***Կալկաթայինը*** (150 հազար ուսանող), ***Մումբայինը*** (150 հազար ուսանող), ***Ռաջաստհանինը*** (150 հազար ուսանող) և ***Դելիինը*** (130 հազար ուսանող):

Կալկաթայի համալսարանը հիմնադրվել է 1857 թ.-ին՝ ընդգրկելով նաև նախագահական (հիմնադրված 1855 թ.), սանսկրիտի (հիմնադրված 1824 թ.), Բեթհուանի անվան (հիմնադրված 1949 թ.), Դևթոնի (հիմնադրված 1823 թ.), «Դա Մարթիներ» (հիմնադրված 1836 թ.), մահմեդական մադրասա (հիմնադրված 1781 թ.) և հայկական (հիմնադրված 1821 թ.) քոլեջները: Ուսանողների թվաքանակով (154 000) Հնդկաստանի ամենախոշոր համալսարանն է և ունի համալիր բնույթ: Համալսարանի ենթակայության տակ գտնվող 219 հենակետային քոլեջի ուսանողության թվաքանակն ավելի քան 75 հազար է, որը տեղաբաշխված է ըստ Արևմտյան Բենգալիայի տարբեր բնակավայրերի: Հենակետային քոլեջների ուսումնական ծրագրերը մշակվում են գլխամասային ուսումնագիտական խորհրդի երաշխավորությամբ, իսկ ընդունելության և ավարտական քննություններն անցկացվում են համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի անմիջական մասնակցությամբ: Կալկաթայի համալսարանում հաջողությամբ իրականացվում է նաև հետբուհական կրթություն: Հումանիտար գիտությունների գծով ասպիրանտուրան գործում է դեռևս 1912 թ.-ից, իսկ բնական և ճշգրիտ գիտություններինը՝ 1917 թ.-ից:

2008-2009 թթ. ուսումնական տարում Կալկաթայի համալսարանն ուներ 21 ֆակուլտետ, որոնցից վարկանիշային էին համարվում պատմականը, իրավաբանականը, բնագիտամաթեմատիկականը, առևտրատնտեսագիտականը, կառավարմանը, լրագրությանը, մանկավարժականը, գեղեցիկ արվեստների ու երաժշտությանը, ինժեներականը, տեխնոլոգիականը, բժշկականը, անասնաբուժականը և տնայնագործականը: Համալսարանի գրադարանում հաշվում են 1 միլիոն 430 հազար կտոր մասնագիտական գրականություն: Կից գործում է աստղադիտարան՝ աշխարհում խոշորագույններից մեկը:

Մումբայի (մինչև 1996 թ.-ը Բոմբեյի) համալսարանը հիմնադրվել է 1857 թ.-ին: Մինչև 1904 թ.-ը համալսարանի հիմնական գործառույթը սահմանափակվում էր հենակետային քոլեջներում ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման աշխատանքներով ու օքսֆորդյան համակարգով ուսումնառության սկզբունքների ներդրման միջոցառումներով: Մումբայի համալսարանի կազմում ընդգրկված է 354 քոլեջ, 36 բաժանմունք, բազմաթիվ կրթական, մշակութային, գիտահետազոտական, բժշկական կենտրոններ, որոնցում ներգրավված է ավելի քան 200 հազար սովորող: Համալսարանի անբաժանելի մասն է կազմում Ջավահարլար Ներուի անվան գրադարանը, որի գրապահոցում հաշվում են 850 հազար կտոր մասնագիտական գրականություն: Համալսարանն իր հենակետային քոլեջները ղեկավարում է դաշնային (ֆեդերալ) հարաբերությունների սկզբունքով, որն ամրագրված է 1953 թ.-ին ընդունված օրենսդրական ակտով, այսինքն՝ քոլեջներն ունեն բավականաչափ ինքնավարություն: Մեծահասակների ու կանանց կրթությունը խրախուսելու նպատակով, ստեղծվել են հեռակա և երեկոյան ուսուցման բաժիններ ու ծրագրային դասընթացներ՝ հինդի և մարաթիի լեզուներով:



Նկ.14.Համալսարաններ Կալկաթայում, Մումբայում և Մադրասում:

Ի դեպ, ***աշխարհում առաջին համալսարանը հիմնադրվել է Ք.ա. 700 թ.-ին, Հնդկաստանի Թաքշաշիլա բնակավայրում:*** Այն ունեցել է 10 500 ուսանող և 800 դասավանդաղող, որտեղ դասավանդվել է 60 առարկա: Աշխարհի հնագույն համալսարանների շարքում առանձնացվում է ***Նալանդի կրթահամալիրը,*** որը հիմնադրվել է 4-րդ դարում, Հնդկաստանի ***Աշոքա*** կայսեր կողմից: Այստեղ ուսանել են աշխարհի տարբեր երկրների ավելի քան 10 000 քաղաքացի, հատկապես, Չինաստանից, Կորեայից և Շրի Լանկայից: Այս հնագույն ուսումնական հաստատության ավերակները գտնվում են ներկայիս Բոդհայի բնակավայրից 62 կմ դեպի արևելք և Փաթնա քաղաքից 90 կմ դեպի հարավ,

որի շրջակայքում հանդիպում են նաև վանքերի, տաճարների ու աղոթատեղերի ավերված կիսակառույցներ:

Հնդկաստանի *Այուրվեդա* քաղաքում է գտնվում *աշխարհի հնա·ույն բժշկական դպրոցը,* որը ստեղծվել է 2500 տարի առաջ, բժշկագիտության հիմնադիր՝ *Չարակայի* կողմից:

Ավելորդ չէ հիշատակել, որ հանրահաշվի ու եռանկյունաչափության հիմքերը դրվել են հենց Հնդկաստանում, իսկ առաջին քառակուսային հավասարումները պահպանվել են հնագույն հնդկական ձեռագրերում (11-րդ դար):

Հնդկաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական մեկ տարվա վարձավճարը կազմում է *3 000 – 5 000 եվրո,* որը համարժեք է մոտավորապես *4 000 – 6 500 ամերիկյան դոլարին (USD)*:

Հնդկաստանի բարձրագույն կրթության համակարգի կազմում առանձնացվում են մասնագիտական որակավորումների երեք մակարդակ.

1.Բակալավրիատ (Բակալավր) - Bachelor / Undergraduate level. Բակալավրի կոչում ստանալու համար անհրաժեշտ է 12-ամյա հանրակրթություն (լրիվ միջնակարգ), տարիքը՝ 17 տարեկանից բարձր, ինչպես նաև նոտարի կողմից հաստատված հանրակրթական առարկաների յուրացման և ատեստավորման ամփոփիչ գնահատականների անվանացանկ (միջուկ՝ հասունության ատեստատին համարժեք փաստաթուղթ): Բնական և հասարակական գիտությունների, արվեստի ու առևտրի բնագավառներում բակալավրի կոչման արժանանալու համար հարկավոր է եռամյա ուսումնառություն, գյուղատնտեսության, ատամնաբուժության, դեղագործության ու անասնաբուժության ոլորտներում՝ քառամյա, ճարտարագիտության և վիրաբուժության ասպարեզում՝ 5-6 տարվա, իսկ լրագրության, գրադարանավարության ու իրավագիտության մասնագիտացումներում՝ 3-5 տարվա ուսումնառություն:

2.Մագիստրատուրա (Մագիստրոս) - Master's / Post-graduate level. Որակավորման այս մակարդակը կարելի է ձեռքբերել երկամյա ուսումնառության արդյունքում: Կրթական ծրագիրը կարող է ներառել կամ տեսական դասընթաց՝ պարապմունքների կանոնավոր հաճախումներով, կամ գիտական թեզի մշակման համար գիտահետազոտական աշխատանքների անցկացում: Մագիստրատուրա ընդունվելու համար պահանջվում է լրիվ միջնակարգ կրթության վկայական, նոտարի կողմից հաստատված նվազագույնը երեք տարվա տևողությամբ բակալավրի դասընթացի ավարտական դիպլոմ, իսկ տարիքը՝ 20 տարեկանից բարձր:

3.Դոկտորանտուրա (Գիտությունների դոկտոր) - Doctoral / Pre-doctoral level.

Հնդկաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների շարքում ընդգծված դերակատարում ունեն ***տեխնոլո·իական ինստիտուտները,*** որոնցից վեցը դասվում են աշխարհի առաջատար 50 նմանատիպ բուհերի շարքին: Գործում է նաև ինդուստրիալ (արդյունաբերական) ինստիտուտների բավականաչափ զարգացած ցանց, որոնցում բացի բարձրորակ մասնագետներ պատրաստելուց, կազմակերպվում են որակավորման ու վերավորակավորման դասընթացներ: Հնդկաստանի տեխնոլոգիական ինստիտուտներն ի տարբերություն իրենց եվրոպական նմանատիպ հաստատությունների, անհամեմատ ավելի փոքր են թե' ուսումնակրթական, թե' ենթակառուցվածքային առումներով, լավագույն դեպքում ունենալով մինչև 800-900 ուսանող:

Տեխնոլոգիական ինստիտուտների առանձնահատուկ խումբ են կազմում ***պոլիտեխնիկական համալսարանները՝*** միջինը 2000-3000 ուսանողով և ուսումնառության մի քանի ֆակուլտետով: 1950-2008 թթ. ժամանակահատվածում նմանատիպ համալսարանների թիվը 43-ից հասել է 1130-ի, իսկ դրանցում սովորողների գումարային թվաքանակը՝ 3400-ից մինչև 190 հազարի: Պոլիտեխնիկական և' պետական, և' ոչ պետական համալսարանները գտնվում են ***Տեխնիկական կրթության համահնդկական խորհրդի (ՏԿՀԽ)*** իրավա-սության ներքո՝ իրականացնելով նաև ասպիրանտական կրթություն:

Հնդկաստանի Հանրապետության կրթական համակարգում նշանակալի տեղ է գրավում մայրաքաղաք ***Նյու Դելին:*** Այստեղ հաշվում են 2520 տարրական (1,55 մլն. աշակերտ), 640 միջանկյալ (830 հազար աշակերտ), 510 թերի միջնակարգ (675 հազար աշակերտ) և 1200 բարձրագույն միջնակարգ (920 հազար աշակերտ) դպրոց, որոնցում սովորողների 51%-ը տղամարդիկ են: Ամեն տարի Նյու Դելիի քաղաքապետարանը կրթական ծրագրերի զարգացմանը հատկացնում է քաղաքային ՀՆԱ-ի 2,2%-ը: Այսօրվա Հնդկաստանը կրթական ծառայությունների (օտարերկրացիների համար նախատեսված) մատուցման համաշխարհային բնագավառում զբաղեցնում է 4-րդ տեղը՝ ԱՄՆ-ից, Կանադայից և Ավստրալիայից հետո:

Մակարդակը	Տարիքը	Ուսումնական հաստատությունը	Կրթություն
	3-6	մանկապարտեզ	***
1-5	6-11	տարրական դպրոց, նախնական	տարրական
6-8	11-14	տարրական դպրոց, հիմնական	տարրական
9-10	14-16	ընդհանուր միջնակարգ դպրոց	միջնակարգ
11-12	16-18	լրիվ միջնակարգ դպրոց	միջնակարգ
13-15 կամ 16 կամ 17	18-20 կամ 21 կամ 22	համալսարան	բարձրագույն
16 կամ 17 կամ 18	22,23,24	արվեստների ուսուցման դպրոց	***
9-11 կամ 12	14-17 կամ 18	բարձրագույն տեխնիկական դպրոց	միջին մասնագիտական
11-16	16-21	պելիտեխնիկական համալսարան	բարձր. մասնագիտական
9	14	արհեստագործական ուսումնարան	***
9-10 11-13	14-16 16-19	լեզվի ուսուցման դասընթացներ	***
11-17	16-22	մասնագիտական ուսուցման և որակավորման դասընթացներ	***

Նկ.15.Հնդկաստանի կրթական համակարգի գծապատկերը:

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ավստրալական Միությունն (Ավստրալիան) աշխարհի միակ մայրցամաք-պետությունն է: Զբաղեցնում է ***7,7 մլն. քառ կմ*** մակերես, բնակչության թվաքանակն ավելի քան ***21 մլն. մարդ*** է, ուրբանիզացման մակարդակը՝ ***88%:*** Հանդիսանալով տնտեսապես բարձր զարգացած, հետինդուստրիալ տիպի երկիր, Ավստրալիան առանձնանում է իր կրթական համակարգի բարեփոխումների առաջանցիկ տեմպերով և բազմաթիվ այլ առավելություններով: Վերջիններիս շարքում առավել կարևորվում են հետևյալ առանձնահատկությունները.

1.ավստրալական դիպլոմն անվերապահորեն ընդունվում և ճանաչվում է ամբողջ աշխարհում՝ ունենալով բավականաչափ բարձր վարկանիշ.

2.ավստրալական քոլեջների և համալսարանների շրջանավարտներն ապահովագրված են ամենաանշան ֆինանսական ռիսկերից՝ երաշխավորված լինելով պետական տարբեր պարտավորություններով, կրթության մասին դաշնային ու նահանգային ակտերից բխող հավաստիքներով.

3. ուսուցման արժեքը 35-40 %-ով զիջում է ԱՄՆ-ին և Արևմտյան Եվրոպային.

4. մասնագիտական և բարձրագույն կրթության ճկուն համակարգը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր ուսանողի համար ընտրել ուսումնառության անհատական ծրագիր՝ ըստ նախասիրությունների ու ընդունակությունների.

5.Ավստրալիան ոչ միայն տեղացիների, այլև օտարերկրացիների համար բացարձակապես անվտանգ և բարեհամբույր երկիր է՝ պայմանավորված հանցագործությունների ցածր մակարդակով (100 հազար մարդու հաշվով՝ միջինը 3 սպանության դեպք) ու ազգաբնակչության խայտաբղետ ազգային կազմով, որը ներառում է մոտավորապես 200 ազգերի և ազգությունների ներկայացուցիչներ, այդ թվում նաև ավելի քան 45 հազար հայ.

6. առաջին անհրաժեշտության սննդամթերքները կրկնակի անգամ ավելի էժան են, քան Հյուսիսային Ամերիկայում ու Եվրպայում, իսկ բնակարանային և կոմունալ վարձավճարները 15-20 %-ով ավելի ցածր են, քան անգլախոս մյուս երկրներում, մասնավորապես, ԱՄՆ-ում ու Մեծ Բրիտանիայում.

7. օտարերկրացի աշակերտների և ուսանողների ծնողները տարվա մեջ երկու անգամ հնարավորություն ունեն այցելել իրենց զավակներին՝ վիզաների ձևակերպման և փոխադրավարձի արտոնյալ պայմաններով.

8.ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտներին հնարավորություն է տրվում ձեռքբերել Ավստրալիայի քաղաքացիություն.

9.ուսումնառության ընթացքում թույլատրվում է զբաղվել աշխատանքային գործունեությամբ՝ շաբաթական մինչև 20 ժամ ծանրաբեռնվածությամբ.

10. Ավստրալիան սոցիալապես և բնապահպանական առումով կենսապահովված երկիր է.

11. բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնական մասը տեղաբաշխված է խոշոր քաղաքներում, որոնք աչքի են ընկնում ուսուցման և հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներով ու պայմաններով:

Ամեն տարի ավստրալական քոլեջներ և համալսարաններ ուսանելու են գալիս ավելի քան ***200 հազար օտարերկրացի*** պատանիներ ու աղջիկներ, ովքեր «կանաչ աշխարհամասից» հեռանում են անկրկնելի հիշողություններով և տպավորություններով հագեցած ու սեփական կարիերայի հանդեպ հիմնավոր վստահությամբ: Ի դեպ, ավստրալական քոլեջներում մեկ տարվա ուսման վարձը կազմում է ***5 000- 7 000 ավստրալական դոլար (AUD***), որը համարժեք է ***3 700 – 4 200 ԱՄՆ դոլարին*** կամ ***2 600 – 3 700 եվրոյին***, իսկ համալսարաններում՝ ***8 000 – 12 000 AUD*** (համարժեք է ***6 000 – 9 000 ԱՄՆ դոլարին*** կամ ***4 200 – 6 500 եվրոյին***), ինչը շատերին է մատչելի, եթե նկատի ունենանք, որ ազատ ժամերին աշխատելով սրճարաններում, առևտրի կետերում կամ բենզալցակայաններում, միջին հաշվով տարեկան կարելի է վաստակել ***40 000 – 60 000 AUD***:

Ավստրալիան դաշնային սահմանադրական միապետություն է և վարչականորեն կազմված է 6 նահանգից ***(Քվինսլենդ, Արևմտյան Ավստրալիա, Հարավային Ավստրալիա, Նոր Հարավային Ուելս, Վիկտորիա, Թասմանիա)*** ու երկու տարածքից ***(Հյուսիսային, Մայրաքաղաքային***): Ասում են, որ Ավստրալիայում ամեն ինչ այնպես չէ, ինչպես աշխարհի մյուս անկյուններում: Ձմեռն այստեղ

վրա է հասնում, երբ Եվրոպայում ամառ է, երկիրը կառավարում է Անգլիայի թագուհին, ավտոմեքենաների կառավարման ղեկն աջից է, իսկ բնորոշ բուսատեսակների 75%-ը և կենդանատեսակների 90%-ն էնդեմիկ է՝ հանդիպելով միայն Ավստրալիայի տարածքում: Չնայած այսպիսի «խառնաշփոթին», երբ քաղաքաշինության նորմերն ամերիկյան մոդեռն՝ գերժամանակակից ոճի են, բնակչության կենսամակարդակը և կրթվածությունը՝ եվրոպական մակարդակի, իսկ ավստրալացիների հաստատակամությունն ու նպատակասլացությունը մոտ են ասիական չափանիշներին, չգիտես ինչու, բոլորին հաճելի է և հարմար:

ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ավստրալիայի կրթական համակարգը համեմատական առումով երիտասարդ է և ունի ընդամենը 150-160 տարվա պատմություն, եթե նկատի ունենանք, որ մայրցամաքը հոլանդացիները հայտնագործել են 17-րդ դարում, իսկ բրիտանացիների կողմից մայրցամաքի մասսայական բնակեցումը սկսվել է միայն 18-րդ դարի երկրորդ կեսում:

Ավստրալիայի կրթական համակարգը ստեղծվել է անգլիական (բրիտանական) ավանդույթների օրինակով ու նմանակմամբ, ինչն էլ պայմանավորել է ոչ միայն կառուցվածքային համասեռությունը, այլև՝ ուսումնառության առջև դրված չափանիշների բարձր պահանջները: Ժամանակին ստեղծված առաջին ոչ պետական (մասնավոր) ավստրալական դպրոց-հանրակացարանները, կամ այսօրվա պատկերացումներով գիշերօթիկ դպրոցները (պանսիոնները) գրեթե ամեն ինչում ընդօրինակում էին իրենց բրիտանական «ընկերակիցներին»: Օրինակ՝ 1850 թ.-ին Ավստրալիայում հիմնադրված առաջին՝ Սիդնեյի համալսարանը *(University of Sydney)* նույնիսկ մասնաշենքերի ճարտարապետական լուծումներով փոխառնել է Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարանների շինարարական նախագծերը:

Ընդօրինակումների շարքը շարունակվել է մինչև նախորդ դարի 60-ական թվականները, և միայն 90-ականներին հիմնադրված կրթօջախները «համարձակվեցին» նոր շունչ ու ազգային ոգի հաղորդել կրթության և ուսուցման համակարգի գործառույթներին, թեև «ազգային ոգի» հասկացությունը շատ հարաբերական է, քանի որ ժամանակակից Ավստրալիայի բնակչությունը ձևավորվել է տարբեր հավատքի ու ազգերի ներկայացուցիչների միախառնումից: Այսօրվա Ավստրալիայի կրթական համակարգում կարելի է առանձնացնել հետևյալ ենթահամակարգերը.

1. Նախադպրոցական կրթություն **(Nursery education).** – նախատեսված է 2-4 տարեկան երեխաների համար:

2. Նախապատրաստական կրթություն **(Preschool education).** – նախատեսված է 5 տարեկան երեխաների համար:

3.Տարրական կամ նախնական կրթություն **(Primary education).** – նախատեսված է 6-12 տարեկան երեխաների համար:

4.Միջնակարգ կրթություն **(Secondary education).** – նախատեսված է 13-18 տարեկան պատանիների ու աղջիկների համար:

5.Բարձրագույն կրթություն **(Higer education).** – նախատեսված է 18 տարեկանից բարձր երիտասարդների և մեծահասակների համար:

Կրթության և ուսուցման հետ առնչվող հարցերը կանոնակարգվում են Կրթության մասին նահանգային ու տարածքային օրենսդրական ակտերով, որոնք բխում են Դաշնային (Ֆեդերալ) օրենքի պահանջներից: Ավստրալիայի կրթական համակարգի առանցքը կազմում են 40 համալսարանը (38 պետական, 2 ոչ պետական), 550 լեզվի (անգլերենի) ուսուցման կենտրոնը, մոտավորապես 1450 քոլեջը (500 պետական, 950 ոչ պետական), 6000-ին մոտ հանրակրթական ցերեկային ու գիշերօթիկ դպրոցը, 350-ից ավելի մանկապարտեզն ու 400 նախակրթարանը:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ավստրալիայում նախադպրոցական կրթությունն առանձնապես զարգացած չէ, հետևաբար, չունի ձևավորված ավանդույթներ, քանի որ ավստրալացիների ճնշող մեծամասնությունը 2-4 տարեկան երեխաների համար վարձում է տնային դայակ, ում աշխատանքային պարտականությունները սահմանում է Աշխատանքի նախարարությունը: Վերջին տասը տարում Ավստրալիայում հիմնադրվել են մի քանի տասնյակ ոչ պետական գեղագիտական կենտրոն, որոնք զբաղվում են նախադպրոցական տարիքի մանուկների խմբակային դաստիարակությամբ: Անհամեմատ ավելի կայացած է նախապատրաստական կրթահամակարգը, որը թեև պարտադիր չէ, սակայն տարեցտարի մեծացնում է իր պահանջվածությունը՝ տևելով ուսումնառության ընդամենը մեկ տարի *(preparatory year),* գործելով հանրակրթական դպրոցներին կից, շաբաթական 5 օր և 25-30 ժամ ծանրաբեռնվածությամբ:

Ավստրալիայի հանրակրթական ցերեկային և գիշերօթիկ դպրոցներում ուսումնական տարին սկսվում է փետրվարի վերջից կամ մարտ ամսվա սկզբից՝ տարանջատվելով 12-ական շաբաթ տևողությամբ 4 քառորդի, որոնց միջակայքներում աշակերտներին տրվում է կարճատև հանգստի հնարավորություն: Բոլոր հանրակրթական հաստատությունները պարտադիր կարգով գրանցվում են նահանգային կամ տարածքային կրթության նախարարությունների կողմից՝ անցնելով հավատարմագրման գործընթաց, որը հիմք է հանդիսանում համապատասխան ֆինանսական օժանդակության: Բացի այդ, հանրակրթական ուսումնական հաստատությունները Դաշնային Կառավարությունից ստանում են լրացուցիչ ֆինանսական օգնություն՝ ըստ նախապես ներկայացրած զարգացման ծրագրերի ու հայտերի, որոնք պետք է լինեն առավելագույնս հիմնավորված: Ինչպես Մեծ Բրիտանիայում կամ Ֆրանսիայում, այստեղ ևս գործում են երկսեռ-համատեղված *(co-educational* կամ *co-ed)* և միասեռ -տարանջատված, այսինքն՝ միայն աղջիկների *(girls schools)* ու միայն տղաների *(boys schools)* համար նախատեսված դպրոցներ և գիշերօթիկներ:

Ավստրալացի մասնագետների ուսումնասիրությունները վկայում են, որ միասեռ դպրոցների առավելություններն ավելի ակնառու են, քան դրանց հնարավոր թերությունները: Միասեռ դպրոցների նպատակահարմարությունը պատճառաբանվում է այն իրողությամբ, որ նույն տարիքի տղաներն ու աղջիկները տարբեր կերպ են հաղթահարում ֆիզիկական, մտավոր և հոգեբանական հասունացման ու զարգացման փուլերը, ինչն առաջ է բերում որոշակի կաշկանդվածություն: Բացի այդ, նմանատիպ դպրոցներում աշակերտները չեն քաշվում զբաղվել այնպիսի աշխատանքային գործառույթներով, որոնք երկսեռ դպրոցներում կարող էին ընկալվել իբրև «զուտ տղամարդու» կամ «զուտ կանացի» պարտականություններ:

Թերությունների շարքում հիմնականը միջսեռային հարաբերությունների բացակայությունն է և դրանով պայմանավորված հաղորդակցվելու դժվարությունը: Սակայն հոգեբաններն ու մանկավարժները գտնում են, որ հիմնահարցի լուծման համար կարելի է կազմակերպել տարատեսակ համատեղ միջոցառումներ՝ ինտելեկտուալ խաղեր և մրցույթներ, քննարկումներ, համերգներ, տոնական հանդիսություններ ու ցերեկույթներ, էքսկուրսիաներ, փոխայցելություններ, բազմաբովանդակ սեմինարներ: Ընդհանուր առմամբ, երկսեռ և միասեռ դպրոցների թվաքանակների հարաբերակցությունը 1:2-ի է, իսկ առանձին նա-

հանգներում 2:3-ի (Քվինսլենդ, Հարավային Ավստրալիա) կամ 1:4-ի է (Վիկտորիա, Թասմանիա):

Միևնույն դպրոցի շրջանակում ձևավորվում են ցերեկային, երկարօրյա և գիշերօթիկ ուսուցման դասարաններ: Ցերեկային ուսուցման դասարաններն առավելապես նախատեսված են ավստրալացիների, իսկ երկարօրյա և գիշերօթիկ դասարանները՝ օտարերկրացիների համար:

Ավստրալիայում հանրակրթության տևողությունը ***13 տարի*** է, որից ***պարտադիր է 12-ամյա*** շրջափուլը, իսկ վերջին՝ 13-րդ ուսումնական տարվա ուսումնառությունը թողնվում է աշակերտների և նրանց ծնողների հայեցողությանը: 12-ամյա հանրակրթությունը բաժանվում է երկու ենթափուլի՝ տարրական ***(Primary Schooling)*** և միջնակարգ ***(Secondary Schooling),*** որոնց համակցված դասընթացն ավարտելուց հետո, երբ հաջողությամբ հաղթահարվում են ավարտական քննությունները, աշակերտներին տրվում է հասունության վկայական (ատեստատ), որն Ավստրալիայում անվանում են «Ավստրալական 12 տարի» ***(Australian Year 12),*** ինչը համարժեք է բրիտանական միջնակարգ կրթության «Ա» մակարդակին ***(A -level):***

ՏԱՐՐԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ավստրալիայում տարրական հանրակրթությունն (տարրական դպրոցն) ընդգրկում է ուսումնառության ***6 (1-6 դասարաններ՝ 6-11 տարեկանների համար)*** կամ ***7 (1-7 դասարաններ՝ 6-12 տարեկանների համար) տարի՝*** կախված նահանգի (տարածքի) Կրթության մասին օրենքի պահանջներից: Հանրակրթական բոլոր առարկաները դասավանդվում են միևնույն ուսուցչի կողմից, սակայն որոշ հատուկ դասընթացների համար հրավիրվում են մասնագետ-մանկավարժներ: Եթե դասարանում ի հայտ են գալիս ֆիզիկապես ետ մնացողներ կամ ակադեմիական խնդիրներ ունեցող աշակերտներ, ապա նրանց առջև ծառացած դժվարությունները հաղթահարելու նպատակով ձևավորվում են լրացուցիչ դասընթացների խմբեր և հատուկ կրթության դասարաններ, որտեղ դասավանդում են որոշակի վերապատրաստում անցած մանկավարժներ:

Աշակերտների ծնողներն ամեն ուսումնական տարվա ընթացքում, յուրաքանչյուր քառորդի ավարտին հրավիրվում են դպրոց՝ ծնողխորհրդի և մանկավարժական անձնակազմի հետ հանդիպման, որտեղ ծանոթանում են իրենց երեխաների ուսման առաջադիմության արդյունքներին, ընթացիկ առաջխաղացման միտումներին, կարողությունների և հմտությունների ձևավորման արդ-

յունավետությանը, հոգեբանական կամ այլ կարգի դժվարությունների դրսևորման նախանշաններին, համադասարանցիների ու հասակակիցների հետ հաղորդակցվելու արձանագրված արգելքներին և դրանց հաղթահարմանն անհրաժեշտ միջոցներին ու միջոցառումներին:

Նկ. 16. Ավստրալական հանրակրթական դպրոցներում աշակերտներն ամենօրյա ուշադրության և հոգածության կենտրոնում են:

ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Միջնակարգ կրթությունն Ավստրալիայում (միջին և ավագ դպրոցները) ընդգրկում է ուսումնառության *6 (7-12 դասարաններ՝ 12-17 տարեկանների համար)* կամ *5 (8-12 դասարաններ՝ 13-17 տարեկանների համար) տարի:* Յուրաքանչյուր աշակերտ 10-րդ դասարանն ավարտելուց հետո ձեռք է բերում *ընդհանուր միջնակար· կրթություն* և իր ցանկությամբ կարող է ընդհատել հանրակրթության սեփական ուսումնառությունը: Ավստրալիայի հանրակրթական դպրոցներին զուգընթաց մեծ հաջողությամբ միջնակարգ կրթական ծրագրեր են իրականացվում նաև քոլեջներում, որտեղ հանրակրթական պարտադիր առարկաներից բացի ուսուցանվում են տարբեր մասնագիտություններ և մասնագիտացումներ: Ավստրալիայում առանձնացվում են *կրտսեր քոլեջներ (Senior secondary school)՝* 7-8 –րդից մինչև 10-րդ դասարաններով և *բարձրա-*

·ույն քոլեջներ (Higer secondary school)՝ 11-12-րդ դասարաններով: Բարձրագույն քոլեջներում ուսումնառությունն ընթանում է հատուկ դասընթացներով *(Key Learning Areas),* որոնցից բացի առաջարկվում են նաև լրացուցիչ կամ այլընտրանքային դասընթացներ: Վերջիններիս ծրագրային և բովանդակային առանձնահատկությունները խստագույնս համապատասխանեցվում են ազգային ուսումնական ծրագրերի համակարգին ու *որակավորումների ազ·ային շրջանակին (Australian Qualification Framework - AQF),* որը ներառում է միջնակարգ, տեխնիկամասնագիտական և բարձրագույն կրթական համակարգերը՝ կազմված լինելով որակավորումների 13 մակարդակից:

Միջնակարգ ուսումնական հաստատություններն իրենց գործառույթները կազմակերպում են այնպիսի սկզբունքով, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ հնարավորություն ունենա զարգացնել սեփական մտավոր, աշխարհայացքային, ստեղծագործական կարողությունները, հասարակական ինքնագիտակցությունը, առաջադիմության և առաջխաղացման ներքին ռեսուրսները՝ առերևույթ չերևացող, թաքնված հնարավորությունների ներուժը:

Ավստրալիայում գործող 1450 պետական և ոչ պետական քոլեջներից բացի, գոյություն ունեն հատուկ նշանակության՝ միջազգային կրտսեր ու բարձրագույն քոլեջներ, որոնք առաջնորդվում են Միջազգային Բակալավրիատի համար մշակված ծրագրով *(Internatonal Baccalaureate - IB),* ինչը հետագայում հնարավորություն է տալիս ընդունվել ոչ միայն Ավստրալիայի, այլև Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի կամ խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ցանկացած բուհ: Բուհական կրթություն ստանալու համար պարտադիր է բարձրագույն քոլեջի ավարտական վկայականի *(Higt Certificate)* առկայությունը, իսկ կրտսեր քոլեջի ավարտական վկայականը *(Senior Certificate)* դեռևս բավարար չէ, սակայն հնարավորություն է տալիս ընդգրկվել միջնակարգ մասնագիտական կրթական որևէ ծրագրում *(Technical and Further Education -TAFE).*

Բարձր վարկանիշ ունեցող քոլեջների շարքում առանձնանում է դեռևս 1906 թ.-ին հիմնադրված ու երիցական եկեղեցու կողմից հովանավորվող Սիդնեյի միասեռ (միայն տղաների համար) *Սքոթ – քոլեջը (Scott College),* որտեղ բոլոր ուսանողները կրում են մուգ կապույտ համազգեստ և պարտադիր կարգով հաճախում են երգչախմբային պարապմունքների՝ անկախ կրոնական հավատքից ու հայացքներից: Այստեղ է գտնվում Ավստրալիայի ամենաբարձր հեղինակություն վայելող բիզնես - դպրոցը՝ *Հոլմս –քոլեջը (Holmes College),* որը հայտնի է անգլերենի 6 - ամյա նախապատրաստական դասընթացների բարձր արդյունավետությամբ, մաթեմատիկայի դասավանդման առանձնահատուկ

մեթոդաբանությամբ, ձեռնարկատիրական գործառույթների գործնական ուսումնառությամբ և շուկայի պահանջարկի գնահատման սկզբունքների խորքային ուսուցմամբ:

Սակայն Ավստրալիայի խոշորագույն քաղաքը՝ Սիդնեյը, մասնագիտական կրթության տրամադրման տեսանկյունից, հատկապես եվրոպացիներին, հայտնի է իր ***Շուկայավարության Միջազ·ային քոլեջով,*** որի ուսումնական մասնաշենքերից մեկը հիշեցնում է հեքիաթային դղյակ:

Այստեղ սովորում և բնակվում է ավելի քան 5000 ուսանող՝ աշխարհի 16 երկրից: Քոլեջը սերտորեն համագործակցում է Շվեյցարիայի ***Կեսար Ռիթց*** և ԱՄՆ-ի ***Մաքքուորի*** համալսարանների հետ՝ բազմիցս հաղթող շանաչվելով համաավստրալական միջքոլեջային մրցույթներում, մասնավորապես, զբոսաշրջության կառավարիչների, ապրանքագետների, ծրագրավորողների ու արտադրության պլանավորողների պատրաստման բարձր որակով և համապատասխան մասնագիտություններով շրջանավարտների աշխատանքի տեղավորման գրեթե 100 %-անոց ցուցանիշով:

Ավստրալական դպրոցներ ընդունվել ցանկացողների համար նախապայմանները բավականաչափ հեշտացված են: Անհրաժեշտ է ներկայացնել վերջին երկու տարվա հանրակրթության արդյունքները վավերագրող առարկաների և դրանց տարեկան գնահատականների կարգացուցակ՝ դրսևորելով դպրոցական մակարդակով անգլերենի իմացություն: Լեզվի ոչ բավարար իմացությամբ աշակերտների համար կազմակերպվում են շաբաթական լրացուցիչ դասընթացներ: Ներկայացնենք Ավստրալիայի մի քանի հեղինակավոր հանրակրթական հաստատությունների գործունեության համառոտ նկարագիրը:

St. Paul's School, Brisbane

Սբ. Պաուլի անվան ցերեկային ուսուցման երկսեռ դպրոցը հիմնադրվել է 1961 թ.-ին Բրիսբեն քաղաքում՝ նախընտրելով իր համար գործունեության "Fide et Literis" կոչը, որը հայերեն թարգմանաբար նշանակում է «Հավատքով և Գիտելիքով »: Ներկայումս դպրոցն ունի 1500 աշակերտ և իրականացնում է տարրական ու լրիվ միջնակարգ հանրակրթական ծրագրեր: Գործում են նաև ավագ դպրոցի ընդունելության նախապատրաստական դասընթացներ:

Նկ. 17. Ավստրալիայի մասնագիտական կրթության խոշորագույն կենտրոնը Սիդնեյն է՝ իր Սքոթի, Հոլմսի, Շուկայավարության Միջազգային և այլ քոլեջներով:

The Pittwater House Schools, Sydney

Կրթական այս համալիրը հիմնադրվել է 1962 թ.-ին, Ավստրալիայի խոշորագույն Սիդնեյ քաղաքում: Ունի ինչպես միասեռ, այնպես էլ երկսեռ դասարաններ՝ տարրական, ընդհանուր միջնակարգ և լրիվ միջնակարգ հանրակրթությամբ: Աշակերտների թվաքանակն անցնում է 800 մարդուց, որի 30%-ն օտարերկրացիներ են, ինչպես Եվրոպայից, այնպես էլ Հարավային Աֆրիկայից, Բրազիլիայից ու Ֆիլիպիններից: Դպրոցում մեծ տեղ է հատկացվում կիրառական գիտությունների խորացված ուսուցմանը: Այդ նպատակով ստեղծված են ուսումնամեթոդական և ուսումնանյութական հագեցաց լաբորատորիաներ: Բոլոր աշակերտներն ապահովված են իրենց կցված անհատական համակարգիչներով: Դպրոցին կից գործում են բաց մարզադաշտը, լողավազանը, բասկետբոլի խաղասրահը, թենիսի դաշտերը:

John Paul International College, Logan

Ջոն Պոլի անվան միջազգային երկսեռ քոլեջը հիմնադրվել է 1982 թ.-ին, Բրիսբենի Լոգան արվարձանային բնակավայրում, որտեղ ներկայումս սովորում է 2500 աշակերտ: Բացի լսարանային մասնաշենքերից, ունի նաև բնագիտական առարկաների համար նախատեսված լաբորատորիաներ, համակարգչային դասասենյակներ, արվեստների ստուդիա, ձեռագործության արհեստանոց, գեղանկարչության արվեստանոց, մարզասրահ և մարզադահլիճ, լողավազան, ժամանակակից պարերի ուսուցման կենտրոն: Քոլեջն անչափ կարևորում է աշակերտների ծնողների հետ համագործակցությունն ու ավստրալական և օտարերկրյա ընտանեկան ավանդույթները: Կրթօջախն Ավստրալիայում մեծ հեղինակություն է վայելում իր ներքին կարգապահությամբ, մանկավարժների մասնագիտական բարձր որակավորմամբ, ուսուցման գործընթացում նորագույն տեխնոլոգիաների ներդրման արդյունավետությամբ: Շրջանավարտների 75%-ն ուսումնառությունը շարունակում է բուհերում, իսկ ընդհանուր առմամբ, քոլեջն ավարտողների 98%-ն աշխատանքի է տեղավորվում ավարտական քննություններին հաջորդող երեք ամսվա ընթացքում:

Prince Alfred College, Adelaide

Ադելաիդայի Արքայազն Ալֆրեդի անվան միասեռ՝ տղաների համար նախատեսված քոլեջը հիմնադրվել է 1869 թ.-ին, որտեղ ներկայումս սովորում է 4-18 տարեկան ավելի քան 1000 տղա: Քոլեջում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում սովորողների ստեղծագործական մտածողության և հետազոտական ունակությունների ձևավորման զարգացմանը: Կից գործող հանրակացարանը տեղավորում է 110 ուսանող: Բոլոր սովորողներն ուսումնասիրում են անգլերեն լեզու և գրականություն, ֆրանսերեն, իսպաներեն կամ չինարեն, տնտեսագիտություն, աշխարհագրություն ու տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետում և կիրառում (ինֆորմատիկա), ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, բարձրագույն մաթեմատիկա:

Ավստրալիայի քոլեջների ուսման վարջավճարները Աղյուսակ 1.

Դ պ ր ո ց ը	Ք ա ղ ա ք ը	Դպրոցի տեսակը	Ուսման վարձավճարը ողջ դասընթացի համար՝ ավստրալական դոլար / 1 ավստ.դ= 0,75 ԱՄՆ դոլ./	
			Հանրակացարան (ուսուցում + բնակություն)	Ընտանիք (ուսուցում)
Prince Alfred College	Ադելաիդա	տղաների համար	36 600	21 800
The Pittwater House Schools	Սիդնեյ	երկսեռ	չկա	27 800
John Paul International College	Լոգան	երկսեռ	չկա	17 300
St. Paul's School	Բրիսբեն	երկսեռ	չկա	16 900

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ (ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (ՏԵԼԿ - TAFE)

Թեև տեխնիկական և լրացուցիչ մասնագիտական կրթություն այսուհետ (*ՏԵԼԿ* մակարդակ կամ համակարգ) կարելի է մասնակիորեն ձեռքբերել ավագ դպրոցում ու բարձրագույն քոլեջում, այնուամենայնիվ Ավստրալիայի մասնագիտական կրթության և ուսուցման (*ՄԿՈՒ - VET*) համակարգի կառուցվածքն այնպիսին է, որ օտարերկրացի սովորողներն առանց էական բարդությունների ընդգրկվում են ավստրալացիների հետ իրավահավասար հիմունքներով կազմակերպվող մասնագիտական դասընթացներում՝ նախապես ուսումնառելով լեզվական դպրոց-կենտրոններում *(English Language Intensive Courses to Overseas Student - ELICOS)* կամ նախապատրաստական բաժանմունքներում *(Courses Foundation):* Նախապատրաստական դասընթացները որոշակի առումով փոխարինում են բարձրագույն քոլեջին, սակայն կարելի է նաև երկամյա ուսումնառությունն ավարտել արագացված կարճաժամկետ ծրագրով *(Fast - Tract)*՝ ընդամենը մեկ տարում:

ՏԵԼԿ - ն *(Technical and Further Education- TAFE)* Ավստրալիայի ամենախոշոր կրթական միավորումն է, որը մատուցում է բազմագործառութային ծառայություններ՝ առաջարկելով բավականաչափ լայն շրջանակով դասընթացներ. հաշվապահական գործից մինչև հյուրանոցային կառավարում (մենեջմենթ), դիզայներական գործից մինչև արտադրության շուկայաբանություն (մարքեթինգ): ՏԵԼԿ-ն իրականացնում է ոչ միայն մասնագիտական ուսուցում և հանրակրթու-

թյուն, այլև տրամադրում է վերապատրաստման, որակավորման ու վերավորակավորման դասընթացներ բոլորի, այդ թվում նաև մեծահասակների համար: Երկարաժամկետ և կարճաժամկետ դասընթացները ներկայացնում են բազմաստիճան, որոշակիորեն ինքնուրույն ու իրարից անկախ ուսումնական գործընթացներ՝ յուրաքանչյուր ավարտական փուլի (մակարդակի) համար նախատեսելով համապատասխան մակարդակի (I, II, III և IV) վկայագրի շնորհում: Ավստրալիայի ՏԵԼԿ համակարգի շուրջ 250 ինստիտուտում ամեն տարի կազմակերպվող ընդունելության արդյունքներով ուսանողի կարգավիճակ է ձեռքբերում ավելի քան 1 մլն. մարդ, որից 40 000–ից 45 000–ն՝ օտարերկրացի: ՏԵԼԿ կառույցի ներդրման և զարգացման գործում մեծ աջակցություն են ցուցաբերում Ավստրալիայի ու խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի մի շարք երկրների գործարար և արդյունաբերող շրջանների շահառուները:

Նկ.18. Ավստրալիայի նոր սերնդի քոլեջները: Թեյլոր քոլեջը: Շաֆսթոն քոլեջը: Պերտի առևտրի քոլեջը:

ՏԵԼԿ համակարգն ավարտողներին շնորհվում է մասնագիտական որակավորման վկայագիր կամ դիպլոմ, որը հնարավորություն է տալիս ընդունվել Ավստրալիայի ցանկացած համալսարան: ՏԵԼԿ ուսումնական հաստատությունների և համալսարանների միջև կնքված երկկողմ պայմանագրերի համաձայն՝ ՏԵԼԿ-ի վկայագիրը (դիպլոմը) փոխարինում է համալսարանական կրթության ուսումնական մեկ տարվան, այսինքն՝ ՏԵԼԿ-ի շրջանավարտները ցանկության դեպքում միանգամից ընդունվում են պայմանագրի կողմ հանդիսացող համալսարանի երկրորդ, իսկ առանձին դեպքերում՝ երրորդ կուրս: ՏԵԼԿ

ուսումնական հաստատություններում ուսանողական խմբերը (կուրսերը) կազմված են 15-30 հոգուց: Դասավանդման ընթացքում կիրառվում են դասախոսություններ, սեմինարներ, գրավոր ստուգողական աշխատանքներ, ռեֆերատներ, կարճաժամկետ թեստային ստուգարքներ, բանավոր հաղորդագրություններ, գործնական նախագծերի մշակումներ, անհատական կամ խմբակային նորարարական մտահղացումներ: ՏԵԼԿ-ը բակալավրի կոչում չի շնորհում, սակայն լուրջ նախապայման է այդպիսին ունենալու ճանապարհին, եթե հաջողությամբ հաղթահարվում է համալսարանական կրթության երկու տարվա ուսումնառությունը:

ՏԵԼԿ համակարգի անբաժան մասն են կազմում լեզվի ուսուցման դպրոցներն ու կենտրոնները, որոնք առաջարկում են անգլերենի տիրապետման տարբեր ծրագրեր.

1. ընդհանուր անգլերեն. - General English, GE.
2. բիզնես - անգլերեն. - English for Business Purposes, EBP.
3. ակադեմիական անգլերեն. - English for Academic Purposes, EAP.
4. IELTS քննության նախապատրաստման անգլերեն. - IELTS Preparation.
5. համալսարանական ընդունելության անգլերեն. - University Direct Entry Programme.

Անգլերենի ուսուցման կենտրոնների ուսումնամեթոդական հագեցվածության և դասավանդման որակը գտնվում են պետական վերահսկողության ներքո՝ առաջնորդվելով օտարերկրացի սովորողների արագացված դասընթացների ու հարակից ծառայությունների հավատարմագրման Ազգային Համակարգի սկզբունքային պահանջներով *(Hational ELICOS Accreditation Scheme - NEAS):* Անգլերենի դասավանդման ցանկացած ուսումնական հաստատություն կամ կենտրոն պարտավոր է անցնել պետական հավատարմագրման հաստատված կանոնակարգով գործընթաց, ինչը վկայում է պետության, վերահսկողական կառույցների և ուսումնական հաստատությունների սոցիալական սերտ գործընկերության մասին: Անգլերենի դասավանդման ուսումնական շաբաթը կազմված է 25 դասաժամից, որից 20 դասաժամն ունկնդիրներն անցկացնում են դասասենյակում (լսարանում), իսկ 5 դասաժամ հատկացվում է դասավանդողների անմիջական հսկողությամբ ընթացող ինքնուրույն պարապմունքներին: Կախված ունկնդիրների ընտրած մասնագիտությունից, լեզվական դասընթացի ծրագրից և նախնական անձնական պատրաստվածության մակարդակից, դասընթացները տևում են 4-ից 10 շաբաթ:

Մակար-դակը	*Կրթական համակար·ը*	*Սովորողնե-րի տարիքը*	*Ուսումնառության տևողությունը*	*Ուսումնառության արդյունքները վավերացնող փաստաթուղթը*
13	Հետբուհական կրթություն	30 տարեկան և ավելի բարձր	4 տարի և ավելի	Դոկտորանտուրա. գիտությունների դոկտորի դիպլոմ
12		25 - 29	2 – 4 տարի	Ասպիրանտուրա. գիտնական-հետազոտողի հավատարմագիր
11	Բարձրագույն մասնագի-տական կրթություն	23 - 25	1 – 1,5 տարի	Մագիստրատուրա. մագիստրոսի դիպլոմ
10		18 - 22	3 – 4 տարի	Բակալավրիատուրա. բակալավրի վկայական
9	Միջին մասնագի տական կրթություն	18 - 21	2,5 – 3 տարի	Առաջանցիկ դիպլոմ
8		18 - 20	1,5 – 2 տարի	Դիպլոմ
7	Ընդհանուր մասնագի-տական կրթություն	18 - 20	1 – 2 տարի	4-րդ մակարդակի վկայական
6		16 - 17	6 – 10 ամիս	3-րդ մակարդակի վկայական
5		15	4 – 8 ամիս	2-րդ մակարդակի վկայական
4		15	3 – 4 ամիս	1-ին մակարդակի վկայական
3	Լրիվ միջնակարգ կրթություն	16- 18	2 տարի	Հասունության վկայական (ատեստատ)
2	Ընդհանուր միջնակարգ կրթություն	13 - 15 կամ 12 - 15	3 - 4 տարի	Առարկայական դասընթացների ամփոփիչ գնահատականների կարգացուցակ
1	Տարրական կրթություն	6 - 12	6 - 7 տարի	Գնահատականների կարգացուցակ
-	Նախնական կրթություն	5 - 6	1 տարի	- - - - -
-	Նախակրթութ-յուն. մանկապար-տեզ	3 - 5	մինչև 3 տարի	- - - - -

Նկ.19.Ավստրալիայի կրթական համակարգի կառուցվածքի գծապատկերը:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բարձրագույն կրթական համակարգը միջանկյալ դիրք է գրավում ՏԵԼԿ և հետբուհական համակարգերի միջև՝ ընդգրկելով *40* համալսարան (*38* պետական ու *2* ոչ պետական): Ավստրալացի դիմորդներն անպայմանորեն պետք է ունենան լրիվ միջնակարգ՝ 12-ամյա կրթություն և համապատասխան ավարտական վկայական կամ ՏԵԼԿ համակարգի 4-րդ մակարդակի վկայական: Օտարերկրացի դիմորդներից լրացուցիչ պահանջվում են նախապատրաստական 1 տարի տևողությամբ դասընթացի ավարտական վկայական, որի ընթացքում ապագա ուսանողները ձեռք են բերում խորացված գիտելիքներ և հմտություններ՝ հարմարվելով իրենց համար անսովոր ուսանողական կյանքի պայմաններին ու պահանջներին, ինչպես նաև անգլերենի իմացության համապատասխան վկայագիր: Ուսումնառության այդ մեկ տարում պաշտոնապես ամրագրված քննություններ չեն անցկացվում, սակայն համալսարան ընդունվելու համար խիստ կարևոր է ունենալ նախապատրաստական դասընթացի դասավանդող-մանկավարժների կողմից ձևակերպված երաշխավորագիր: Նախապատրաստական դասընթացների ունկնդիրները հավաքագրվում են ըստ մասնագիտական, նախընտրելի ակադեմիական (պարտադիր) առարկաների և անգլերենի իմացության մակարդակի հոսքերի: Բացի ակադեմիական առարկաներից, հնարավորություն է տրվում ընտրել ևս 2-3 դասընթաց՝ ըստ նախասիրությունների: Դասախոսություններն ընթանում են 40-50 հոգանոց խմբերով, իսկ սեմինար և գործնական պարապմունքները նախատեսված են 5-10 հոգանոց խմբերի համար: Նախապատրաստական դասընթացներում ընդունելությունը կազմակերպվում է տարին երկու անգամ՝ հունվար-փետրվար և մայիս-հունիս ամիսներին:

Ավստրալիայի ժամանակակից բարձրագույն կրթական համակարգում ներգրավված է ավելի քան *650 հազար* ուսանող, որից *80 000-ն՝ օտարերկրացի*: Ուսանողների կեսից ավելին ուսումնառություն է ստանում ցերեկային ուսուցման բաժանմունքներում: Համալսարանական մասնագիտություններից վարկանիշային առումով առաջատար դիրք են զբաղեցնում շուկայավարությունը, գործարար կառավարումը, ձեռնարկատիրությունը և ընդհանուր տնտեսագիտությունը, որոնց մի փոքր զիջում են բնագիտական ու հումանիտար ուղղվածությամբ մասնագիտությունները և արվեստի ոլորտները: Համալսարանական ուսումնական տարին տևում է փետրվարից մինչև նոյեմբեր (նկատի ունե-

նանք, որ հարավային կիսագնդի երկրներում ամառային ամիսներ են դեկտեմբերը, հունվարը և փետրվարը)՝ բաժանվելով երկու կիսամյակի: Բացառություն է կազմում ոչ պետական ***Բոնդի համալսարանը***, որը հիմնադրվել է 1987 թ.-ին, ավստրալացի միլիոնատեր Ջ. Բոնդի կողմից, Քվինսլենդի նահանգի Գոլդ Քոսթ քաղաքում: Ուսումնական տարին այստեղ կազմված է 3 ***եռամսյա տրիմեստրից***՝ առաջարկելով 54 ուսումնական ծրագիր: Ի տարբերություն Ավստրալիայի մյուս համալսարանների, Բոնդի հիմնադրած կրթօջախում բակալավրի կոչման համար նախատեսված ուսումնառությունը խտացված է երկու տարվա մեջ (6 եռամսյակ կամ տրիմեստր):

Նկ.20. Ավստրալիայի բարձրագույն կրթական հաստատությունների առաջատարները՝Բոնդի, Սիդնեյի, Բրիսբենի համալսարանները:

Ավստրալիայի համալսարաններն, առանց բացառության, ունեն ցերեկային, երեկոյան և հեռակա ուսուցման բաժիններ, առաջարկում են բակալավրական, մագիստրատական ու ասպիրանտական ծրագրեր: Ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունմանը հատկացվում է 4-5 շաբաթ՝ սեպտեմբերից-հոկտեմբեր կամ մայիսից-հունիս ամիսներին: Համալսարաններն էապես տարբերվում են իրարից և՛ տեղադիրքով, և՛ չափերով, և՛ ուսանողության թվաքանակով, և՛ մասնագիտական թեքումով: Համալսարանական կրթության արդյունքներով կարելի է ձեռքբերել գիտական աստիճան կամ դիպ-

լոմ: Առաջին 2-3 տարվա ուսումնառության արդյունքներով հնարավոր է ստանալ *բակալավրի աստիճան*, առաջանցիկ բարձրագույն դիպլոմ (*Advanced Diploma*) կամ սովորական դիպլոմ: Բակալավրի աստիճանը հաղթահարելուց հետո հնարավորություն է տրվում մեկ կիսամյակի ուսումնառության արդյունքներով հավակնել *մա·իստրոսի վկայականի*, իսկ երկու կիսամյակի արդյունքների հիման վրա՝ *մա·իստրոսի դիպլոմի*: Ի դեպ, բակալավրի աստիճանի շնորհումը, կախված դասընթացի բովանդակությունից, կարող է ներառել մինչև 6 տարվա ուսումնառութուն (բժշկական մասնագիտությունների բնագավառում), իսկ մագիստրոսի դիպլոմը նախատեսում է գիտական թեզի պաշտպանություն: Գիտությունների դոկտորի *(PhD)* աստիճանը բարձրագույն և հետբուհական կրթական համատեղ համակարգերում ամենաբարձրն է: Այն ներառում է մագիստրոսի դիպլոմի պարտադիր առկայություն և նվազագույնը երեք տար-վա գիտահետազոտական աշխատանքների անցկացում ու դրանց արդյունքների մշակում:

Ավստրալիայի համալսարաններում թեև ընդունելության քննություններ չեն անցկացվում, սակայն առաջնային պահանջ է անգլերենի իմացությունը, որն ամբողջացվում է *Միջազ·ային ան·լերենը որպես լեզվական թեստային համակար· (International English as Language Testing System - IELTS)* և *Ան··լերենի թեստը որպես օտար լեզու (Test of English as a Foreign Language - TOEFL)* թեստային համակարգներից դիմորդների ունեցած արդյունքներով: Օրինակ՝ ՏԵԼԿ համակարգի ուսումնական հաստատություններ ընդունվելու համար պահանջվում է IELTS-ի նվազագույնը 5-6 բալ, իսկ TOEFL-ի դեպքում՝ 500-550 միավոր: Համալսարաններում պահանջվում է ունենալ IELTS-ի 6,5 և ավելի բարձր բալ, իսկ TOEFL-ի համակարգով՝ 550-ից բարձր միավոր: Որոշ նեղ մասնագիտական կողմնորոշվածությամբ ծրագրերով ընդունելության դեպքում կարող է պահանջվել լրացուցիչ քննությունների հանձնում, ինչպես ասենք՝ *Շուկայավարության փոխճանաչման ավարտական թեստը (Graduate Management Admission Test - GMAT)* կամ *Ավարտական քննության վկայա·րումը (Graduate Record Examination -GRE):* Վերջին տասը տարում օտարերկրացի ուսանողների թվաքանակի միջին տարեկան աճը տատանվում է 10-13% սահմաններում, իսկ 2003-2008 թթ. ժամանակահատվածում այդ ցուցանիշը կրկնապատկվել է:

Եթե ամփոփենք վերոշարադրյալը, ապա կարող ենք արձանագրել, որ Ավստրալիայի բարձրագույն կրթական համակարգում իրականացվում են բուհական-ուսանողական *(undergraduate)* և հետբուհական-ասպիրանտական

(postgraduate, doctorate) ուսումնական ծրագրեր: Համալսարանական ուսումնառության մեկ ուսումնական տարին ընդգրկում է 39-40 շաբաթ, այն դեպքում, երբ ՏԵԼԿ համակարգում ուսումնական մեկ տարին տևում է 12-15 –ից մինչև 30-32 շաբաթ: Կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը ենթադրում է, որ ուսումնական մեկ կիսամյակը համարժեք է 4 առարկայական դասընթացի: Ուսումնառության արդյունքները գնահատվում են «ալֆա համակարգով» (A, B, C, D և այլն՝ դրական կամ բացասական նշանով) և քառաստիճան մակարդակների համադրությամբ, որոնց միջև համարժեքությունն արտահայտված է ստորև ներկայացվող աղյուսակում.

Ուսումնառության արդյունքների գնահատման սանդղակ Աղյուսակ 2.

Մակարդակ	% ընդհանուրից	ԱՄՆ համակարգին համարժեք
4= High Distinction- Բարձրակարգ առանձնահատուկ	85-100	A+
3 = Distinction- Առանձնահատուկ	75-84	A
2 = Credit – Հավաստի	65-74	B
1 = Pass- Անցողիկ	50-64	C
1~= Conceded Pass- Կիսաանցողիկ	47-69	D
0 = Fail – Ոչ անցողիկ, անբավարար	47 –ից պակաս	F

Համալսարանական ուսումնական տարվա կառուցվածքը: Սովորաբար, համալսարանական ուսումնական տարին կազմված է երկու կիսամյակից՝ 18-ական շաբաթ տևողությամբ (ընդամենը 36 շաբաթ)՝ ներառյալ յուրաքանչյուր կիսամյակի միջնամասում տրվող երկշաբաթյա ընդմիջումը, որոնց արանքում հատկացվում է 3 կամ 4 շաբաթ տևողությամբ դադար: Այսպիսով, ուսումնական տարին տևում է 39 կամ 40 շաբաթ՝ արձակուրդներին հատկացնելով 12-13 շաբաթ: Կիսամյակային 18 շաբաթից 16-ը նվիրվում է բուն ուսումնական գործընթացին, որից 13 շաբաթը՝ ուսումնակրթական խնդիրներին, իսկ 3 շաբաթը՝ նախաքննական վերապատրաստումներին ու խորհրդատվություններին: Կիսամյակային քննությունների արդյունքներն ամփոփվում են 3-4 շաբաթվա ընթացքում: Ընդունված է մեկ կիսամյակում ուսումնասիրվող ամենաքիչը 4 առարկայական դասընթացներից յուրաքանչյուրը գնահատել 3-6 միավորանոց

սանդղակով՝ կախված դասընթացի ժամաքանակից և բարդությունից: Կիսամյակային ուսումնառության ընթացքում ուսանողը պետք է նվազագույնը հավաքի 18 միավոր՝ յուրաքանչյուր դասընթացից միջինը 4,5 միավոր կուտակելով: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ուսումնական տարում ուսանողը պետք է հավաքի 36 միավոր, իսկ եռամյա կրթության ընթացքում՝ 108 միավոր: Ավելի ցածր միավորներ կուտակելու դեպքում ուսանողը վաստակում է «ակադեմիական պարտքեր», և եթե դրանք գերազանցում են ուսումնական տարվա ընդհանուր դասընթացի ծավալային առումով 20%-անոց թույլատրելի սահմանը, ապա ուսանողը դուրս է մնում համալսարանից՝ դադարեցնելով ուսումնառությունը: Որպես փոխհատուցում, ուսանողը ոչինչ չի ստանում, իսկ օտարերկրացի ուսանողներն անմիջապես զրկվում են կացության իրավունքից, Ավստրալիայում մնալու և աշխատելու որևէ հնարավորությունից:

Հեռավար ուսուցում: Ավստրալիան աշխարհի առաջին երկրներից մեկն է, որտեղ ավելի քան 35 տարի առաջ ներդրվել է հեռավար ուսուցման համակարգը, երբ կարելի էր չգտնվելով Ավստրալիայում՝ ձեռք բերել համալսարանական դիպլոմ, կուտակել նույնպիսի գիտելիքներ, հմտություններ և կարողություններ, ինչպես ասենք ցերեկային (առկա) ուսուցման պարագայում: Ընտրված համալսարանն ուսանողներին ապահովում է անհրաժեշտ դասագրքերով, տեսանյութերով, լրացուցիչ ձեռնարկներով, տարատեսակ ծառայություններով, առաջադրանքների ցանկով, թեստերով ու խորհրդատվությամբ: Հեռավար ուսուցման *(Distance Learning - DL)* բնագավառում առաջատարներից է ***Հարավային Քվինսլենդի համալսարանը,*** որի ծառայություններից օգտվում են Սինգապուրից մինչև Շվեդիա, Մալայզիայից մինչև Բրազիլիա:

Ավստրալիայի առաջատար համալսարանները:

1. Արևմտյան Սիդնեյի համալսարան. – Հիմնադրվել է 1989 թ.-ին, Սիդնեյում: Ունի 32 000 ուսանող: Իրականացնում է 100-ից ավելի ուսումնամասնագիտական ծրագիր:
2. Գրիֆֆիթի համալսարան. – Հիմնադրվել է 1971թ.-ին, Բրիսբենում: Ունի 24 000 ուսանող: Կից գործում են կոնսերվատորիայի, գրաֆիկական դիզայնի և ինքնաթիռաշինության բաժանմունքներ:
3. Մակքուորիի համալսարան. – Հիմնադրվել է 1967 թ.-ին, Սիդնեյում: Ունի 21 000 ուսանող: Գործում են լազերային ֆիզիկայի, իրավագիտության, մանկավարժության և ազգագրության բաժանմունքներ:

4. Նոր Հարավային Ուելսի համալսարան. – Հիմնադրվել է 1959 թ.-ին, Սիդնեյում: Ունի 34 000 ուսանող: Իրականացնում է 400-ից ավելի ուսումնակրթական ծրագիր:
5. Սիդնեյի համալսարան. – Հիմնադրվել է 1850 թ.-ին, Սիդնեյում: Ունի 35 000 ուսանող: Համագործակցում է աշխարհի շուրջ 60 համալսարանի հետ: Գործում են բժշկագիտության, ճարտարապետության, արվեստի բաժանմունքներ:

Առաջատար տասնյակի մեջ են մտնում նաև Ավստրալիայի Ազգային, Մելբուռնի, Ադելաիդայի, Բոնդի անվան և Պերտի համալսարանները: Ավստրալիայի կրթական համակարգն օտարերկրացիներին մատուցած ծառայություններից տարեկան ստանում է 14,5 մլրդ. ԱՄՆ դոլարի եկամուտ, որից շուրջ 6 մլրդ.-ը ներդրվում է կրթական ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերում: Կրթական ոլորտից ստացվող եկամուտների համախառն ծավալով Ավստրալիան աշխարհում զբաղեցնում է պատվավոր 3-րդ տեղը՝ ԱՄՆ-ից և Կանադայից հետո:

ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հարավային Կորեան՝ պաշտոնական անվանումը՝ Կորեայի Հանրապետությունը, որպես ինքնիշխան պետություն, կազմավորվել է 1948 թ.-ին, Արևելյան Ասիայում, Կորեա թերակղզու հարավային կեսում՝ զբաղեցնելով ***98 500 քառ. կմ*** մակերես: Բնակչության թվաքանակը կազմում է ***49 մլն. մարդ*** (2008 թ.), ուրբանիզացման մակարդակը՝ ***53%:***

Ինչպես արևելաասիական ցանկացած երկիր, Հարավային Կորեան, որպես կոնֆուցիական դավանանքի կրող, առանձնանում է պաշտոնակարգված (ֆորմալ) կրթական համակարգի յուրօրինակ պատմական անցյալով: Դարեր շարունակ տարրական կրթության համակարգը չէր արժանանում պետական մակարդակով ցուցաբերվող որևէ ուշադրության, սակայն ***Չոսոնների*** գերդաստանի իշխանության ժամանակաշրջանում (12-16–րդ դարեր) Սեուլում հիմնադրվեցին մի շարք կրթօջախներ, որոնք 16-րդ դարից սկսած փոխարինվեցին կիսակրոնական մշակութային ուսումնական հաստատություններով կամ «ակադեմիաներով» (կորեական տարբերակով՝ ***«սովոններով»***): Ուսումնառության ընթացքում սովորողներն ազատվում էին զինվորական ծառայությունից՝ օգտվելով բազմաթիվ արտոնություններից: 19-20-րդ դարերի սահմանագլխին հիմնադրվեցին ոչ պետական մի շարք դպրոցներ, որոնց զգալի մասը քարոզում էր քրիստոնեական արժեքներ՝ դրանով իսկ

նպաստելով ազգաբնակչության սեռական խմբերի միջև իրավունքների անիրավահավասարության հաղթահարմանը: Գտնվելով Ճապոնիայի գաղութային տիրապետության ներքո, 20-րդ դարի առաջին երկու տասնամյակի ընթացքում ստեղծվեցին հարյուրավոր հանրակրթական դպրոցներ, որոնցում դասավանդվում էին բացառապես տեխնիկական գիտելիքներ արմատավորող առարկաներ (մաթեմատիկա, ֆիզիկա, գծագրություն և այլն)՝ կորեացի և ճապոնացի սովորողների 40:60 տոկոսային հարաբերակցությամբ:

1945 թ.-ից, երբ Հարավային Կորեան զավթեցին ԱՄՆ-ի զինված ուժերը, հիմք դրվեց ամերիկյան կրթական համակարգի զարգացմանը, մասնավորապես, սահմանվեցին 6-ամյա տարրական դպրոցի, 6-ամյա միջին ու ավագ դպրոցների և 4-ամյա բարձրագույն կրթահամակարգի հիմնադրույթները՝ նախատեսելով 9-ամյա պարտադիր կրթություն: 1948-1990 թթ. ժամանակահատվածում երկսեռ կրթահամակարգը ներառում էր միայն տարրական դպրոցները, իսկ պարտադիր հանրակրթության վերին սահմանային նիշն իջեցվեց մինչև 6-րդ դասարան: 1990-91 թթ. իրականացվեցին մի շարք կրթական բարեփոխումներ, որոնց գլխավոր պատասխանատուն նոր լիազորություններով օժտված ***Կրթության Նախարարությունն*** էր: Շատերը հակված են այն տեսակետին, որ Հարավայի Կորեայի թռիչքային ձեռքբերումները տնտեսության, հատկապես, բարձր տեխնոլոգիաների բնագավառում կարելի է բացատրել մի քանի առանցքային հանգամանքով.

1. «մարդկային ռեսուրսների» զարգացման հարցում խելամիտ ներդրումային քաղաքականության իրագործում.
2. կրթված անձանց նկատմամբ հասարակական հարգանքի խիստ ընդգծված դրսևորում.
3. բարձրակարգ տնտեսագետների և տեխնոկրատների կարծիքի պետական մակարդակով արժևորում.
4. գրագիտության մակարդակի կտրուկ աճի ապահովում (1945թ. - 22%, 1970 թ.-88%, 1982 թ.-93%, 2008 թ. – 99, 5%):

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Կորեայի Հանրապետության ժամանակակից կրթական համակարգը բազմաստիճան կառույց է, որն ընդգրկում է .

1. Նախադպրոցական կրթություն (մանկապարտեզ). – 3-5 տարեկան երեխաների համար:

2. Տարրական հանրակրթություն (տարրական դպրոց). – 6-11 տարեկան երեխաների համար:
3. Ընդհանուր միջնակարգ հանրակրթություն (միջին դպրոց). – 12-14 տարեկան պատանիների և աղջիկների համար:
4. Լրիվ միջնակարգ հանրակրթություն (ավագ դպրոց). – 15-17 տարեկան պատանիների և աղջիկների համար:
5. Միջին մասնագիտական (քոլեջային) կրթություն. – 18-19 կամ 18-21 տարեկան երիտասարդների համար:
6. Բարձրագույն մասնագիտական (համալսարանական) կրթություն. – 18-21 տարեկան երիտասարդների համար:
7. Հետբուհական կրթություն (մագիստրատուրա, ասպիրանտուրա, դոկտորանտուրա). – 22 և ավելի բարձր տարիքի մարդկանց համար:

Հարավային Կորեայի կրթական համակարգի հիմքը կազմում են մոտավորապես 800 մանկապարտեզ, 5 500 տարրական դպրոց, 1 300 միջին դպրոց, 800 ավագ դպրոց, 175 պետական և 500-ից ավելի ոչ պետական (մասնավոր) քոլեջ, 190 պետական համալսարան ու մանկավարժական ինստիտուտ, ավելի քան 1200 ոչ պետական բուհ:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հարավային Կորեայում կրթության և ուսուցման հարցերով ներկայումս զբաղվում է «Կրթության նախարարության» փոխարեն վերակազմավորված «Կրթության և անձնակազմի կառավարման նախարարությունը»: Առաջին հայացքից ոչինչ չասող անվանափոխությունը պայմանավորված էր նրանով, որ 2001-2015 թթ. տնտեսական զարգացման քաղաքականության առաջնահերթությունների շարքում մեծ տեղ էր հատկացվում յուրաքանչյուր քաղաքացու որակյալ կրթությամբ ապահովելու ռազմավարական խնդիրներին, ինչի արդյունքում զգալիորեն ընդարձակվեցին ԿԱԿ նախարարի լիազորությունները՝ հավակնելով փոխվարչապետի իրավասություններին: Հավելենք, որ ԿԱԿ նախարարը նշանակվում է երկրի նախագահի կողմից, ոչ ավել, քան մեկ տարի ժամկետով:

Հարավկորեական նախադպրոցական հաստատություններ (մանկապարտեզներ) հաճախում են 3-5 տարեկան ոչ բոլոր երեխաները, քանի որ կորեական մանկապարտեզները չեն դիտվում, որպես ընդհանուր հանրակրթության պարտադիր ենթակառուցվածք, հետևաբար, ծնողներն իրենց զավակնե-

րի համար նախընտրում են ոչ պետական (մասնավոր) հաստատությունները, որտեղ երեխաների հետ շփվում են մայրենիով կամ անգլերենով: Մինչև նախորդ դարի 80-ական թվականները Հարավային Կորեայում գործում էր 500 մանկապարտեզ՝ 66 000 սանով և ավելի քան 3300 դաստիարակով: 2008 թ.-ի վիճակով մանկապարտեզների թվաքանակը հասցվեց 800-ի, սաներինը՝ 400 000-ի, իսկ դաստիարակներինը՝ 12 000-ի: Նմանօրինակ փոփոխությունները պայմանավորված էին .

1. կրթության և անձնակազմի կառավարման նախարարության տարեցտարի ծավալվող անմիջական օժանդակությամբ.
2. աշխատաշուկայում կանանց թվաքանակի աննախընթաց աճով (մանկապարտեզներում աշխատող դաստիարակների 92%- ը կանայք են).
3. մանկահասակ երեխաների ծնողների աշխատանքային զբաղվածությամբ.
4. մանկապարտեզից տարրական դպրոց փոխադրվելիս՝ երեխաների հաղորդակցվելու ճկունությամբ.
5. նախադպրոցական առօրյայի բարձր կազմակերպվածությամբ.
6. մանկապարտեզների ավարտական հանդեսների տպավորիչ ավանդույթների ձևավորմամբ.
7. նախադպրոցականների նկատմամբ հասարակության կողմից ցուցաբերվող առանձնահատուկ ուշադրությամբ.
8. մանկապարտեզներում վարվեցողության կանոնների, անգլերենի և բարոյագիտության ուսուցմամբ:

Նկ. 21. Կորեայի Հանրապետության նախադպրոցական հաստատություններում կյանքն ուրախ է և անհոգ: Այդպիսին է նաև երկրի վարչապետի առաջին տպավորությունը:

ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հարավային Կորեայում տարրական կրթությունը պարտադիր է: Այն նախատեսված է 6-11 տարեկան երեխաների, իսկ որոշ հեռավոր գյուղերում՝ 8-13 տարեկանների համար: Տարրական կրթությունը տևում է վեց տարի (1-6-րդ դասարաններ)՝ իրականացվելով ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական հաստատություններում: Տարրական դպրոցի կրթական ծրագիրը նախատեսում է մայրենիի, մաթեմատիկայի, հասարակագիտական առարկաների, երաժշտության, բարոյագիտության, կերպարվեստի, կիրառական արվեստների պատմության ու օտար լեզուների (առավելապես անգլերենի և ճապոներենի) դասավանդում: Բացառությամբ մարմնակրթության, օտար լեզուների և բարոյագիտության, մնացած բոլոր առարկաները դասավանդում է դասվարը: Դասարանից-դասարան երեխաների փոխադրումը տեղի է ունենում ցանկացած պարագայում՝ բացառելով երկտարեցիության երևույթը: Մինչև 1980 թ. օտար լեզուների դասավանդումը սկսվում էր միջին դպրոցից՝ 7-9-րդ դասարաններում, սակայն կրթական բարեփոխումների պահանջով այն տեղափոխվեց տարրական դպրոցի 3-րդ դասարան՝ առաջ բերելով կորեացի երեխաների մոտ բազմաթիվ բարդություններ, որոնց հաղթահարման համար ծնողները դիմում են կրկնուսույցների կամ լեզվական կենտրոնների ծառայություններին:

Վարկանիշային առումով, ոչ պետական տարրական դպրոցները զգալիորեն գերազանցում են պետական նմանատիպ հաստատություններին: Եթե պետական տարրական դպրոցներում աշակերտները կրում են ազատ համազգեստ՝ ուսումնասիրելով բացառապես պետական ծրագրային առարկաները, ապա մասնավոր դպրոցներն ունեն իրենց հատուկ աշակերտական համազգեստ, կազմակերպում են մայրենիի և անգլերենի խորացված ուսուցում, առաջարկում են բազմաթիվ ֆակուլտատիվ ու երկարօրյա դասընթացներ, առանձնանում են դասասենյակների առավել արդիական կահավորմամբ, դասարանների աշակերտական կազմի համաչափությամբ (15-20 հոգանոց), ուսուցիչների խստապահանջությամբ և մեթոդաբանական զինանոցի բազմազանությամբ, երեխաների հանգստի կազմակերպման ոչ ավանդական միջոցառումներով, լրացուցիչ թեստային ստուգարքների անցկացմամբ:

2008 թ.-ի տվյալներով, հարավկորեական տարրական դպրոցներում սովորում էր մոտավորապես ***5,2 մլն.*** աշակերտ: 1960-70 թթ. տարրական դպրոցների յուրաքանչյուր դասարանում հաշվվում էր միջինը 80-90 աշակերտ, ինչը

չէր կարող նպաստել կրթության որակական կողմի ապահովմանը: Ներկայումս այդ ցուցանիշը կազմում է 27 աշակերտ մեկ դասարանում: Այսօրվա Հարավային Կորեայի տարրական դպրոցի յուրաքանչյուր աշակերտ ապահովված է անհատական համակարգչով (այս առումով Հարավայի Կորեան Սինգապուրի հետ միասին աշխարհի պետությունների շարքում զբաղեցնում են 1-2 –րդ հորիզոնականները): Նրանց 90%-ից ավելին կարողանում է օգտվել «Ինտերնետի» («Համացանցի») ծառայություններից:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կորեական միջնակարգ հանրակրթությունը բաժանվում է երկու փուլի՝ ընդհանուր (միջին դպրոց) և լրիվ (ավագ դպրոց): 2008 թ.-ի վիճակագրական տվյալներով Հարավային Կորեայի միջին և ավագ դպրոցներում համատեղ սովորում էր ***5,5 մլն***. աշակերտ՝ մոտավորապես ***152 հազար*** ուսուցչի վերահսկողությամբ: Վերջին քսան տարվա թվային ցուցանիշները վկայում են, որ միջնակարգ կրթություն ստացողների 65%-ը նախընտրում է ուսումը շարունակել բուհում, 33%-ը ՝ քոլեջում և միայն 2%-ն է բավարարվում ձեռքբերած միջնակարգ կրթության մակարդակով: Մինչև 1968 թ. տարրական դպրոցից միջին դպրոց անցումն իրականացվում էր ընդունելության քննությունների արդյունքներով, որոնք մեծամասամբ կրում էին ձևական բնույթ՝ ավելի մեծ արտոնություններ սահմանելով ապահով խավի ընտանիքների երեխաների համար:

Միջին դպրոցում ուսումնառությունը տևում է 3 տարի (7-9-րդ դասարաններ)՝ հանդիսանալով պարտադիր հանրակրթության II շրջափուլ: Ի տարբերություն տարրական դպրոցների, միջին դպրոցներում աշակերտների նկատմամբ պահանջներն անհամեմատ ավելի խիստ են և կանոնակարգված. պարտադիր դպրոցական համազգեստ, կոկիկ սանրվածք և այլն: 12-14 տարեկան պատանիներին և աղջիկներին առաջարկվում են 20-ից ավելի առարկայական դասընթաց: Մեկ դասի տևողությունը սահմանված է 45 րոպե, սակայն աշակերտները պարտավոր են դպրոց հաճախել առաջին դասը սկսվելուց 30 րոպե առաջ: Կես ժամանոց նախավարժանքը կարելի է օգտագործել տարբեր կերպ. գրադարանում թերթել ամսագրեր, օժանդակ ձեռնարկներ, ծանոթանալ դասացուցակով նախատեսված դասերի ծրագրային պահանջներին, տեսալսողական դասարաններում հետևել հեռուստատեսությամբ հեռարձակվող ուսումնական հաղորդումներին:

Միջին դպրոց հաճախում են շաբաթվա մեջ 5 օր (երկուշաբթիից-ուրբաթ)՝ օրական 6 դասաժամ ծանրաբեռնվածությամբ: Յուրաքանչյուր ամսվա առաջին, երրորդ և հինգերորդ շաբաթ օրերին կազմակերպվում են 3 դասաժամով լրացուցիչ պարապմունքներ: Հարավային Կորեայում գործում են երկսեռ և միասեռ միջին դպրոցներ: Դրանցում կիրառվում են գնահատման տարբեր համակարգեր. թեստային, բալային, գծապատկերային, վիճակագրական: Դասերից հետո, աշակերտների մեծամասնությունը զբաղված է տարբեր խմբակներ հաճախելով (կորեական տարբերակով՝ *«հա·կո»* -ներ) և տուն է վերադառնում երեկոյան՝ չմտահոգվելով, որ պետք է դեռևս ավարտել տնային հանձնարարությունները, քանի որ այդպիսիք գրեթե չեն կուտակվում այն պարզ պատճառով, որ դրանք ընդունված է կատարել դպրոցում:

ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Պարտադիր 9-ամյա ընդհանուր միջնակարգ կրթություն ստանալով՝ 15 տարեկան պատանիներն ու աղջիկները թևակոխում են հանրակրթության ավարտական փուլը՝ ավագ դպրոցը, որտեղ ուսումնառությունը տևում է երեք տարի: Ամեն տարի Հարավային Կորեայի կառավարությունը հսկայական բյուջետային միջոցներ է հատկացնում կրթության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը: Օրինակ՝ 2006-2008 թթ. այդ նպատակի համար տարեկան ծախսվել է *1,2 մլրդ. ԱՄՆ դոլար*, որի կեսից ավելին ուղղվել է ավագ դպրոցների արդիականացման միջոցառումներին: Ավագ դպրոցները միջանկյալ դիրք գրավելով հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերի միջև, առանձնանում են հոսքային՝ բնագիտամաթեմատիկական, հումանիտար ու ընդհանուր ուսումնառությամբ: Ըստ 2003-2005 թթ. վիճակագրական տվյալների, 15-17 տարեկան կորեացիների 99%-ը նախընտրում է ավարտել ավագ դպրոցի ուսումնառությունը, որը հետագայում հնարավորություն է ընձեռում ընդունվել որևէ բուհ կամ վատագույն դեպքում՝ որևէ քոլեջ: Ավագ դպրոցի ծրագրային պահանջները բավականաչափ խիստ են, հետևաբար, աշակերտներից պահանջվում է ուժերի գերլարում, որպեսզի հետագայում հնարավոր լինի հաղթահարել բուհերի ընդունելության մրցութային բարձր շեմը: Ժամանակակից Հարավային Կորեայում գործում է շուրջ 800 ավագ դպրոց, որից 650-ն ընդհանուր, իսկ մնացած 150-ը՝ հումանիտար կամ բնագիտամաթեմատիկական ուղղվածության: Ավագ դպրոցներում սովորող աշակերտների ընդհանուր թվաքանակը 2008 թ.-ի վիճակով կազմել է *2,2 մլն.* մարդ, որից *1,3*

մլն.-ը հետագայում նախընտրել է բուհական կրթահամակարգը, իսկ մոտավորապես *900 հազարը՝* քոլեջային (միջին մասնագիտական) համակարգը: Ի դեպ, եթե միջին դպրոցներում դասավանդող ուսուցիչների 55%-ը կանայք են, ապա ավագ դպրոցներում ներգրավված ուսուցիչների ավելի քան 67%-ը տղամարդիկ են: Հարավային Կորեայում գործող ավագ դպրոցների 2/3 մասը ոչ պետական կարգավիճակի է, որոնցում ուսումնական մեկ տարվա վարձավճարը տատանվում է *500-ից 1000 եվրո* սահմաններում:

Նկ. 22. Կորեայի Հանրապետության հանրակրթական դպրոցներում կիրառվում են դասավանդման ամենաժամանակակից մեթոդները:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հարավային Կորեայում մասնագիտական կրթություն ստանալու համար պարտադիր է նվազագույնը ընդհանուր միջնակարգ կրթության ավարտական կարգացուցակը՝ առարկայական դասընթացների գնահատականների անվանաթերթիկը, որը հնարավորություն է տալիս ընդունելության քննությունների արդյունքներով՝ ուսումնառությունը շարունակել քոլեջներում, մինչդեռ բարձրագույն կրթությունը նախընտրողների համար պարտադիր է լրիվ միջնակարգ կրթության (ավագ դպրոցի) ավարտական վկայականի առկայությունը: Քոլեջ-

ների վարկանիշը թեև ավագ դպրոցների համեմատ ավելի բարձր է, այնուամենայնիվ նկատելիորեն զիջում է բուհերին: Քոլեջներն իրենց կարգավիճակով նման են տեխնիկումներին, սակայն բովանդակային կառուցվածքով ավելի շատ համապատասխանում են ամերիկյան միջին մասնագիտական հաստատություններին *(Junior College),* որտեղ ուսումնառությունը տևում է 2, 3 կամ 4 տարի: Քոլեջականների տարիքը կարող է տատանվել 15-18 կամ 17-20 տարեկան սահմաններում:

Հարավկորեական քոլեջների հիմնական գործառույթն է՝ երկրի տնտեսության համաքայլ զարգացման համար պատրաստել որակյալ բանվորական աշխատուժ կամ ցածր օղակի գործավար-ծառայողներ: Կրթության շարունակականության սկզբունքները տեսականորեն հնարավորություն են տալիս քոլեջն ավարտողներին ընդունվել որոշակի բուհերի 2-րդ կամ 3-րդ կուրս, սակայն դրանց թվաքանակը խիստ սահմանափակ է և գործատուների շրջանում ունի ցածր վարկանիշ: Նախկինում այդպիսի բուհերը մի քանի տասնյակն էին, սակայն 2001 թ.-ից սկսած, բոլոր բուհերում անցկացվում են ընդունելության մրցույթներ, այդ թվում նաև քոլեջներն ավարտողների համար: Քոլեջների գերակշիռ մասը ոչ պետական է: Հարավկորեական քոլեջներում ուսումնական մեկ տարվա վարձավճարը կազմում է *800-2000 եվրո*, այդ առումով զիջելով արևմտաեվրոպական, հյուսիսամերիկյան և ավստրալական նմանատիպ կրթօջախներին:

Եթե բուհերում սովորողների թվաքանակը տարեցտարի աճում է, ապա քոլեջներում ուսումնառողների թվաքանակը գնալով նվազում է (1970 թ.- 1,1 մլն. սովորող, 1990 թ.- 1 մլն. սովորող, *2008 թ.-870 հազար*), ինչը կարելի է բացատրել հարավկորեական հասարակության շրջանում բարձրագույն կրթության նկատմամբ ունեցած հարաճուն աճող պահանջարկով: Քոլեջների երկամյա դասընթացները նախատեսված են բանվորական (կռունկավար, պատշար, հյուսն, եռակցող, փականագործ), եռամյա դասընթացները՝ ծառայողական (հյուրանոցային վարչարար, վարսահարդար, խոհարար, տեխնիկ, տեխնոլոգ, արհեստավոր), իսկ քառամյա դասընթացները՝ ստորին ու միջին օղակի կառավարչական պարտականություններ իրականացնողների (հաշվետար, գործավար, հողաշինարար, հեռախոսավար, ֆինանսիստ) համար:

Միջին դպրոցն ավարտողները քոլեջ ընդունվելու համար հանձնում են 3-4 լրացուցիչ քննություն (կորեական լեզու և գրականությունից, մաթեմատիկայից, անգլերենից և բարոյագիտությունից), այնինչ՝ ավագ դպրոցն ավարտողները քոլեջ են ընդունվում հաստատագրված համալիր թեստ *(«սունին»)* լրաց-

նելով, որը համարժեք է ամերիկյան կրթահամակարգում կիրառվող ընդհանուր ճանաչողական թեստին *(SAT – System of American Test, Reasonging Test):* Ի տարբերություն ԱՄՆ-ի, որտեղ *SAT-ը* կարելի է հանձնել տարվա մեջ երկու անգամ, Հարավային Կորեայում «սունին» թույլատրվում է հանձնել տարին մեկ անգամ, որին սկսում են նախապատրաստվել դեռևս մանկապարտեզից: Անցողիկ շեմը չհաղթահարած դիմորդները կարող են ընդունվել ավելի ցածր վարկանիշ ունեցող արհեստագործական ուսումնարան, որը թեև ավարտական վկայական չի շնորհում, սակայն նպաստում է հաջորդ ուսումնական տարիների բուհական ընդունելության քննություններին ավելի արդյունավետ նախապատրաստվելուն:



Նկ.23. Կորեայի Հանրապետության քոլեջներում դասավանդվում է շուրջ 400 մասնագիտական դասընթաց:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հարավային Կորեայի կրթական համակարգի կառուցվածքում առանձնահատուկ տեղ է գրավում բարձրագույն կրթությունը, որի նկատմամբ ցանկացած կորեացի դրսևորում է չափից ավելի մեծ ուշադրություն: Այս առումով կարելի է նախանշել բազմաթիվ նմանություններ բուհական ընդունելության քննություն-

ների հանդեպ հայ և կորեական հասարակական կարծիքի ձևավորման ու հնչեղության մոտեցումներում: Դրանում կհամոզվենք ստորև, իսկ մինչ այդ անդրադառնանք Հարավային Կորեայի բարձրագույն կրթության համակարգային կառուցվածքին, մասնավորապես, կորեական համալսարանների տիպաբանական խմբերին: Հարավկորեական համալսարանները լինում են. կրոնա-աստվածաբանական (բուդդայական, կոնֆուցիական), ռազմական, բուն համալսարանական (գիտակառավարական), բաց, մանկավարժական, հեռակա և քոլեջային (արհեստագործամասնագիտական): Նշված համալսարանական կըրթօջախները ձևավորում են յուրատեսակ սանդղավորում, որի բարձրագույն (վերին) հատվածում հաստատված են քառամյա ուսումնառությամբ հաստատությունները, որոնց շրջանավարտներին իրավունք է վերապահվում շարունակական կրթություն ձեռքբերել մագիստրատուրայում, ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում:

Երկրորդ մակարդակը ձևավորում են մանկավարժական ինստիտուտները, որտեղ կրթվում են հանրակրթության ոլորտի ապագա ուսուցիչները: Երրորդ մակարդակը ներկայացված է Սեուլի միակ հեռակա համալսարանով: Չորրորդ մակարդակում հավաքագրված են «բաց համալսարանները», որոնցում ուսումնառություն են ստանում արտադրության ոլորտում աշխատողները, իսկ վերջին՝ հինգերորդ մակարդակում ընդգրկված են նեղ մասնագիտական, այսպես կոչված՝ «քոլեջային համալսարանները»: Ռազմական համալսարանները գտնվում են Պաշտպանության նախարարության հովանու ներքո, իսկ կրոնա-աստվածաբանական կրթօջախներն իրականացնում են հոգևոր ուսումնառություն՝ ԿԱԿ-ից անկախ սեփական ծրագրերով:

Հարավային Կորեայի բարձրագույն կրթահամակարգի գագաթնակետը ***Սեուլի պետական համալսարանն է***, որը հիմնադրվել է 1946 թ.-ին՝ ճապոնական գաղութատիրության տարիներին գործող Քենսոնյան կայսերական համալսարանի հիմքի վրա:

Դրա նկատմամբ կորեացիների պաշտամունքը ճիշտ այնպիսին է, ինչպիսին որ է ճապոնացիների առանձնահատուկ վերաբերմունքը Տոկիոյի պետական (նախկին կայսերական) համալսարանի նկատմամբ, չնայած այն հանգամանքին, որ Սեուլի պետական համալսարանը նույնիսկ չի դասվում աշխարհի առաջատար 100 համալսարանի շարքին և վարկանիշային առումով 2008 թ.-ին զբաղեցրել է ընդամենը 125-րդ հորիզոնականը: Սեուլի համալսարան ընդունվելը միլիոնավոր երիտասարդ կորեացիների ամենաբաղձալի երազանքն է, քանի որ ավարտական դիպլոմի առկայությունն արդեն իսկ երաշխիք է բարձր

վճարվող աշխատանքի, հասարակության կողմից մեծ ուշադրության ու գնահատանքի, անձնական կյանքում խոշոր ձեռքբերումների և իհարկե կայուն ու հաստատուն բարեկեցության: Բուհերի կողմից հայտարարվող ընդունելության տեղերի քանակը սահմանվում է ԿԱԿ-ի *Լուսավորության դեպարտամենտի* կողմից, որի անմիջական երաշխավորությամբ էլ հաստատվում են ուսումնական մեկ տարվա վարձավճարները և անցողիկ միավորների (բալերի) ստորին շեմը:

Սեուլի և մի քանի այլ խոշոր համալսարանների կառուցվածքում հաշվում են 20-25 ֆակուլտետ՝ յուրաքանչյուրում 100-ից 200 ընդունելության տեղով: Սեուլի համալսարան չընդունված (մրցույթը չհաղթահարած) դիմորդներն իրենց անհաջողությունը դիտում են իբրև անձնական մեծ դժբախտություն, և որպեսզի զերծ մնան հետագա ծանր հոգեբանական ապրումներից, ընդունելության քննություններին նախապատրաստվում ու վերաբերվում են չափից ավելի մեծ պատասխանատվությամբ:

Հարավկորեական համալսարաններում ուսման մեկ տարվա վարձավճարը տատանվում է *1200-3600 եվրոյի* սահմաններում , ինչն էականորեն զիջում է արևմտաեվրոպական, ամերիկյան և ավստրալական բարձրագույն կրթական հաստատություններին: Ի տարբերություն հայաստանյան իրականության, պետական բուհերում վարձավճարներն անհամեմատ ավելի ցածր են (մոտավորապես կրկնակի անգամ), քան ոչ պետական հաստատություններում: Բացի այդ, Հարավային Կորեայում բուհի վարկանիշն ուղղակիորեն չի ազդում վարձավճարի չափի ձևավորման վրա, ավելին՝ Սեուլի համալսարանում վարձավճարներն ամենացածրներից մեկն են ողջ պետության սահմաններում *(1200-1800 եվրո)*: Դա հնարավորություն է տալիս Սեուլի համալսարան դիմել հասարակության տարբեր խավերի ընտանիքներից դուրս եկած դիմորդներին, իսկ վարձավճարների ցածր չափաբաժինը բացատրվում է պետության կողմից ցուցաբերվող մեծ աջակցությամբ և հովանավորությամբ, քանի որ Սեուլի համալսարանը պետական բյուջեից տարեկան ստանում է այնքան ֆինանսական օժանդակություն, որքան որ երկրորդ կարգի հինգ բուհերը կամ երրորդ կարգի 15 բուհերը միասին վերցված:

Ավելի քան 20 տարի է, ինչ Հարավային Կորեայում գործում է բուհական ընդունելության «միասնական քննությունների» համակարգը, որը Հայաստանում ներդրվել է միայն վերջին շրջանում, սկսած 2007-2008 թթ. ուսումնական տարվանից: Այս առումով արժե ընդօրինակել հարավկորեական փորձը, որի հիմնական պահանջները փորձենք ներկայացնել համառոտ.

Միասնական կամ համազգային քննությունների բարեհաջող և օբյեկտիվ ու թափանցիկ անցկացման համար, քննությունների նախապես հայտարարված և հաստատված օրերին կազմակերպվում են մի շարք արտակարգ միջոցառումներ.

1. Կառավարության որոշմամբ, քննությունների օրերին ավելացվում են մետրոպոլիտենների շարժակազմների (գնացք-վագոնների) և երթուղային ավտոբուսների թվաքանակը, որպեսզի տարբեր հեռա-վորություններից ժամանող դիմորդները ժամանակին ներկայանան քննությունների մեկնարկին:
2. Մետրոպոլիտենի և վերգետնյա տրանսպորտի աշխատանքները քննությունների օրերին սկսվում են սովորականից 1,5-2 ժամ շուտ:
3. Ուժեղացվում է ճանապարհային և քաղաքային ոստիկանության աշխատանքային զգոնությունը, սահմանվում է հասարակական կյանքի տարբեր ոլորտների հատուկ հսկողություն:
4. Բոլոր քիչ թե շատ խոշոր և մեծաքանակ աշխատակազմ ունեցող ֆիրմաներին ու ձեռնարկություններին հրահանգվում է քննության օրերին առօրյա աշխատանքի մեկնարկը հետաձգել 1-2 ժամով ՝ տրանսպորտի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով:
5. Քննության օրերին բոլոր կարգի օդային թռիչքները հետաձգվում են 3-4 ժամով, որպեսզի ինքնաթիռների աղմուկը չշեղի քննությունների մասնակիցների ուշադրությունը, քանի որ դիմորդները պետք է թելադրություն հանձնեն մայրենիից, արտաբերեն անգլերենով արտասանված մտքեր, լուծեն մաթեմատիկական առաջադրանքներ:
6. Բոլոր քաղաքներում միևնույն առարկայից հանձնվում է նույն բովանդակությամբ և կառուցվածքով թեստ-քննություն, որոնց մեկնարկը տրվում է ռոպեական ճշտությամբ, միևնույն պահին:

Հարավային Կորեայի պետական քաղաքականության առաջնահերթությունների շարքում առանձնահատուկ տեղ է հատկացվում կրթության ոլորտին հատկացվող բյուջետային միջոցների տարեցտարի ավելացմանը: Այսպես օրինակ՝ եթե 1990 թ.-ին կրթության ոլորտին հատկացվել է պետական բյուջեի 10,8 %-ը, ապա 2008 թ.-ին այդ ցուցանիշն աճել է մինչև 19,3%, որը ՀՆԱ-ի կառուցվածքում ունեցած ծախսային մասով կազմել է 2,8 %: Տարբեր մակարդակի կրթօջախներին հատկացվող բյուջետային օժանդակությունն իրականացվում է վարկանիշային սկզբունքով: Դա նշանակում է, որ պետական վերահսկողական, տեսչական և հավատարմագրական կառույցների կողմից անցկացվող

գնահատման նախապես մշակված համակարգի համաձայն դուրս է բերվում յուրաքանչյուր կրթական հաստատության միջին վարկանիշային միավորը: «Գերազանց» գնահատականի են արժանանում այն հաստատությունները, որոնց վարկանիշային գնահատականը 90 բալ և ավելին է, «լավ» գնահատականը համապատասխանում է 80-89 բալին, «բավարար» կամ «ժամանակավորապես հավատարմագրված» կոչմանն են արժանանում 70-79 բալ վաստակած հաստատությունները: Եթե դպրոցի, քոլեջի կամ համալսարանի վարկանիշային գնահատականը 69 և ավելի ցածր բալ է, ապա կառավարական հատուկ որոշմամբ տվյալ կրթօջախը զրկվում է որևէ տեսակ ուսումնակրթական ծառայություններ մատուցելու իրավունքից:

Նկ.24. Սեուլի համալսարան ընդունվելը հարավկորեացի երիտասարդների բաղձալի երազանքն է:

Կրթական համակարգի բնութագրիչներն արտասահմանյան առաջավոր երկրներում

Աղյուսակ 3.

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ	Քոլեջների քանակը (հատ)	Համալսարանների քանակը (հատ)	Մեկ տարվա ուսման վարձավճարը (եվրո)		Օտարերկրացի սովորողների թվաքանակը (մարդ)
			Քոլեջներում	Համալսարաններում	
Ֆրանսիա	2 800	71	2 500 - 4 000	8 500 – 10 000	2 240 000
Գերմանիա	5 000	323	3 500 - 4 500	9 000 – 11 000	4 300 000

Հնդկաստան	10 545	1 500	1 000 - 2 000	3 000 – 5 000	7 800 000
Ավստրալիա	1 450	40	2 300 - 3 400	4 200 – 6 500	1 110 000
Հարավային Կորեա	675	1 390	800 - 2 000	1 200 – 3 600	3 690 000

ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ



Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նոր Զելանդիան բարձր զարգացած ինդուստրիալ - ագրարային երկիր է, որի զբաղեցրած տարածքը կազմում է ***269 հազար քառ. կմ,*** բնակչության թվաքանակը՝ ***4,1 մլն. մարդ*** (2008 թ.), իսկ ազգաբնակչության ուրբանիզացման մակարդակը՝ ***85%***: Պետական կարգով և կառուցվածքով հանդիսանում է պառլամենտական սահմանադրական միապետություն, որի բնակչության շուրջ 10%-ը տեղաբնիկ ***մաորիներն*** են: Նոր Զելանդիայի մասին եվրոպացիներն առաջին անգամ տեղեկացել են 1642 թ.-ին՝ շնորհիվ հոլանդացի ճանապարհորդ Աբել Թասմանի հայտնագործության:

Մինչև անկախություն ձեռքբերելը (1907թ.) հանդիսացել է Մեծ Բրիտանիայի գաղութը, ինչն էապես ազդել է ոչ միայն նորզելանդացիների կենցաղի, այլև՝ կրթական համակարգի սկզբունքային առանձնահատկությունների ձևավորման վրա, որն ամբողջությամբ ընդօրինակել է բրիտանական ձևաչափը (մոդելը):

Ամեն տարի Նոր Զելանդիա են ժամանում ***30-35 հազար օտարերկրացի*** ապագա ուսանող (աշակերտ, դիմորդ), ում ներգրավում են կղզախմբային այս երկրի անվտանգությունը, բնակչության բարձր կենսամակարդակը և իհարկե՝ հիասքանչ ու անկրկնելի բնակլիմայական պայմանները:

Նոր Զելանդիայի կրթական համակարգի կազմում հաշվում են շուրջ ***2000*** տարրական և միջին դպրոց, ***350*** ավագ դպրոց, լեզվի ուսուցման ավելի քան ***840*** կենտրոն ու արհեստագործական ուսուցման արհեստանոց-հաստատու-

թյուն, *25* միջին մասնագիտական կրթահամալիր կամ քոլեջատիպ պոլիտեխնիկական ինստիտուտ *(Polytechnic, Institute of Technology), 8* համալսարան *(University), 4* բարձրագույն մանկավարժական քոլեջ *(College of Education)* և *3* բարձրագույն կրթական հաստատություն՝ նախատեսված բացառապես տեղաբնիկ մաորիների համար: Նախադպրոցական կրթական հաստատություններ (մանկապարտեզներ), որպես այդպիսիք, գրեթե չկան, քանի որ նախադպրոցական տարիքի երեխաների (մինչև 6 տարեկանների) համար ծնողների մեծամասնությունը նախընտրում է դիմել տնային դայակների ծառայությանը, ովքեր տնային պայմաններում մանուկների հետ անցկացնում են օրական 12-14 ժամ, բացի շաբաթվա կիրակի օրերից:

Թեև նախադպրոցական կրթության ոլորտում պետական կարգավիճակով գործող հաստատությունները բավականաչափ պասիվ են, սակայն դա ամենևին չի խոսում ուսումնակրթական իրավիճակի համար պատասխանատու և լիազորված կառավարական օղակների անտարբերության մասին: Ավելին, նկատի ունենալով հասարակական կյանքում կնոջ դերի բարձրացումն ու նրա զբաղվածությունը, կառավարությունն ամեն կերպ խրախուսում է մանուկների դաստիարակության հարցերով զբաղվող և մասանվոր հիմունքներով գործող հատուկ կենտրոնների ստեղծման գործընթացը: Այսօր հասարակական մեծ պահանջարկ են վայելում մանուկների համար նախատեսված խաղային կենտրոններն ու խմբակները, խաղաղօվկիանոսյան կղզիներում բնակվող ցեղերի լեզվի և ազգային մշակույթի պահպանման ու քարոզման կրթահամալիրները, բազմաբնույթ նախասիրությունների ազատ դրսևորման և զարգացման մանկապարտեզ-արվեստանոցները, որոնք բոլորն էլ գործում են կրթության նախարարության կողմից շնորհվող հավատարմագրերի պահանջներին համապատասխան:

Նորզելանդական կրթական համակարգը, որն ունի մոտավորապես 150 տարվա պատմություն, համաշխարհային կրթական ոլորտի առաջատարներից մեկն է՝ ունենալով միջազգային բարձր վարկանիշ և հեղինակություն: Դրա ցայտուն վկայությունն է այն իրողությունը, որ նորզելանդական քոլեջների ու համալսարանների շրջանավարտների 70%-ն ամեն տարի աշխատանք է գտնում այլ երկրներում, մասնավորապես, Ավստրալիայում և Կանադայում:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Նոր Զելանդիայի կրթական համակարգը կազմված է 4 մակարդակից (սեկտորից).

1. Տարրական հանրակրթություն (կամ՝ տարրական և միջին դպրոցներ):
2. Միջնակարգ հանրակրթություն (կամ՝ ավագ դպրոց):
3. Միջին մասնագիտական կրթություն (քոլեջներ, պոլիտեխներ կամ տեխնոլոգիական ինստիտուտներ):
4. Բարձրագույն կրթություն (համալսարաններ և բարձրագույն քոլեջներ):

Նոր Զելանդիայի կրթական համակարգ մուտք են գործում 6 տարին, բացառիկ դեպքերում 5 տարին լրացած երեխաները, ովքեր տարրական դպրոցներում ուսումնառում են 8 տարի (1-8 դասարաններ): Այնուհետև, 13 տարին լրացած պատանիներն ու աղջիկներն ուսումնառություն են ձեռք բերում միջնակարգ դպրոցներում, որոնք Նոր Զելանդիայում երբեմն կոչվում են «քոլեջ» կամ «բարձրագույն մակարդակի դպրոց»: Այստեղ սովորողներն անցկացնում են 5 տարի (9-13 դասարաններ)՝ նախապատրաստվելով պոլիտեխներ, համալսարաններ կամ բարձրագույն մանկավարժական քոլեջներ ընդունվելուն: Ի դեպ նկատենք, որ պետական կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություններն անհամեմատ ավելի շատ են, քան ոչ պետական (մասնավոր) կրթօջախները, թեև երկու դեպքում էլ դրանք առաջնորդվում են միասնական կրթական ծրագրերով՝ ապահովելով համանման որակի կրթություն:

Կրթության ոլորտի նկատմամբ Նոր Զելանդիայի կառավարության առանձնահատուկ վերաբերմունքը դրսևորվում է թեկուզև այն փաստով, որ պետական բյուջեի 17%-ը կամ յուրաքանչյուր 6-րդ դոլարն ուղղվում է կրթական բարեփոխումների իրականացմանն ու տեխնոլոգիական ներդրումների ծավալների ընդարձակմանը: Ուսումնառության ընթացքը կազմակերպվում է այնպիսի սկզբունքով, որպեսզի սովորողները, հատկապես օտարերկրացիները, հնարավորություն ունենան ծանոթանալ Նոր Զելանդիայի բնության հրաշալիքներին՝ անցկացնելով նաև արդյունավետ հանգիստ: Նոր Զելանդիայի հեռացվածությունն աշխարհի գործարար և տնտեսապես ակտիվ շրջաններից անենևին չի խանգարում, որպեսզի ներգրավի օտարերկրացի սովորողներին: Օտարերկրացիներին ներգրավելու հիմքերն ու նախապայմաններն ավելի քան խոսուն են, եթե նկատի ունենանք, որ շատերի հավաստմամբ, Նոր Զելանդիան յուրատեսակ «հեքիաթ-երկիր» է:

Նոր Զելանդիայի կրթական համակարգի կառուցվածքը ճկուն է և շարժունակ, ինչը հնարավորություն է տալիս հեշտությամբ հաղթահարել տարբեր կրթական մակարդակների միջև հաստատված անցումային շեմերը: Բացի նրանից, որ գործում է ***10-ամյա պարտադիր կրթության*** (5-14 տարեկանների, կամ 6-15 տարեկանների համար) հրամայականը, մնացած մյուս մակարդակներում

և ենթամակարդակներում խիստ կարևորվում են նախընթաց կրթության ձեռքբերումները՝ հնարավորություն ընձեռելով թռիչքային անցումների, երբ հանրակրթության ավարտական (12-րդ կամ 13-րդ դասարանների) ուսումնառությունը փոխարինում է բուն քոլեջների կամ պոլիտեխների սկզբնական ուսումնառությանը՝ համապատասխանաբար նախապատրաստական ու առաջին կուրսերին, իսկ նույն այդ քոլեջների ավարտական դասընթացը (մեծամասամբ 3-րդ կուրսի, իսկ բացառիկ դեպքերում՝ նաև 2-րդ կուրսի ուսանողների համար) փոխարինում է համալսարանների առաջինից-երկրորդ կամ առաջին կուրսերի ուսումնառությանը: Աշակերտը, դիմորդը, ուսանողը և բակալավրը հայտնվելով շահեկան վիճակում, կրթության ու մասնագիտության որակավորման աստիճանները կարողանում են հաղթահարել առաջանցիկ՝ շրջանցող տեմպերով, երբ արժևորվում է ոչ թե ուսումնառության տարիների թվաքանակը, այլ վերջինիս արդյունավետությունը:

ՆՈՐԶԵԼԱՆԴԱԿԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՐԱՎՉՈՒԹՅՈՒՆԸ

Նոր Զելանդիայի ազգաբնակչության 78%-ը եկվոր անգլիացիների սերունդներն են, ևս 10%-ը ՝ շոտլանդացիներ և իռլանդացիներ, իսկ տեղաբնիկ մաորիները, ովքեր կղզախմբային այս երկրում հաստատվել են ավելի քան 1000 տարի առաջ, 10%-ից էլ քիչ են: Սակայն բնակչության ազգային կազմի նման հարաբերակցությունը չի խանգարել, որպեսզի առ այսօր էլ գործեն և կյանքի կոչվեն մաորիների (պոլինեզացիների) քաղաքակրթության հիմնական արժեհամակարգային սկզբունքները, ովքեր այն հարցադրմանը, թե երկրագնդի վրա ի՞նչն է ամենակարևորը՝ պատասխանում են, որ դա մարդիկ են, կրկին ու կրկին՝ մարդիկ են: Հիրավի, Նոր Զելանդիայի գլխավոր հարստությունն իր քաղաքացիներն են, ովքեր ջանում են իրենց երկիրը դարձնել աշխարհում լավագույնը՝ չմոռանալով օտարերկրացիների համար հանդես գալ, որպես հյուրընկալ ժողովուրդ: Կառավարությունը հսկայական միջոցներ է հատկացնում բնակչության կենսամակարդակի առանց այն էլ բարձր ցուցանիշներն էլ ավելի բարելավելուն՝ ստեղծելով անսահմանափակ հնարավորություններ յուրաքանչյուրի մտավոր և ստեղծագործական ներուժի զարգացման համար: Այս երկիրը հպարտանում է համաշխարհային հռչակ վայելող իր գիտնականներով, որոնց շարքում փայլատակում են ***Նոբելյան մրցանակի*** դափնեկիրներ ***Էրնեստ Ռեզերֆորդը*** (ֆիզիկոս) և ***Մորիս Ուիլքինսը*** (կենսաբան):

Օտարերկրացիների համար Նոր Զելանդիան յուրատեսակ և գրավիչ է, քանի որ.

1. Այստեղ բնակլիմայական պայմանները մեղմ են և ամբողջ տարին օդի միջին օրական ջերմաստիճանը տատանվում է 8° - 30° տաքության սահմաններում:
2. Բնակության պայմաններն անհամեմատ ավելի քիչ ծախսատար են, քան Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում և Ավստրալիայում: Խոսքը վերաբերում է և՛ կոմունալ վարձավճարներին, և՛ սննդամթերքի գներին, և՛ մասնավոր տների կամ հանրակացարանների ամսական վարձավճարներին, և' ուսման մեկ տարվա միջին վարձավճարների չափին:
3. Կառավարության կողմից մշակված ներգաղթի քաղաքականության ծրագրային դրույթներն ու պահանջները բավականաչափ պարզեցված են, զերծ են ավելորդ քաշքշուկներից, բաց են և թափանցիկ, ծառայում են ի նպաստ եկվորների՝ չվնասելով նրանց արժանապատվությունն ու քաղաքացիական դիրքորոշումը:
4. Դեռևս 2004-2006 թթ. ժամանակահատվածում, ըստ ՄԱԿ-ի և դրա տարբեր կառույցների (ՅՈՒՆԵՍԿՕ, ԻԼՕ, ՖԱՕ) համընդհանուր գնահատականի, այս երկիրը համարվել է օտարերկրացիների այցելության տեսանկյունից աշխարհում լավագույնը, ինչին մեծապես նպաստել են նորզելանդացիների հյուրընկալ վերաբերմունքը, հանցագործությունների ցածր մակարդակը (նորզելանդացի ոստիկանները զենք չեն կրում), բնապահպանական միջոցառումների հետևողական իրականացումը, քաղաքաշինական նորմերի և բնակչության պահանջների համաչափությունը: Տարբեր համակարգերի և չափանիշների մեկտեղմամբ որոշված աշխարհի 10 լավագույն քաղաքներից երկուսը գտնվում են Նոր Զելանդիայում: Դրանք են ***Օքլենդը*** և ***Դունեդինը:***
5. Օտարերկրացի ուսանողները տեղացիների հետ հավասար իրավունքներով կարող են վաստակել ապրուստի լրացուցիչ միջոց՝ ուսումնառության ակտիվ շրջանում (դասերի ընթացքում) աշխատելով շաբաթական 20 ժամ, իսկ եռամսյա արձակուրդների ընթացքում՝ լրիվ աշխատանքային օրվա (10-12 ժամ/օր) ծանրաբեռնվածությամբ:
6. Նորզելանդական քոլեջներում (նվազագույնը 3 տարի) և համալսարաններում (նվազագույնը 4 տարի) ուսումնառություն ստացած շրջանավարտներին իրավունք է տրվում երկու տարի աշխատել ձեռքբերած մասնագիտությամբ, որից հետո դիմել համապատասխան մար-

միններին՝ նորզելանդական քաղաքացիություն ստանալու հայ-ցապահանջով:

7. Աշխատանքի տեղավորման հարցում տևական փնտրտուքներ չեն պահանջվում: Այդ մասին հոգում են քոլեջներին և համալսարաններին կից գործող աշխատանքի տեղավորման գրասենյակները, որոնց ծառայությունների համար որևէ վարձավճար չի պահանջվում:
8. Ուսումնառության ընթացքում տեսական դասընթացները համակցվում են գործնական ակտիվ և արդյունավետ պարապմունքների հետ, ինչին մեծապես նպաստում են կրթօջախներից շատերի գործընկերային հարաբերությունները ոչ միայն տեղացի գործատուների, այլև միջազգային համբավ վայելող ֆիրմաների, կոնցեռների ու անդրազգային սինդիկատների հետ, որոնք սիրահոժար ընդունում են նորզելանդական համալսարանների պրակտիկա անցկացնող ուսանողներին՝ հոգալով նրանց ծախսերը:

ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նոր Զելանդիայում հաշվում են շուրջ 1000 տարրական դպրոց, որից 800-ը պետական են, իսկ 200-ը՝ ոչ պետական (մասնավոր): Տարրական դպրոցները նախատեսված են ինչպես երկսեռ-համատեղ, այնպես էլ՝ միասեռ-տարանջատ ուսուցման համար: Գյուղական բնակավայրերում գործում են «համալիր» դպրոցներ (1-13 դասարաններով): Քիչ չեն նաև եկեղեցական դպրոցները: Պետական դպրոցներում ուսուցումն անվճար է և նախատեսված է բացառապես նորզելանդացիների համար: Օտարերկրացի աշակերտները ներգրավվում են մասնավոր դպրոց-հանրակացարաններում (գիշերօթիկներում)՝ մեկ ուսումնական տարվա համար վճարելով ***450-ից*** (գյուղական բնակավայրերում) մինչև ***750 ԱՄՆ դոլար*** (քաղաքային բնակավայրերում):

Տարրական դպրոց սկսում են հաճախել 6 տարեկանից՝ ձեռք բերելով 8-ամյա ընդհանուր միջնակարգ կրթություն: Ցանկացած օտարերկրացի կարող է ընդունվել մասնավոր տարրական դպրոց՝ ներկայացնելով իր ազգային դպրոցում անցած ուսումնառության գնահատականների կարգացուցակը և հաղթահարելով անգլերենի իմացության թեստը: Ընդունելի է համարվում անգլերենի իմացության այնպիսի մակարդակը, երբ աշակերտը կարողանում է հպանցիկ կարդալ լրագրային որևէ պատահական ընտրված հոդված և ընդհանուր պատ-

կերացում ունենալ դրա բովանդակության մասին: Եթե անգլերենի իմացությունը բավարար չէ, աշակերտներին առաջարկում են լեզվի արագացված դասընթացներ՝ մինչև 3 ամիս տևողությամբ, որի ընթացքում ձեռք են բերվում բավարար գիտելիքներ:

ԼԵԶՎԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվական դասընթացների արդյունավետ կազմակերպման բնագավառում Նոր Զելանդիայում գործում են տարբեր կարգի և նպատակների ծառայող հատուկ կենտրոններ՝ թվով մոտ 600-ը: Լեզվական կենտրոնները մեծամասամբ ունեն ինքնուրույն կարգավիճակ, սակայն դրանց մի մասը գործում է համալսարաններին և պալիտեխներին կից: Լեզվական դասընթացների ծրագրերը բազմազան են և նախատեսված են տարբեր տարիքի ունկնդիրների համար: Դրանք կարելի է դասակարգել ըստ վեց խմբի.

1. Ընդհանուր կամ հիմնական:
2. Արագացված:
3. Քննական:
4. Ակադեմիական կամ պարտադիր:
5. Բրզնես-գործարարական:
6. Զբոսաշրջաառողջարանային:

Տարրական հանրակրթության բնագավառում բացառապես կիրառվում է ***ընդհանուր (հիմնական)*** դասընթացի ծրագիրը, որն առանց բացառության գործում է ցանկացած դպրոցում: Ընդհանուր դասընթացը սովորեցնում է կարդալ, գրել, բանավոր շփվել, յուրացնել քերականական հիմնական կանոնները: Պարապմունքները սովորաբար ընթանում են առավոտյան ժամերին՝ շաբաթական 20 ակադեմիական դասաժամ ծանրաբեռնվածությամբ: Որոշ տարրական դպրոցներում կազմակերպվում են նաև ***արա·ացված*** դասընթացներ՝ շաբաթական 30 ակադեմիական դասաժամ ծանրաբեռնվածությամբ: Վերջիններս լայն կիրառում ունեն նաև ավագ դպրոցներում և քոլեջներում, քանի որ բացի առավոտյան դասաժամերից, ներառում են երեկոյան պարապմունքներ, ըստ որոշակի մասնագիտական մոդուլների կամ ակադեմիական, պարտադիր առարկայացանկի:

Լեզվական դասընթացներին կրկնակի անգամ չանդրադառնալու համար հավելենք, որ անգլերենի ***քննական*** դասընթացները նախատեսված են ավագ դպրոց, քոլեջ կամ համալսարան, ինչպես նաև աշխատանքի ընդունվելու հա-

մար: Համալսարանների և գործատուների կողմից առավել ընդունելի լեզվական հավաստագրերից են *IELTS, TOEFL, Cambridge CAE, Cambridge CPE* վկայականները:

Ակադեմիական լեզվական դասընթացը, ինչպես և մյուս կարգի բոլոր լեզվական դասընթացները կազմակերպվում են 12-15 հոգանոց խմբերով, հատուկ կահավորված տեսալսողական դասասենյակներում: Ակադեմիական լեզվական դասընթացի մեկ շաբաթվա վարձավճարը կազմում է ***300-350 նորզելանդական դոլար*** (NZD), որը համարժեք է ***100-120 ԱՄՆ դոլարին*** կամ ***75-90 եվրոյին***: Ակադեմիական խորացված դասընթացների տևողությունը 6 ամսից մինչև մեկ ուսումնական տարի է (9 -10 ամիս), գնային առումով բավականաչափ մատչելի է, սակայն ունի մի թերություն, այն է՝ խմբերը հավաքագրվում են հաստատագրված (ֆիքսված) ժամկետներում:

Բիզնես-·գործարարական անգլերենի դասընթացները կազմակերպվում են հատուկ նպատակով, առավելապես մասնագիտական տերմինաբնությանը հաղորդակցվելու և այն յուրացնելու ակնկալիքով: Բիզնես-գործարարական անգլերենի դասընթացները մատուցվում են 4 ուղղվածությամբ.

ա/ անգլերեն՝ միջազգային բանակցություններ վարելու համար.

բ/ անգլերեն՝ երիտասարդ ձեռնարկատերերի համար.

գ/ անգլերեն՝ շուկայաբանների և կառավարիչների համար.

դ/անգլերեն՝ նեղ մասնագետների, օրինակ՝ զբոսաշրջավարների, փաստաբանների, բժիշկների, քաղաքագետների, բանկային գործակալների, էներգետիկների և այլոց համար:

Լեզվական դասընթացների վերջին՝ ***զբոսաշրջաառողջարանային*** ուղղությունը համաչափ կամ արագացված սերտումը համակցում է ակտիվ հանգստի, մարմնակրթությամբ պարբերաբար զբաղմունքի և ճանաչողական-արշավային ծրագրերի հետ:

Նորզելանդական կրթահամակարգում բուն հանրակրթության ոլորտն առանձնանում է երեք ենթամակարդակով՝ տարրական (1-4 դասարաններ), ընդհանուր միջնակարգ (5-8 դասարաններ) և լրիվ միջնակարգ (9-13 դասարաններ): Տարրական և ընդհանուր միջնակարգ կրթական ենթամակարդակներն իրականացվում են տարրական *(Primary School)* ու համալիր *(Composite School)* դպրոցներում, իսկ լրիվ միջնակարգ կրթությունը՝ համալիր և բարձր աստիճանի ավագ դպրոցներում *(Secondary School, High School, Intermediate School):*

Միջնակարգ կրթության առաջին շրջափուլը (1-4 դասարաններ) տևում է 4 տարի՝ 6-9 տարեկանների համար, երկրորդ շրջափուլը (5-8 դասարաններ)՝ ևս 4 տարի՝ 10-13 տարեկանների համար, իսկ երրորդ շրջափուլը (9-13 դասարաններ)՝ 5 տարի՝ 14-18 տարեկանների համար: Պարտադիր են համարվում առաջին և երկրորդ շրջափուլերը, իսկ երրորդ շրջափուլը՝ մասամբ (ներառյալ 12-րդ դասարանը): Եթե տարրական ենթամակարդակում առանձնացվում են 5-6 պարտադիր դասընթաց (առարկա), ապա ընդհանուր միջնակարգ ենթամակարդակում դրանց թիվը հասնում է 12-15-ի, իսկ երրորդ ենթամակարդակում՝ 18-20-ի: Հանրակրթության առարկայացանկում ցանկացած փոփոխություն համաձայնեցվում է *Որակավորումների ճանաչման Նորզելանդական Կազմակերպության (ՈՃՆԿ* կամ *NZQA – New Zealand Qualification Authority)* հետ: *Նորզելանդական որակավորումների ազ·ային շրջանակի (ՆՁՈԱՇ-ի)* ամենաստորին՝ առաջին մակարդակը ձևավորում են միջին դպրոցի 8-ամյա կրթությամբ շրջանավարտները, ում տրվում է առարկայական դասընթացների ամփոփիչ գնահատականների կարգացուցակ (առաջադիմության թերթիկ): Վերջինիս առկայությունը դեռևս բավարար չէ բուհ կամ պոլիտեխ ընդունվելու համար, սակայն կարող է հնարավորություն տալ արհեստագործական ուսումնական խմբակներում և հաստատություններում 6-ից 10 ամիս ուսումնառելով ձեռք բերել որոշակի բանվորական մասնագիտություն կամ որակավորում:

11-րդ դասարանի շրջանավարտները կազմավորում են որակավորումների երկրորդ մակարդակը՝ ձեռքի տակ ունենալով ավարտական քննությունների արդյունքների հիման վրա շնորհվող միջնակարգ կրթության վկայական *(School Certificate):* 12-րդ դասարանի շրջանավարտներից, ովքեր ստանում են *Sixth Form* կարգի վկայական, ձևավորվում է որակավորումների երրորդ մակարդակը: Այս մակարդակը թույլ է տալիս մեկ տարի տևողությամբ նախա-

պատրաստական դասընթացում *(Foundation Course)* սովորելուց հետո ընդունվել բուհ:

Նկ.25. Նորզելանդական նախադպրոցական և հանրակրթական հաստատությունները լիովին համապատասխանում են ժամանակակից բարձր պահանջներին:

13-րդ դասարանի շրջանավարտներին շնորհվում է լրիվ միջնակարգ կրթության վկայական (հասունության ատեստատ), ովքեր կազմավորում են որակավորումների ազգային շրջանակի չորրորդ մակարդակը: 13-րդ դասարանի ավարտական՝ *Ա մակարդակի* (բրիտանական տարբերակով՝ *A – level*) քննությունները միաժամանակ ծառայում են նաև բուհական ընդունելությանը, միայն այն տարբերությամբ, որ բուհերի առաջին կուրսեցիների ընտրությունը կատարվում է 4-6 մասնագիտական և ակադեմիական առարկաների քննական արդյունքներով:

2008 թ.-ի վիճակագրական տվյալներով, Նոր Զելանդիայում բնակվող 15 տարեկան պատանիների ու աղջիկների 92%-ը նախընտրել է ավարտել ավագ դպրոցը և ընդունվել համալսարան կամ տեխնոլոգիական ինստիտուտ: 16 տարեկան երիտասարդների շրջանում բուհ ընդունվելու ցանկություն են ցուցաբերել 87%-ը, իսկ 17 տարեկանների շրջանում՝ 82%-ը:

2008 թ.-ին նորզելանդական ավագ դպրոցների 120 հազար շրջանավարտից (11 հազարն օտարերկրացի) բուհ ընդունվելու հայտ են ներկայացրել 102

հազարը, սակայն որպես ուսանող հրամանագրվել են շուջ 52 հազարը (8 հազարն օտարերկրացի):

2001 թ.-ին, կրթության նախարարության և ՈՃՆԿ-ի համատեղ ջանքերով մշակվեց կրթական բարեփոխումների նոր փաթեթ, համաձայն որի նախատեսվում էր մինչև 2010 թ.-ի ավարտն աստիճանաբար անցում կատարել ***Կրթական Ձեռքբերումների Ազ·ային Վկայականների (ԿՁԱՎ*** կամ ***NCEA- National Certificate of Educational Achivement)*** եռաստիճան համակարգին, որի կառուցվածքային պահանջներց էին.

1. 5-12 տարեկանները սովորում են տարրական դպրոցի 1-ից 4-րդ և միջին դպրոցի 5-ից 8-րդ դասարաններում, ում որևէ վկայական ու որակավորում չի շնորհվում.
2. 12-14 տարեկանները սովորում են ավագ դպրոցի 9-ից 10-րդ դասարաններում, ում որևէ վկայական ու որակավորում չի շնորհվում .
3. 15 տարեկանները սովորում են ավագ դպրոցի 11-րդ դասարանում, որն ավարտելուց և քննություններ հանձնելուց հետո ստանում են ԿՁԱՎ-ի առաջին մակարդակի վկայական (Level 1).
4. 16 տարեկանները սովորում են ավագ դպրոցի 12-րդ դասարանում, որն ավարտելուց և քննություններ հանձնելուց հետո ստանում են ԿՁԱՎ-ի երկրորդ մակարդակի վկայական (Level 2).
5. 17 տարեկանները սովորում են ավագ դպրոցի 13-րդ դասարանում, որն ավարտոլուց և քննություններ հանձնելուց հետո ստանում են ԿՁԱՎ-ի երրորդ մակարդակի վկայական (Level 3), որը հնարավորություն է տալիս համապատասխան հայտացուցակ լրացնելով ընդունվել համալսարանների բնագիտամաթեմատիկական ու հասարակագիտական ֆակուլտետների առկա (ցերեկային) ուսուցման ընդհանուր բաժիններ՝ հավակնելով բակալավրի վկայականի (կամ դիպլոմի):

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
(ՔՈԼԵՋԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ)

Նոր Զելանդիայի երիտասարդության շրջանում բարձր վարկանիշ և մեծ ճանաչում են վայելում մասնագիտական – տեխնիկական ուսումնական հաստատությունները (պոլիտեխները), որտեղ կարելի է ձեռքբերել մասնագիտական որակավորում կամ բակալավրի աստիճան: Նոր Զելանդիայի 25 պոլիտեխում այսօր արդեն սովորում է ավելի քան 30 հազար ուսանող (4 հազարն օտարերկրացի), ովքեր ուսումնառում են տարբեր ծրագրերով, 6 ամսից մինչև 2 կամ 3 տարի տևողությամբ, 15-20 հոգանոց խմբերով (կուրսերով): Յուրաքանչյուր 6 ամիս սովորելով, ուսանողները բարձրացնում են իրենց մասնագիտական որակավորման աստիճանը՝ սկզբնական առաջին աստիճանից հասնելով ավարտական չորրորդ աստիճանի: Ամեն մի միջանկյալ աստիճանի ուսումնառության ավարտին սովորողները ստանում են համապատասխան հավաստագիր՝ վկայական, մասնագիտական դիպլոմ, իսկ եռամյա ուսումնառության դեպքում՝ բակալավրի դիպլոմ: Ուսումնական ծրագրերն ու պլանները կազմված են այնպիսի սկզբունքով, որ պոլիտեխում մեկ տարվա ուսումնառությունից հետո հնարավորություն է տրվում փոխադրվել գործընկերային հարաբերություններով տվյալ պոլիտեխի հետ համագործակցող համալսարանի երկրորդ կուրս: Նորզելանդական պոլիտեխներում բարձր վարկանիշ են վայելում հյուրանոցային կառավարչի (ադմինիստրատորի, մենեջերի) և համակարգչային օպերատորի մասնագիտական հոսքերը, սակայն կան հաստատություններ, ինչպես օրինակ՝ ***Արևելյան Տեխնոլո·իական Ինստիտուտը***, որը կազմակերպում է խիստ առանձնահատուկ ՝ «Խաղողագործություն և գինեգործություն» դասընթացը:

Պոլիտեխներ ընդունվելու համար պարտադիր է ունենալ նվազագույնը 11-ամյա կրթություն և համապատասխան վկայական, ինչպես նաև անգլերենի լավ իմացություն՝ TOEFL-ի համակարգով 550 միավոր և ավելին, իսկ IELTS –ի համակարգով՝ 6, 0 բալ և ավելին: Պոլիտեխների մեծամասնությունն ունի կից գործող նախապատրաստական դասընթացներ: Դրանց թվին են դասվում հատկապես Մանուկաոյի, Հարավային և Յունիտեխի պոլիտեխները: Նորզելանդական պոլիտեխներում ուսումնական մեկ տարվա վարձավճարը տատանվում է 3000-5000 նորզելանդական դոլարի սահմանում, որը համարժեք է ***1800 – 3000 եվրոյին:***

Նոր Զելանդիայի կրթական համակարգի կառուցվածքային միավորներից միջազգային ամենաբարձր վարկանիշն ունի բարձրագույն կրթության ոլորտը, որի հիմքը կազմում են 8 համալսարան՝ ***Օտա·ոյի, Օքլենդի, Կենթերբերյան, Լինքոլնի, Վայկաթոյի, Մասսեյ, Վիկտորիա և Օքլենդի տեխնոլո·իական***: Դրանցից ամենահինը Դունեդին քաղաքում գտնվող ***Օտագոյի համալսարանն*** է՝ հիմնադրված ***1869 թ.-ին***, որը 1961 թ.-ին ունենալով ընդամենը 3000 ուսանող, հետագայում այդ թիվը հասցրեց ***18 հազարի***: Աշխարհում հայտնի է իր բժշկական ֆակուլտետի շրջանավարտներով ու կրթության անվիճելի բարձր որակով և առաջնորդվում է «Ձգտի'ր իմաստության, եղի'ր համարձակ» կարգախոսով:

Նկ.26. Նորզելանդական քոլեջներում սովորողների համար ստեղծված են բոլոր պայմանները:

Փոքր ինչ ավելի ուշ, ***1873 թ.-ին*** հիմնադրվել է ***Կենթերբերյան համալսարանը***՝ Քրայսթչերս քաղաքում: Դրանում իրենց մեծագույն ավանդն են ունեցել Մեծ Բրիտանիայում ՝ Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարաններում կրթություն ստացած երկու բրիտանացի: Համալսարանը նախևառաջ հայտնի է իր պրոֆեսորադասախոսական կազմի գիտական հետազոտություններով, ինժենեռատեխնիկական, ճարտարապետության, իրավագիտության և անտառային տնտեսության ֆակուլտետներով: Համալսարանում սովորում է ***12 500*** ուսանող, որից հազարն՝ օտարերկրացի (աշխարհի ավելի քան 50 երկրից):

Շատերի կարծիքով Կենթերբերյան համալսարանը լավագույնն է Նոր Զելանդիայում, ինչի հետ ոչ մի կերպ չի համակերպվում անհաշտ մրցակցող ու առաջատարի դիրքերը վիճարկող *Օքլենդի համալսարանը*՝ ճարտարապետության և առևտրի ֆակուլտետների տարիներով կուտակված ավանդույթներով: Համալսարանների վարկանիշային ցուցակում երրորդ հորիզոնականին է հավակնում *Մասսեյ համալսարանն*՝ իր ավելի քան *32 հազար* ուսանողով (4000-ն՝ օտարերկրացի), ովքեր տեղաբաշխված են ըստ երեք ուսանողական թաղամասերի (կամպուսների)՝ Հյուսիսային Պալմերսոնում, Օլբանիում (Օքլենդի արվարձանում) և Վելլինգտոնում: Համալսարանը հիմնադրվել է *1927 թ.-ին* Պալմերսոնի գյուղատնտեսական քոլեջի հենքի վրա: Համալսարանի գրադարանի գրքային ֆոնդն ամենահարուստն ու հագեցածն է Նոր Զելանդիայում: Համեմատաբար երիտասարդ համալսարանների շարքում անվիճելի առաջատարը *Վայկաթոյինն* է, որը հիմնադրվել է *1964 թ.-ին*, Համիլթոն քաղաքում: Այս համալսարանը Նոր Զելանդիայում առաջինն էր, որտեղ ներդրվեց հեռավար ուսուցման համակարգը: Ներկայումս մեծ հեղինակություն են վայելում իրավագիտության, միջազգային իրավունքի, հոգեբանության և աշխարհագրության ֆակուլտետները: Համալսարանում սովորում է *15 000* ուսանող, որից 1200-ն՝ օտարերկրացի: Նոր Զելանդիայի բարձրագույն կրթության համակարգն առանձնանում է բազմաստիճան կառուցվածքով.

1. Առաջին փուլ կամ բակալավրիատ.
2. Երկրորդ փուլ կամ մագիստրատուրա.
3. Երրորդ փուլ կամ դոկտորանտուրա.

Բակալավրիատի ընդհանուր ծրագիրը *(Degree courses)* ներառում է ուսումնառության 3 տարի, որոնց հաջող յուրացման արդյունքում շնորհվում է *բակալավրի աստիճան (Bachelor Degree)* և տրվում է *բարձրա·ույն կրթության առաջին մակարդակի դիպլոմ (Diploma),* թեև առանձին մասնագիտությունների բակալավրիատի ծրագրերը կարող են տևել 4 (ինժեներական գործ, ճարտարապետություն), 5 (իրավագիտություն) կամ 6 (բժշկագիտություն) տարի: Ընդհանուր բակալավրիատի համեմատ, բարձր կարգի կամ գերազանցության բակալավրիատի ծրագրերը *(Undergraduate courses)* պահանջում են ուսումնառության ևս մեկ լրացուցիչ տարի, իսկ արդյունքում ձեռք է բերվում *բարձր որակավորման բակալավրի աստիճան (Bachelor with Honours)* և *·ետրազանցության դիպլոմ (Postgraduate Diploma),* որը գործատուների շրջանում անհամեմատ ավելի նախընտրելի է: Բարձր կարգի բակալավրիատի ծրագիրն ունի շատ կարևոր առավելություն, քանի որ վերջին մեկ տարվա ուսում-

նառությունը փոխարինում է մագիստրատուրայի երկամյա ուսուցման առաջին տարվան: Ընդհանուր առմամբ, բակալավրիատի մեկ ուսումնական տարվա վարձավճարը տատանվում է *6000-10000* նորզելանդական դոլարի միջակայքում, ինչը համարժեք է *3 600 – 6 000 եվրոյին:*

Առաջին կուրսում ուսանողները յուրացնում են 5-6 պարտադիր և նույնքան էլ ընտրանքային՝ կողմնորոշիչ-մասնագիտական դասընթաց, երկրորդ կուրսում 10-12 մասնագիտական, իսկ երրորդ կուրսում՝ 12-15 մասնագիտական և հարակից դասընթաց: Երկրորդ և երրորդ կուրսերում դասավանդվող առարկաների 1/3 մասն ընտրում է ուսանողը՝ տեսական ուսումնառությունը համատեղելով գործնական պարապմունքների հետ՝ մոտավորապես 40:60 տոկոսային հարաբերակցությամբ: Յուրաքանչյուր ուսանողին ողջ ուսումնառության ընթացքում կցվում է մեկ պատասխանատու հոգաբարձու, ում դերում մեծամասամբ հանդես են գալիս նեղ մասնագիտական առարկաների ամբիոնների վարիչները կամ նրանց տեղակալները: Բարձր առաջադիմությամբ ուսանողներին հնարավորություն է տրվում ընդգրկվել *երկակի մասամ·իտացման դասընթացներում (Joint Degree),* երբ ասենք ապագա բնագետը կարող է ստանալ նաև իրավաբանական կրթություն, կամ ասենք՝ ապագա մաթեմատիկոսը՝ տնտեսագետ-տեսաբանի կրթություն: Նման դեպքերում նախատեսվում է լրացուցիչ երկու տարվա ուսումնառություն: Երկակի մասնագիտացման դասընթացներին ուսանողների մասնակցության թույլտվությունը համաձայնեցվում է ֆակուլտետների դեկանների հետ: Ի դեպ, բակալավրիատում ուսանելու ժամանակահատվածում ուսանողներին թույլատրվում է նաև աշխատել՝ շաբաթական 20 ժամ ծանրաբեռնվածությանբ:

Բարձրագույն կրության երկրորդ փուլը՝ *մա·իստրատուրան (Graduate studies)* նախատեսում է երկու տարվա ուսումնառություն ընդհանուր բակալավրի դիպլոմ ունեցողների և մեկ տարվա ուսումնառություն՝ բարձր կարգի բակալավրի դիպլոմ ունեցողների համար: Մագիստրատուրայի մեկ ուսումնական տարվա վարձավճարը կազմում է *15 000-30 000* նորզելանդական դոլար, կամ *9 000- 18 000 եվրո:* Մագիստրատուրայի հաջողությամբ ավարտված ուսումնառության արդյունքում կարելի է ստանալ *մա·իստրոսի աստիճան (Masters Degree)* և *մագիստրոսի դիպլոմ (Masters Diploma):*

Բարձրագույն կրթության սանդղակի ամենավերին՝ երրորդ փուլը կամ *դոկտորանտուրան*, որի տևողությունը նվազագույնը 3 տարի է, գիտական թեզի հաջող պաշտպանության դեպքում երաշխավորում է «փիլիսոփայության դոկտորի» աստիճանի շնորհում *(PhD – Philosophy Doctor)* և գիտությունների դոկ-

տորի դիպլոմի ձեռքբերում *(Doctor Diploma):* Չմոռանանք, որ Նոր Զելանդիայում մեծագույն հարգանքով են վերաբերվում տեղաբնիկ մաորիներին, ովքեր կրթություն և ուսումնառություն են ստանում մայրենի լեզվով դասընթացներ կազմակերպող 3 ուսումնական հաստատությունում: Ի դեպ, մաորիներն իրենց երկիրը կոչում են *«Աոտեարոա»,* որը բառացի թարգմանությամբ նշանակում է *«երկար սպիտակ ամպերի երկիր»:*

Նկ.27. Նոր Զելանդիայի առաջատար համալսարանները. Լինքոլնի, Օտագոյի, Օքլենդի, Կենթերբերյան, Մասսեյ և Վիկտորիա:





Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ճապոնիան ***(Նիխոն, Նիպոն)*** տնտեսապես գերզարգացած հետինդուստրիալ երկիր է, որը զբաղեցնում է ***378 հազար քառ. կմ*** մակերես՝ տեղաբաշխված լինելով ***6852*** կղզու վրա, որոնցից չորս խոշորներին՝ Հոկկայդո, Հոնսյու, Կյուսու և Սիկոկու բաժին է ընկնում ընդհանուր տարածքի մոտ 97%-ը: Բնակչության թվաքանակը կազմում է ***127,5 մլն. մարդ*** (2009 թ.), իսկ ուրբանիզացման մակարդակը՝ ***89%***:

Հանդիսանում է միատարր (ունիտար) սահմանադրական միապետություն: Ճապոնիան իր ազգային կրթական համակարգի ձեռքբերումներով դասվում է աշխարհի առաջատար երկրների շարքին, ինչին հաջողվել է հասնել բազմաբովանդակ կրթական բարեփոխումներ իրականացնելով: Ի տարբերություն պետությունների մեծամասնության, Ճապոնիայում անչափ մեծ ուշադրություն է դարձվում նախադպրոցական և տարրական կրթական համակարգերին: Այսպես օրինակ՝12-ամյա հանրակրթության ուսումնառության տարիների ուղիղ կեսը հատկացվում է տարրական կրթությանը, քանի որ անչափ դժվար ու տքնաջան աշխատանք է մայրենի լեզվի սերտումը և յուրացումը, չէ որ կրթության նախարարության կողմից հաստատված պահանջներով՝ տարրական դպրոցի յուրաքանչյուր շրջանավարտ պետք է տիրապետի շուրջ 1850 հիերոգլիֆի գրությանն ու արտասանությանը, թեև պարզագույն լրագրային հոդված կարդալու համար պետք է իմանալ նվազագույնը 3000 հիերոգլիֆ:

Ճապոնիայի կառավարությունն անչափ մեծ ուշադրություն է դարձնում իր քաղաքացիների մոտ սեփական երկրի պատմությամբ, մայրենի լեզվի հնչեղությամբ և հայրենի բնության գեղեցկությամբ հպարտանալու ինքնագիտակցության ձևավորմանն ու դաստիարակմանը: Մանկահասակ ճապոնացիները դեռ փոքրուց հաճախում են տարատեսակ խմբակներ, որպեսզի հետագայում հաջողությամբ ընդունվեն որևէ քոլեջ, իսկ լավագույն դեպքում՝ համալսարան:

Այդօրինակ լրացուցիչ դպրոցները (ճապոներեն տարբերակով՝ *«ձյուկու»*-ները) ներկայացնում են ոչ այնքան «վարպետացման հաստատություններ», որքան որ հիշեցնում են «կրկնուսուցման կենտրոններ»: Ճապոնիայում կրկնուսուցման համակարգը ձևավորվել է դեռևս 17-րդ դարում, քաղաքաներում բնակվող մեծահարուստների թաղամասերում:

Այսօր կրկնուսույցների ծառայություններից օգտվում է կրտսեր դպրոցականների 15%-ը, միջին դասարաններում սովորողների 50%-ը և ավագ դպրոցի աշակերտների 99%-ը: Ի դեպ նկատենք, որ տարրական և միջին դպրոցների դասարաններում ընդգրկված են միջինը 40-45 աշակերտ, այն դեպքում, երբ կրկնուսուցման խմբակները գերազանցապես 8-10 հոգանոց են: Ճապոնիայում օրենսդրական հիմունքներով գործող *կրկնուսուցման (ռեպետիտորության) համակար·ը* տարեկան ստանում է այնքան եկամուտ, որքան որ կազմում են ռազմական ծախսերն ու բանակի կարիքներին հատկացվող բյուջետային միջոցները միասին վերցրած:

Ճապոնացիներն ուսման հարցում ոչ մի բանի առջև կանգ չեն առնում՝ չխնայելով երեխայի հաջող ուսումնառության համար նույնիսկ ընտանեկան բյուջեն: Ուսումնական տարին Ճապոնիայում տևում է 8 ամիս՝ ներառյալ միջանկյալ արձակուրդների շրջանը, իսկ տնային հանձնարարությունների կատարման համար միջին ընդունակություններով երեխան օրական ծախսում է ոչ պակաս, քան 4-5 ժամ:

Ճապոնական ընտանիքներում երեխայի ուսման հարցերով հետևողական զբաղվելու պարտականությունը դրված է մոր ուսերին, սակայն դա չի նշանակում, որ նրանց կարելի է հեշտությամբ մոլորեցնել, քանի որ նրանք շատ լավ տեղեկացված են տնային աշխատանքների քանակի և ծավալի մասին, բավականաչափ տիրապետում են մաթեմատիկային կամ աշխարհագրությանը, որպեսզի վերահսկեն իրենց զավակների ուսման թերացումներն ու նվաճումները: Այդպիսի մայրերին ճապոնացիներն անվանակոչում են «*կեյկու»՝ «ուսման ծարավ»,* ովքեր պատրաստ են երեխաների դասերից հարգելի պատճառներով բացակայելու դեպքերում անձամբ հաճախել դպրոց և ներկա գտնվել դասերին, որպեսզի բաց չթողնվեն տնային հանձնարարություններն ու դրանց ճշգրիտ կատարման համար ուսուցիչների տված ցուցումները: Ճապոնիան իրավամբ համարում են *«կրթական զավեշտների երկիր»:*

Ճապոնիայի կրթական համակարգում առանձնացվում են հետևյալ մակարդակները.

1. Նախադպրոցական կրթություն (մսուր-մանկապարտեզ)՝շատ մեծ վերապահումով. – նախատեսված է մինչև 6 տարեկան մանուկների համար:

2. Տարրական հանրակրթություն (տարրական դպրոց). – նախատեսված է 6-ից 12 տարեկան դեռահասների համար:

3. Ընդհանուր միջնակարգ հանրակրթություն (միջին դպրոց կամ առաջին աստիճանի միջնակարգ դպրոց). – նախատեսված է 12-ից 15 տարեկան պատանիների և աղջիկների համար:

4. Լրիվ միջնակարգ հանրակրթություն (ավագ դպրոց կամ երկրորդ աստիճանի միջնակարգ դպրոց). – նախատեսված է 15-ից 18 տարեկան երիտասարդների համար:

5. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն (քոլեջ). – նախատեսված է 18-ից 20 տարեկան երիտասարդների համար:

6. Բարձրագույն կրթություն (համալսարան). – նախատեսված է 18-ից 22 տարեկանների և ավելի բարձր տարիքի քաղաքացիների համար:

Ճապոնիայում ուսումնական տարին սկսվում է ապրիլի 1-ից և շարունակվում մինչև հաջորդ տարվա մարտ ամիսը: Այն կազմված է երեք քառորդից՝ 40 օրական արձակուրդով հուլիս-օգոստոս ամիսներին և դեկտեմբերի վերջից սկսվող ձմեռային արձակուրդով: Այսպիսով, ճապոնացի դպրոցականները դպրոց են հաճախում տարվա մեջ 240 օր՝ ներառյալ նաև շաբաթօրյա պարապմունքները: Կրթական ոլորտում կատարված փոփոխությունների վիճակագրական պատկերն ընկալելու համար նշենք, որ եթե 1970 թ.-ին ճապոնացիների 57%-ն ուներ ընդհանուր միջնակարգ, 34%-ը՝ լրիվ միջնակարգ, իսկ 9%-ը՝ բարձրագույն կրթություն, ապա 2000 թ.-ի վիճակով դպրոցահասակների 94%-ն ուներ լրիվ միջնակարգ կրթություն, իսկ 18-22 տարեկանների 38%-ը սովորում էր համալսարաններում և քոլեջներում:

Ճապոնիայում ***պարտադրիր է*** համարվում ***9-ամյա հանրակրթությունը*** (տարրական դպրոց + առաջին աստիճանի միջնակարգ դպրոց): Ժամանակակից Ճապոնիայի կրթական համակարգի կայացման ողջ պատմական ուղին կարելի է բաժանել 5 ժամանակահատվածի.

1. Հիմնադրման ժամանակահատված. – ընդգրկում է 1868-1885 թթ., երբ ստեղծվեց առաջին կրթօջախների խմբաքանակը:

2. Համախմբման ժամանակահատված. – ընդգրկում է 1886-1916 թթ., երբ կյանքի կոչվեցին հանրակրթության ոլորտին առնչվող բազմաթիվ օրենսդրական ակտեր, որոնք հիմք հանդիսացան կրթության ոլորտի համակարգված կառուցվածքի ձևավորմանը:

3. Պարտադրանքների և հարկադրանքների ժամանակահատված. – ընդգրկում է 1917-1936 թթ., երբ կրթական համակարգն առաջնորդվում էր ***Կրթության Արտակար· Խորհրդի*** հանձնարարականներով:

4. Պատերազմական ժամանակահատված. – ընդգրկում է 1937-1945թթ., երբ գործում էր ռազմականացված և խստագույն վերախմբագրման ու խոսքի ազատության սահմանափակման միլիտարիստական կրթահամակարգի պարտադրանքը:

5. Արդի ժամանակահատված. – 1945 թ.-ից մինչ օրս, երբ մեկը մուսի հետևից իրականացվեցին կրթական բարեփոխումներ:

Ճապոնիայի յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքն ամրագրված է ***«Կրթության մասին հիմնական օրենքի»*** (1947 թ.) ներածական մասում, որտեղ մասնավորապես ասվում է. «Մենք պետք է հարգենք յուրաքանչյուրի արժանապատվությունը և ձգտենք նրանցից ձևավորել այնպիսի անհատականություններ, ում համար թանկ ու հարազատ են ճշմարտությունը և խաղաղությունը»:

Ճապոնիայում գործող ցանկացած կրթական հաստատություն, լինի դա պետական, հասարակական թե մասնավոր, ունի իր հստակ կառուցվածքային առանձնահատկությունը: Հետաքրքրության համար հավելենք, որ տարրական դպրոցը ճապոներեն տարբերակով կոչվում է ***«սրեակկո»,*** միջին և ավագ դպրոցները միասին՝ ***«տյու·ակկո»***, կարճաժամկետ համալսարաններն ու քոլեջները՝ ***«թանկի դայ·ակու»,*** իսկ երկարաժամկետները՝ ***«հոտա·ակկո»:***

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ճապոնիայում նախադպրոցական կրթությունը չի հանդիսանում կրթական ընդհանուր համակարգի ինքնուրույն բաղադրիչ մակարդակ: Մանուկները մանկապարտեզ են հաճախում ծնողների ցանկությամբ և խորհրդով, սովորաբար սկսած 4 տարեկան հասակից, սակայն բացառիկ դեպքերում, երբ ծնողներն աշխատում են, իսկ ընտանիքում չկան մեծահասակ խնամակալներ՝ նախակրթարան կարելի է հաճախել անգամ 3 տարեկանից: Մինչև 2-3 տարեկանների համար գործում են մսուրներ:

Ճապոնիայի բոլոր մսուրներն ու մանկապարտեզները գործում են ոչ պետական (մասնավոր) հիմունքներով, սակայն դրանց շարքում առանձնանում են այսպես կոչված ***«էլիտար»*** կամ ***«բարձրաշխարհիկ»*** մանկապարտեզները, որոնք գտնվում են տարբեր հեղինակավոր համալսարանների հովանու ներքո: Այդպիսի մանկապարտեզում հայտնվելն անչափ դժվար ու բարդ գործընթաց է, քանի որ եթե երեխան հաճախում է համալսարանական հենակետային մանկապարտեզ, կարելի է համոզված լինել, որ նրա ապագան արդեն իսկ կանխորոշված է: Երեխան հենակետային մանկապարտեզից փոխադրվում է հենակետային դպրոց, որտեղից էլ առանց քննությունների ընդունվում է բարձր վարկանիշով գլխամասային համալսարան, իսկ ավարտական դիպլոմը ձեռքին՝ վստահաբար մուտք է գործում աշխատանքային գործունեության ոլորտ՝ ապահովված լինելով բարձր աշխատավարձով ու կենսամակարդակով: Երեխաներին հենակետային մանկապարտեզ ընդունելու համար, ծնողները վճարում են հսկայական գումարներ, մինչդեռ երեխան դեռ պետք է կարողանա հաղթահարել մանկահասակների համար բավականաչափ բարդ թեստավորման փուլը:

Ճապոնիայի ողջ տարածքում հաշվում են «էլիտար» մի քանի տասնյակ մանկապարտեզ, որոնցում աշխատող դաստիարակներն ընտրվում են թեժ մրցակցային պայմաններում, քանի որ պետք է ունակ լինեն իրենց սաներին դեռևս մանկահասակ տարիքից նախապատրաստել համալսարանական ընդունելության քննություններին: Կան նաև արևմտաեվրոպական չափանիշներով գործող 40-ին մոտ մանկապարտեզ, որոնցում ընդունելության մրցակցությունն այնքան էլ լարված չէ: Ճապոնական մանկապարտեզների մեծամասնության հիմնական գործառույթն է՝ մանուկներին սովորեցնել ենթարկվել և հարգել մեծահասակներին, պահպանել վարվեցողության կանոնները, անձնական մեծագույն նվիրումով արտահայտել սեփական երախտագիտությունը, տեղին օգտագործել կրթվածության դիմաշարժը, խոնարհվել հեղինակությունների՝ ծնողների, ուսուցիչների կամ դասախոսների առջև, հետևել անձնական հիգիենային և այլն:

Ճապոնիայի մանկապարտեզներում ընդունված է տոն օրերին հանդես բերել բացառիկ վարքագիծ և գերկենտրոնացվածություն: Ճապոնացի մանուկների ամենացանկալի տոնը ***Մարմնամարզիկի օրն*** է՝ ***հոկտեմբերի 9-ին***: Այդ օրը մանուկները հագնում են պետական դրոշի գույներով՝ սպիտակով ու կարմիրով մարզահագուստ՝ մեծագույն պատվախնդրությամբ մասնակցելով տարատեսակ մարզական մրցույթներին, պատվավոր շքերթին, մարմնամարզական ներկայացումներին: Երեխաների շրջանում պակաս հետաքրքիր չեն անցնում

«Աղջիկների օրը» («հինամացուրի» կամ *«տիկնիկների տոն» - մարտի 3-ին)* և *«Տղաների օրը» («կոդոմո նո հի»* կամ *«ծածանի տոն» - մայիսի 5-ին):* Ճապոնիայում առանձնացվում են մանկապարտեզների երկու տեսակ՝ *խնամակալական* կամ *«հոիկուսյո»* և *·եղագիտադաստիարակչական* կամ *«յոթիեն»:* Յոթիեններում, որոնց 95%-ից ավելին ոչ պետական է, երեխաներն ընդունվում են 4 տարեկանից և դաստիարակների հսկողությամբ, մինչև ժամը 14-ը պարապում են մաթեմատիկա, մայրենի ու օտար լեզուներ (անգլերեն), երգ-երաժշտություն, պար, մարմնամարզություն, անցկացնում տրամաբանական խաղ-ներկայացումներ և այլն: Այսպիսի մանկապարտեզներում մեկ ամսվա վարձավճարը կազմում է *500 ԱՄՆ դոլար*: Հոիկուսյոներում առավելապես հետևում են 3 տարին լրացած երեխայի սննդակարգին, խաղացնում են, կերակրում, քնեցնում, դուրս բերում զբոսանքի և այդպես մինչև երեկոյան ժամը 17-18-ը: Հոիկուսյոներում մեկ ամսվա վարձավճարը *150-170 ԱՄՆ դոլար* է:

Նկ. 28. Ճապոնիայի մանկապարտեզները կարելի է համարել կյանքի մեծ դպրոց:

Ճապոնիայի ժամանակակից տարրական կրթական համակարգն ավելի քան 100 տարեկան է, որի հիմքերը դրվել են դեռևս 19-րդ դարի 70-ական թվականներին՝ սկզբում ընդօրինակելով տարրական կրթահամակարգի ամերիկյան սկզբունքները, իսկ հետագայում դրանք համապատասխանեցնելով ազգային միջավայրին: Մինչև 15-րդ դարի սկիզբը տարրական քառամյա կրթությունը հասանելի էր բացառապես ազնվականների և սամուրայների (ճապոնացի ֆեոդալների) երեխաներին, ովքեր հաճախում էին բուդդայական տաճարներին կից գործող բարձրաշխարհիկ կրթօջախներ: 16-րդ դարում մեծ տարածում ստացան առևտրականների երեխաների համար նախատեսված հատուկ դպրոցները, որտեղ աշակերտները սովորում էին գրել, կարդալ և հաշվել: 17-րդ դարում սամուրայների երախաները հաճախում էին հիմնականում ռազմականացված դպրոցներ, որտեղ սովորեցնում էին ոչ միայն գրել ու կարդալ, այլև դասավանդում էին արևելյան մարտարվեստների այբուբենը՝ պաշտպանողական և հարձակողական բնույթի վարժություններ, ամենօրյա նախավարժանքի տարրեր, խստագույն կարգապահության ու ինքնատիրապետման կանոններ: 18-րդ դարի երկրորդ կեսից հիմնադրվեցին բազմաթիվ հասարակական-հանրային դպրոցներ: Միայն 19-րդ դարի երկրորդ կեսից, ***Մեյջի կայսեր*** գահակալության օրոք առանձնահատուկ ուշադրություն դարձվեց հանրակրթությանը, երբ նախկին դասակարգային սկզբունքով (հարուստների ու աղքատների) գործող դպրոցները փոխարինվեցին հանրակրթական, բոլորի համար մատչելի կրթական հաստատություններով:

1875 թ.-ին Ճապոնիայում հաշվում էին շուրջ 25 000 հանրակրթական դպրոց, սակայն դպրոցահասակ ճապոնացիներից ոչ բոլորն էին ի զորու հաճախել և օգտվել դրանց ծառայություններից, քանի որ նմանօրինակ հաստատություններն առավելապես կենտրոնացած էին խոշոր ծովափնյա քաղաքներում, հետևաբար, գյուղաբնակների շրջանում անչափ բարձր էր անգրագիտության տոկոսաբաժինը: 1902 թ.-ին հնարավոր եղավ տարրական կրթության ոլորտում ընդգրկել դպրոցահասակ ճապոնացիների մոտ 90%-ը (1875 թ.-ին այդ ցուցանիշը կազմել էր 28%): Դրան մեծապես նպաստեց ***1900 թ.-ին*** ընդունված ***Տարրական կրթության մասին Դեկրետը:***

1907 թ.-ից ***Կրթության և Լուսավորության*** նորաստեղծ ***նախարարության*** առաջին հրամաններից մեկով, հաշվի առնելով երկրի տնտեսական վերելքի տեմպերը, պարտադիր հանրակրթության տևողությունը 4 տարուց հասցվեց 6-ի, իսկ ավելի ուշ՝ սկսած 1941 թ.-ից, այն ընդլայնվեց՝ ներառելով 8-ամյա կրթությունը: Հետպատերազմյան տարիներին, սկսած 1947 թ.-ից առ այսօր

գործում է ***պարտադիր 9-ամյա կրթահամակարգը***, որից առաջին վեց տարվա ուսումնառությունը ներգրավված է տարրական կրթության ոլորտում:

Ժամանակակից Ճապոնիայում գործող ավելի քան ***30 հազար*** հանրակրթական դպրոցից տարրական կրթություն են իրականացնում ***22 հազարը***, որից ***21 հազարը*** պետական են, իսկ մնացած հազարը՝ ոչ պետական (մասնավոր): Այսօր արդեն դպրոց է հաճախում 6-12 տարեկան դպրոցահասակ ճապոնացիների 99,8%-ը: Պետական դպրոցներում տարրական կրթությունն անվճար է, ուսումնական շաբաթը՝ վեցօրյա, օրական 5-6 դասաժամ ծանրաբեռնվածությանբ: Տարրական դպրոցների հիմնական կարգախոսն է. «Համազգային միասնություն, հանդուրժողականություն ու ճապոնացի կոչվելու անսահման հպարտություն և պատասխանատվություն»:

2005 թ.-ից նախկին Կրթության և Լուսավորության նախարարության փոխարեն վերակազմավորվեց ***Կրթության, մշակույթի, սպորտի, գիտության և տեխնոլոգիաների (ԿՄՍԳՏ) նախարարությունը,*** որը ներկայումս ձեռնարկում է մի շարք կրթական բարեփոխումներ, վերաիմաստավորում է հին ավանդույթները, ներդնում է արդիական մեթոդաբանություն և հանրակրթական դասագրքեր՝ կիզակետում ունենալով առավելապես տարրական դպրոցը, քանի որ ըստ հոգեբանների ուսումնասիրությունների, մատաղ սերունդն իր գիտելիքների 70%-ը կուտակում է 3-10 տարեկան հասակում: Որքան որ ճապոնական շուրջ 7000 կղզին միմյանցից տարբեր են ու անկրկնելի, նույնքան էլ տարբեր է տարրական դպրոցների առօրյան: Անդրադառնանք դրանցից մի քանիսին.

1.Տոկիոյի Ասակուսա տարրական դպրոցում սովորում է 2000 աշակերտ: Որպեսզի դպրոցի ճաշարանում չգոյանան խառնաշփոթ հերթեր և հրմշտոց, յուրաքանչյուր դասարանի համար սահմանվում է ճաշելու խիստ որոշակի ժամանակացույց: Վերջինս կազմվում է այնպիսի սկզբունքով, որ ճաշարանում միաժամանակ գտնվեն տարբեր տարիքի երեխաներ՝ յուրաքանչյուրն իր համար նշանակված սեղան-աթոռով: Սեղանակից երեխաներն ընտրվում են տարբեր դասարաններից ու տարիքային խմբերից՝ էապես նպաստելով նրանց շփվելու և հաղորդակցվելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Շաբաթվա ընթացքում մեկ օր դպրոցական ճաշարան են հրավիրվում մոտակայքում բնակվող ծերունիներ, ովքեր ճաշում են երեխաների հետ համատեղ, զրուցում նրանց հետ՝ դրանով իսկ նպաստելով տարբեր տարիքի սերունդների շփմանը, ինչն ըստ հոգեբանների, հնարավորություն է տալիս հաղթահարել բազմաթիվ բարդույթներ և կարծրատիպեր:

2.Սիձուոկայի Կատո Գակուեն տարրական դպրոցում 1965 թ.-ից գործում է Կանադայում մշակված ուսումնական մեթոդաբանությունը, երբ բացառությամբ ճապոներենի և աշխարհագրության, մնացած բոլոր առարկաները դա-

սավանդվում են անգլերենով: Առաջինից-երրորդ դասարաններում դպրոցական առօրյայի 70%-ն ընթանում է անգլերենի ուղեկցությամբ, որի մասնաբաժինը չորրորդից-վեցերորդ դասարաններում հասցվում է 50%-ի:

3.Հարիմայի Կո·են Հի·ասիի տարրական դպրոցն առաջին հայացքից թողնում է գիտահետազոտական հիմնարկության տպավորություն: Դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և ֆիզիկայի ուսուցմանը, որոնք ընթանում են կաբինետային սկզբունքով՝ երբեմն ուղեկցվելով մոտակա համալսարաններից հրավիրված մասնագետների դասախոսություններով:

4. Տոկիոյի Յանակա դպրոցում գործում է այսպես կոչված ***«բաց դասավանդման»*** սկզբունքը, երբ դասասենյակային պարապմունքները չունենալով հստակ սահմանված դասացուցակ, հնարավորություն են տալիս ընդլայնել երեխաների շփման եզրերն արտաքին աշխարհի հետ: Դպրոցի սպասասրահում, անմիջապես շքամուտքի հարևանությամբ, որն իր զբաղեցրած մակերեսով հավասարազոր է ավելի քան 10 դասասենյակի գումարային մակերեսին, տեղաբաշխվում է 3-4 «դասարանական միջավայր», որոնք երեք կողմից իրարից բաժանվում են թափանցիկ ապակե հավաքովի պատերով, իսկ չորրորդ կողմով դուրս են նայում բաց շրջապատին: Դասամիջոցներն ու դասերն անցկացվում են նույն տարածքում, ինչի արդյունքում տարբեր տարիքի երեխաների ազատ շփումը միմյանց կամ ուսուցիչների հետ նկատելիորեն մեծացնում է աշակերտների հաղորդակցվելու կարողությունները, նրանց դարձնում ավելի ինքնուրույն և պատասխանատու: Այստեղ չկան մեզ համար սովորական 45 րոպեանոց դասերի սկիզբն ու ավարտը ազդարարող զանգեր և դասն ավարտվում է ուսուցչի հայեցողությամբ: «Բաց դասավանդման» սկզբունքը, ինչպես նկատել են ճապոնացիները, բացում է երեխաների ուղեղները:

5.Տոկիոյի Աքաբանեդայ տարրական դպրոցը Ճապոնիայում առաջիններից մեկն էր, որտեղ 1986 թ.-ին բացվեց համակաչգչային դասասենյակ՝ հագեցած տեղեկատվական տեխնոլոգիաների ամենավերջին խոսքով: Ներկայումս ողջ երկրի տարածքում այն միակն է, որ 2300 աշակերտի համար ապահովված է անհատական համակարգիչներով: Դրանք միացած են մեկ միասնական ցանցին և հնարավորություն են տալիս օգտվել ինտերնետի ծառայություններից: Այս դպրոցում ընդունելությունը կազմակերպվում է բավականաչափ բարդ մրցույթի արդյունքներով, քանի որ մեկ տեղին հավակնում է 50-55 թեկնածու: Դասընթացների հիմնական մասն ուղեկցվում է համակարգչի օգտագործմամբ: Դասարաններում ձևավորվում են 4-5 հոգանոց աշխատանքային խմբեր, որոնք

ամեն շաբաթ ներկայացնում են նախապես հանձնարարված թեմայով նախագծեր, հաշվետվություններ, մշակումներ, ռեֆերատներ, ալբոմներ:

6.Նա·անոյի Յասակա տարրական դպրոցը գործում է յուրատեսակ առաքելությամբ, այն է՝ ***·յուղական միջավայրում ·ձրծող կրթական հաստատություն ·երխիտ բնակեցված քաղաքաբնակների համար:*** Ճապոնիայի մարդաշատ քաղաքների (մեկ միլիոնից ավելի բնակչությամբ քաղաքաների թվաքանակը Ճապոնիայում հասնում է 35-ի) բնակիչները նախընտրում են իրենց երեխաներին տեղավորել մերձքաղաքային գյուղական բնակավայրերում գործող դպրոցներում, աղմուկից և ծխից հեռու միջավայրում: Ահա հենց այսպիսին է 1976 թ.-ին հիմնադրված Յասակա դպրոցը, որն ունի նաև կից գործող հանրակացարան՝ նախատեսված ավելի հեռավոր շրջաններից ժամանող աշակերտների համար: Հանրակացարանում չկան ո'չ հեռուստացույց, ո'չ համակարգիչ: Դա արված է միտումնավոր, նպատակ ունենալով երեխաների հանգիստն անցկացնել առանց տեղեկատվական ալեհոսքի: Փոխարենը՝ հաճախակի կազմակերպվում են արշավներ և էքսկուրսիաներ, վրանային հանգստի ու մարզական միջոցառումներ, իսկ ձմեռային ամիսներին՝ դահուկային մրցավազքեր:

Թեև Ճապոնիայում գործող տարրական դպրոցներն առաջնորդվում են տարբեր մեթոդաբանությամբ, չպետք է ենթադրել, որ դրանք հսկողությունից դուրս են, գործում են ըստ իրավիճակի և պահանջարկի: Յուրաքանչյուր բնակավայրում, լինի դա միլիոնանոց քաղաք, թե փոքրիկ լեռնային գյուղ, ամենուրեք գործում են կրթության տեղական խորհուրդներ կամ ***«հիյոկու-կայ»*** - ներ: Դրանց գործունեությունը կազմակերպվում է ինքնավարության սկզբունքով՝ համաձայն 1952 թ. և 1956 թ. օրենսդրական ակտերից բխող պահանջների:

Նկ. 29. Ճապոնիայի հանրակրթական դպրոցներում պահանջները խիստ են:

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ճապոնիայում Կրթության նախարարին նշանակում է վարչապետը, սակայն տեղակալների և առանձին բաժինների ու բաժանմունքների պետերին ընտրում է անձամբ նորանշանակ նախարարը՝ ձևավորելով որոշակի աշխատանքային թիմ և պատասխանատվություն կրելով հնարավոր թերացումների համար: ԿՄՍԳՏ նախարարությունը կազմված է երկու քարտուղարությունից՝ տարրական կրթության և միջնակարգ ու բարձրագույն կրթության: Դրանցից բացի կան 6 բաժանմունք. դաստիարակության, գիտության, սոցիալական կրթության, մարմնակրթության, հետազոտությունների, վարչական վերահսկողության: Նախարարության վերահսկողության տակ են գտնվում նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ազգային Կոմիտեն, Գիտությունների Ազգային թանգարանը, Տոկիոյի և Կիոտոյի ազգային թանգարանները, Ժամանակակից Արվեստների Ազգային թանգարանը:

Այսօրինակ հսկայական պետական կառույցի գործունեության բնագավառում նախարարի դերակատարումն ավելի շատ խորհրդատվական է, քան վարչահրամայական, սակայն պետական ֆինանսավորման միջոցների հատկացման և բաշխման գործառույթներն իրականացվում են ըստ նախարարի հայեցողության՝ հաշվի առնելով կրթության տեղական խորհուրդներից ստացված հայտերի հիմնավորվածությունը: Ստացվում է, որ նախարարը ոչ այնքան կառավարում, որքան որ կանոնակարգում է կրթության ոլորտի աշխատանքային գործունեությունը:

1968 թ.-ի հունիսին ընդունված օրենքով, կրթության և դաստիարակության գործառույթները տարանջատվեցին: Ստեղծվեց մշակութային և լուսավորության հարցերով զբաղվող ինքնուրույն համապետական տեսչություն, որն ուղղակիորեն ենթարկվում էր վարչապետին: Տեսչության գերխնդիրներն են՝ մշակույթի զարգացումը, մշակութային արժեքների պահպանումն ու դրանց մասին տեղեկատվության տարածումը, ինչպես նաև միջազգային կապերի ընդլայնումը և միջմշակութային փոխադարձ կապերի հաստատումը: Տեսչության աշխատանքները տեղերում արդյունավետ դարձնելու նպատակով, գործում են հանրային-կրթական կենտրոններ՝ ***«կոմին-կան»*** -եր: Վերջիններիս ջանքերով կազմակերպվում են պատանիների, երիտասարդների ու մեծահասակների համար նախատեսված տարաբնույթ դասընթացներ, անցկացվում են բազմաբովանդակ միջոցառումներ՝ ուղղված նույնիսկ հեռավոր գյուղերում մշակութային կյանքի զարգացմանը և հարս-

տացմանը, ստեղծվում են նպաստավոր պայմաններ, որպեսզի յուրաքանչյուր ճապոնացի կարողանա զբաղվել պոեզիայով, գեղանկարչությամբ, ազգագրական երգ-երաժշտությամբ, ազգային խոհարարությամբ, ազգային ավանդույթների ու սովորույթների ուսումնասիրմամբ:

Ճապոնիայի ԿՄՍԳՏ նախարարության առաջնահերթ խնդիրներից են, ոչ այնքան կրթության որակի բարձրացումն ու դրա նկատմամբ վերահսկողությունը, որքան որ աշակերտների և ուսանողների շրջանում ազգային ոգու պաշտամունքի ձևավորումը, բարոյական բարձր նորմերի հաստատումը, ազգային գաղափարախոսության արմատավորումը, ազգային բնավորության ու մտածելակերպի զարգացումը: Հանրակրթության բոլոր մակարդակներում դաստիարակվում և քարոզվում է հարգանք մեծահասակների, ծնողների, ուսուցիչների *(«սենսեյ»*-ների՝ բառացի թարգմանությամբ նշանակում է *«վողորոք ծնված»)*, մերձավորների ու ընկերների հանդեպ: Ճապոնիան աշխարհի եզակի երկրներից է, որտեղ կրթության և ուսուցման գործընթացն ամենատարբեր մակարդակներում կազմակերպվում է խմբակային համագործակցության և գործընկերության սկզբունքով՝ ձևավորելով 4-8 հոգանոց խմբակներ՝ *«հան»*-եր, որոնցից յուրաքանչյուրն իր համար ընտրում է որոշակի հնչեղ անվանում:

«Հան»-երի ձևավորումն ընթանում է որոշակի սկզբունքով՝ բացառելով միևնույն խմբում սեռական հատկանիշներով հավաքագրումը (միայն աղջիկներ կամ միայն տղաներ), ինչպես նաև նույնատեսակ նախասիրություններով կամ միանման մտավոր կարողություններով օժտվածների համատեղումը: Մոտեցումն այնպիսին է, որ «հան»-ի անդամները պետք է միմյանց փոխլրացնեն, համալրեն և վերահսկեն, օգնեն ու օժանդակեն, հարգեն և երբևէ չնախանձեն, միաժամանակ քննադատեն ու հանդուրժեն: «Հան»-երի այդօրինակ ներքին կարգ ու կանոնը մշակվում է ուսուցիչների անմիջական մասնակցությամբ: Ի դեպ, ուսուցիչները դասվում են Ճապոնիայում ամենաբարձր վճարվող մասնագետների շարքին: Օրինակ՝ քոլեջի 5 տարվա ուսումնառությամբ նորավարտ մանկավարժ-ուսուցիչը ստանում է 1250 ԱՄՆ դոլարին համարժեք 165 հազար ճապոնական յեն աշխատավարձ, իսկ համալսարանական դիպլոմով շրջանավարտը՝ 1450 ԱՄՆ դոլար: Յուրաքանչյուր 10 տարվա աշխատանքային ստաժ լրացնելիս՝ուսուցիչը ստանում է մեկնարկային աշխատավարձի համեմատ մինչև 50%-անոց հավելավճար: 20 տարվա աշխատանքային փորձառությամբ ուսուցչի ամսական աշխատավարձը կազմում է 1800-2000, 25 տարվա պարագայում՝ 2200-2400, իսկ 30 տարվա դեպքում՝ 2600-3000 ԱՄՆ դոլար: Այժմ ծանոթանանք Ճապոնիայի միջնակարգ կրթության համակարգին:

Եթե Ճապոնիայի տարրական կրթական համակարգը շատ բան ընդօրինակել է Ֆրանսիայից, ապա միջնակարգ կրթահամակարգն առավելապես ձևավորվել է ԱՄՆ-ի համանման կրթական ոլորտի ձևաչափով՝ բաժանվելով երկու ենթամակարդակի. ընդհանուր միջնակարգ և լրիվ միջնակարգ: Սրանց գլխավոր տարբերությունը նրանում է, որ եռամյա ընդհանուր միջնակարգ կրթությունը (7-ից 9-րդ դասարաններ, 12-14 տարեկանների համար) պարտադիր է ու անվճար, մինչդեռ լրիվ միջնակարգ կրթությունը (10-ից 12-րդ դասարաններ, 15-17 տարեկանների համար) վճարովի է և ոչ պարտադիր: Միջնակարգ կրթության միջնամասում, 9-րդ դասարանից 10-րդ դասարան փոխադրվելիս կամ միջնակարգ կրթության առաջին աստիճանից երկրորդ աստիճանին անցնելիս, աշակերտները հանձնում են բավականաչափ խստացված քննություններ: Հենց այս է պատճառը, որ շատերի համար ճապոնական միջին դպրոցներում ուսումնական գործընթացը ենթադրում է ոչ այնքան ստեղծագործական նպատակամղվածությամբ գիտելիքների ձեռքբերում, որքան որ տեղեկատվական ու փաստագրական նյութերի արմատական մտապահում և հիշողության յուրատեսակ վարժանքի շնորհիվ առավելապես ավարտական քննությունների համար անհրաժեշտ դասերի մանրակրկիտ սերտում:

Միջին դպրոցի ուսումնառությունը մեծամասամբ ընկալվում է, որպես քոլեջ կամ համալսարան ընդունվելուն նպատակաուղղված քննությունների նախապատրաստական շրջափուլ: Միջին դպրոցի մյուս կարևոր առանձնահատկությունը մասնագիտական տարբեր ուղղվածության դասընթացների անցկացումն է, երբ 12-14 տարեկանները նախնական գիտելիքներ են կուտակում գյուղատնտեսության, արդյունաբերական արտադրության, առևտրի և տնայնագործության, իսկ մի շարք դպրոցներում՝ նաև էլեկտրատեխնիկայի, կապի միջոցների, ԷՀՄ-ների մասին: Տարրական դպրոցներում շրջանառվող խմբակային ուսուցման սկզբունքը սահուն փոխանցվում է նաև միջին դպրոց, միայն այն տարբերությամբ, որ աշակերտական խմբակները դառնում են 3-5 հոգանոց և գործում են ընդամենը 5-ական ամիս, որից հետո դրանք ամբողջությամբ վերադասավորվում են:

Միջնակարգ կրթության առաջին աստիճանում շարունակելով տարրական դպրոցից փոխանցված պարտադիր հանրակրթական դասընթացները՝ ճապոներեն լեզու և գրականություն, մաթեմատիկա, հասարակագիտություն, բարոյագիտություն, բնագիտություն, գեղագիտություն, երգ-երաժշտություն, մաս-

նագիտական հատուկ գործունեություն, ֆիզիկական դաստիարակություն, տեխնիկական ու արհեստագործական վարպետություն և տնայնագործություն, ավելացվում են ևս 3-4 պարտադիր (անգլերեն, խորացված մաթեմատիկա, հողագործության հիմունքներ, արտադրության կառավարում) և 5-6 ընտրանքային դասընթաց, որոնց յուրացման համար սահմանվում է 6-օրյա ուսումնական շաբաթ՝ օրական 6 դասաժամ ծանրաբեռնվածությամբ: Ժամանակակից Ճապոնիայում միջին դպրոցի առաջին աստիճանի դասընթացներ իրականացվում են շուրջ ***10 000 դպրոցում*** (8 500 պետական և 1 500 ոչ պետական), որոնցում սովորում է ավելի քան ***5 մլն. աշակերտ***, կամ մեկ դպրոցում միջին հաշվով 500-ական սովորող:

Մեր իրականության համար անսովոր ու անծանոթ «մասնագիտական հատուկ գործունեություն» առարկայի դասընթացը ենթադրում է խմբակային և ակումբային միջավայրում, խորհրդաժողովներում, մարզական միջոցառումներում, ճանաչողական արշավներում, տոնական արարողություններում աշակերտների վարքի դրսևորման կանոնների համակարգված ուսումնառություն: «Տեխնիկական ու արհեստագործական վարպետություն» առարկայի դասընթացը սովորեցնում է հողի մշակման, կենդանիների խնամքի, դիզայներական, գծագրական, հնարավոր երկրաշարժերից պաշտպանվելու, ավտոմեխանիկական պարզագույն հմտություններ: Որոշ մասնավոր միջին դպրոցներում «բարոյագիտությանը» զուգընթաց ուսումնասիրում են նաև կրոնի (սինտոյականության, կոնֆուցիականության, բուդդայականության) պատմություն, իսկ ֆիզիկական դաստիարակության փոխարեն կազմակերպում են տարբեր մարզաձևերի խորացված պարապմունքներ: Պետական և ոչ պետական բոլոր դպրոցներում գործում է աշակերտական հերթապահության որոշակի սկզբունք, երբ ամեն օր ընտրվում է դասարանի ավագ-կառավարիչ կամ ***«թոբան»***, ով այդ օրը պատասխանատու է դասասենյակի մաքրության և կահավորանքի, համադասարանցիներին ճաշարանում տեղավորելու և այլ կազմակերպչական բնույթի հարցերի համար: «Թոբան»-ի կարգավիճակում փոխնիփոխ հայտնվում են բոլորն առանց բացառության: Ի դեպ, «բարոյագիտություն» առարկայի դասընթացը մեծամասամբ նվիրվում է աշակերտների մոտ «ինքնաքննադատության» ձևավորմանը: Դա հնարավորություն է տալիս ազատ ու անկաշկանդ արտահայտել սեփական տեսակետը դպրոցում տեղ գտած թերացումների, սեփական արարքների հետևանքների, «հան»-երի անհաջողություններում յու-ռաքանչյուրի ունեցած դերակատարման մասին: Այսպիսով, «հան»-երի ու «թոբան»-երի գործունեությամբ դպրոցականների մոտ ձևավորվում են սեփական «ես»-ի կա-

րևորության, մրցակցային ոգու, սրտացավության ու այլ հասարակական արժեքներ: Այս ամենն ընթանում է ուսուցիչների անմիջական վերահսկողությամբ, հետևաբար, ճապոնական հասարակությունն առանձնահատուկ վերապահումով է վերաբերվում ուսուցիչների կարգավիճակի և կենսամակարդակի բարելավմանը միտված կառավարական որոշումներին, որոնք տարեցտարի ընդլայնում են ուսուցիչների համար սահմանվող արտունությունների շրջանակը: Մասնավորապես, երեխաներ չունեցող, բայց ընտանիք կազմած ուսուցիչներին ամեն ամիս վճարվում է 100-120, մեկ երեխա ունեցողին՝ 30, երկու երեխա ունեցողին՝ 75 ԱՄՆ դոլարին համարժեք հավելավճար-նպաստ:

Ավագ դպրոցում երեխաները հայտնվում են 15 տարեկանում՝ նախապես հաղթահարելով անցումային քննությունների փորձաշրջանը: Աշխարհի տարբեր երկրներում մշակված արտադրական և կրթական նորամուծությունները երբեմն Ճապոնիայում ավելի շուտ են ներդրվում, քան նույն այդ նորամուծությունները հեղինակած երկրներում, սակայն այդօրինակ ներդրումներն ընդօրինակվում են ոչ թե կուրորեն, այլ հարստացվում են ազգային բովանդակությամբ, ինչն էլ հնարավորություն է տալիս հասնել արտառոց ձեռքբերումների, որի ցայտուն վկայությունն է ***«ճապոնական հրաշքի»*** բացառիկությունը (ֆենոմենը):

Ավագ դպրոցի ռազմավարական առաջնահերթություններից առավել ուշագրավ են հետևյալ սկզբունքները.

1. Դաստիարակել և կրթել ստեղծագործող, ազատ ու արտառոց մտածող, հոգեպես հարուստ ու ներդաշնակ զարգացող անհատականություններ:
2. Փոխանցել աճող սերնդին ճապոնական հասարակության ավանդական բարոյական ու մշակութային արժեքները՝ աշխատանքային գործունեության խմբակային ոգին, հարգանքը մարդու և սերը հայրենի բնության նկատմամբ, առավելագույն ձգտումը ստեղծագործական ինքնանվիրման:
3. Ծառայեցնել կրթության և ուսուցման համակարգը պետության ինքնատիպության ամրապնդմանն ու հարստացմանը:
4. Ապահովել յուրաքանչյուրի համար ինքնադրսևորման, ինքնահաստատման և առաջընթացի պայմաններ:
5. Իրականացնել կրթական բարեփոխումներ՝ հասարակական լայն քննարկումների համատեքստում, ոչ մի կերպ չվնասելով ազգային

ինքնագիտակցության և հայրենասիրական զգացմունքայնության ամրապնդմանը:

6. Խրախուսել յուրաքանչյուրի կամային ձգտումներն ու խմբակային շահերից բխող նախաձեռնությունները:
7. Վերահսկել դպրոցական առօրյան՝ արմատախիլ անելով ազգային փոքրամասնությունների և այլադավանների նկատմամբ արհամարանքի ու անհանդուրժողականության ցանկացած դրսևորում:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԻՆ (ՔՈԼԵՋԱՅԻՆ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ (ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ի տարբերություն աշխարհի շատ երկրների, Ճապոնիայում մասնագիտական կրթության միջին (քոլեջային) և բարձրագույն (համալսարանական) մակարդակները սերտորեն միահյուսված են՝ ընդգրկելով ուսումնական հաստատությունների 4 հիմնական խումբ.

1. Լրիվ շրջափուլով (ցիկլով) համալսարաններ (ուսումնառությունը տևում է 4 տարի):
2. Արագացված շրջափուլով (կարճաժամկետ) համալսարաններ (ուսումնառությունը տևում է 2 տարի):
3. Մասնագիտական քոլեջներ (ուսումնառությունը տևում է 3-ից 5 տարի):
4. Տեխնիկական ինստիտուտներ (ուսումնառությունը տևում է 5 տարի):

Լրիվ շրջափուլով համալսարաններում ուսումնառության տևողությունը 4-ից 6 տարի է: Վեցամյա կրթությամբ առանձնանում են բժշկագիտական և անասնաբուժական ֆակուլտետները: Համալսարան ընդունվելու համար պարտադիր է միջնակարգ կրթության երկրորդ աստիճանի (ավագ դպրոցի) ավարտական վկայականի (հասունության ատեստատի) կամ որևէ մասնագիտական քոլեջի ավարտական դիպլոմի առկայությունը: Ճապոնիայի լրիվ շրջափուլով համալսարաններն աշխարհում միակն են, որտեղ գործում է «ուսանող-հետազոտողի» (ճապոներեն տարբերակով՝ ***«կենկյուսեյ»***) կարգավիճակ: Դրա էությունը նրանում է, որ եթե ուսանողը նպատակադրվել է հասնել գիտական աստիճանի, ապա համալսարանական նվազագույնը քառամյա ուսումնառությանը զուգընթաց կարող է զբաղվել ընտրած մասնագիտության բնագավառում գիտահետազոտական աշխատանքով՝ հատուկ այդ նպատակին ծառայող 6 ամսից մինչև ակադեմիական մեկ տարի տևողությամբ լրացուցիչ դասընթաց-

ների միջոցով: Ճապոնիայում գործում են «ուսանող-հետազոտողների» երկու հիմնական ծրագիր.

ա/լրացուցիչ դասընթացների հաճախումներ մեկ այլ համալսարանում՝ հիմնական-հենակետային համալսարանի ղեկավարության համաձայնությամբ.

բ/ լրացուցիչ դասընթաց օտարերկրացի ուսանողների համար, ովքեր ճապոնական որևէ համալսարան ընդունվելու համար պետք է նախ ավարտեն երկամյա նախապատրաստական ուսումնառությունը, դրանից հետո վերադառնան հայրենիք, որտեղ ձեռքբերելով որոշակի մասնագիտական կրթություն՝ նոր միայն հնարավորություն կունենան մեկ անգամ ևս ընդգրկվել ճապոնական համալսարանների կազմակերպած գիտահետազոտական դասընթացներում:

Լրիվ շրջափուլով համալսարանական կրթություն ստացած շրջանավարտներին հնարավորություն է տրվում ուսումնառությունը շարունակել մագիստրատուրայում (2 տարի), իսկ վերջինիս հաջող իրականացումից հետո՝ դոկտորանտուրայում (5 տարի): Արագացված շրջափուլով համալսարաններում սովորողների մոտ 60%-ն աղջիկներ ու կանայք են, քանի որ 2 կամ 3 տարվա ուսումնառությունը հնարավորություն է տալիս արժանանալ ճապոնական աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեցող այնպիսի մասնագիտություններին, ինչպիսիք են տնտեսագետի, գրականագետի, լեզվաբանի, թարգմանչուհու, մանկավարժ-դաստիարակի, բուժքրոջ, սոցիալական ոլորտի գործակալի որակավորումները: Չնայած այս ամենին, ճապոնական խիստ պահպանողական հասարակության շրջանում կնոջ հիմնական դերակատարումը ոչ այնքան քաղծառայողի պաշտոնավարման սանդղակով վերընթաց առաջխաղացումն է, որքան որ ընտանիք կազմելու և մայրանալու առաքելությունը:





Նկ.30. Ճապոնիայում քոլեջները տրամադրում են բազմաբովանդակ ծառայություններ:

Մասնագիտական քոլեջներում իրականացվում են առավելապես նեղ մասնագիտական դասընթացներ: Միջին դպրոցի շրջանավարտների (15 տարեկանների) համար քոլեջային ուսումնառությունը նախատեսում է 5 տարի, իսկ ավագ դպրոցի շրջանավարտների (17-18 տարեկանների) համար՝ եռամյա ժամկետ: Երիտասարդության շրջանում բարձր վարկանիշ են վայելում տեխնիկական ինստիտուտները, որոնց շրջանավարտները հաջողությամբ աշխատանք են գտնում գիտահետազոտական, գիտաարտադրական և նախագծային կենտրոններում, բարձր տեխնոլոգիաների արտադրական ձեռնարկություններում կամ ծովային առևտրային նավատորմում: Վերջին 20 տարում մեծ պահանջարկ են ստացել արագացված կամ կարճաժամկետ շրջափուլով համալսարանական դասընթացները, որոնք ոչ միայն ներգրավում են աղջիկներին, այլև՝ օտարերկրացիներին: Վերջիններիս համար ուսումնառությունը կարող է հասցվել 1 տարի տևողության՝ առաջարկելով սահմանափակ թվով մասնագիտական դասընթացներ. ճապոներեն լեզու և գրականություն, ճապոնական մշակույթ, տնտեսագիտություն, ձեռնարկատիրություն, հասարակագիտություն: Այդօրինակ դասընթացներ ներկայումս կազմակերպվում են շուրջ 20 ոչ պետական համալսարանում: Ընդհանուր առմամբ, Ճապոնիայի քոլեջներում և համալսարաններում սովորում է շուրջ *3,5 մլն.* ուսանող, որից օտարերկրացի են մոտավորապես *10 հազարը*: Նշենք նաև, որ ուսումնական մեկ տարվա վարձը ճապոնական լրիվ շրջափուլով համալսարաններում կազմում է *7 000 – 11 000 (5200-8300 եվրո),* արագացված շրջափուլով համալսարաններում՝ *5 000 – 10 000 (3750-7500 եվրո),* մասնագիտական քոլեջներում՝*1 500-2 500 (1200-1900 եվրո),* իսկ տեխնիկական ինստիտուտներում՝*6 000-8 000 ԱՄՆ դոլար (4500-6000 եվրո):*

Տոկիոյի համալսարանը հիմնադրվել է *1877 թ.*-ին: Այն Ճապոնիայում ամենահեղինակավորն է: Ունի 10 ֆակուլտետ, որոնցում սովորում է *30 000* ուսանող՝ *2100-ն* օտարերկրացի: Միջազգային համբավ են վայելում բանասիրական և իրավաբանական ֆակուլտետները: Համալսարանի շրջանավարտներից 4-ն արժանացել են Նոբելյան մրցանակի դափնեկրի կոչման, ևս 5-ը տարբեր տարիների զբաղեցրել են Ճապոնիայի վարչապետի պաշտոնը:

Նշանակությամբ երկրորդը՝ Օսակայի համալսարանն է, որը հիմնադրվել է *1869 թ.*-ին, ունի 14 ֆակուլտետ՝ *34 000* ուսանողով:

Մասնավոր ուսումնական հաստատություններում, պետական համանման հաստատությունների համեմատ, ուսման վարձավճարները 1/3 մասով ավելի բարձր են, սակայն դա ոչ մի կերպ չի ազդում մրցութային շեմի վրա:

Կրթական համակարգի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի, քաղաքապետարանների և համայնքային տեղական ինքնակառավարման մարմինների միջոցների հաշվին: Ճապոնիայի կրթական քաղաքականությունը նախատեսում է, որ յուրաքանչյուր դեռահաս, պատանի կամ երիտասարդ իրավասու է և պահանջատեր, որպեսզի կրթվի միանման մասնագի-տական որակավորմամբ ուսուցիչների (դասախոսների) կողմից ու միատեսակ հագեցվածությամբ դպրոցներում (քոլեջներում, համալսարաններում), հետևաբար, պետությունը ֆինանսավորում է ոչ միայն պետական, այլև՝ ոչ պետական ուսումնական հաստատություններին:

Կրթական ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները կազմում են պետական բյուջեի 18-20%-ը կամ տարեկան ՀՆԱ-ի 4,5-5%-ը, որի կեսից ավելին ուղղվում է տարրական, միջնակարգ և միջին մասնագիտական կրթական մակարդակներին, 15%-ը՝ բարձրագույն կրթամակարդակին, 5%-ը՝ մասնավոր ուսումնական հաստատություններին, 4,5%-ը՝ նորագույն սարքավորումների ձեռքբերմանը, 2-ական տոկոս՝ գիտահետազոտական (մագիստրատուրայի, դոկտորանտուրայի) աշխատանքներին ու կրթաթոշակներին, ևս 1,5%-ը՝ դասագրքերի հրատարակմանը: Կրթական ոլորտի ֆինանսական ծախսային կառուցվածքում 55%-ը հատկացվում է աշխատավարձերի վճարմանը, 20%-ը՝ ուսումնական գործընթացի կազմակերպմանը (կահավորում, նյութատեխնիկական բազայի համալրում, արտադրական պրակտիկա և այլն), 13%-ը՝ պայմանագրային աշխատանքներին, 9%-ը՝ համալսարանական հիվանդանոցների սպասարկմանը, մնացած 3%-ը՝ դասասենյակների վերանորոգմանն ու տե-ղեկատվական (համակարգչային) սարքավորումների թարմացմանը:

Վիճակագրական տվյալները վկայում են, որ Ճապոնիայի քոլեջներում և համալսարաններում սովորողների 80%-ը զբաղված է ազատ գրաֆիկով ապրուստի միջոց վաստակելով՝ օրական միջինը 40-80 ԱՄՆ դոլարին համարժեք աշխատավարձով: Կրթական համակարգի կառուցվածքում գործող կրթաթոշակային հիմնադրամն ամեն տարի կրթաթոշակ է հատկացնում քոլեջներում սովորողների 10%-ին, համալսարանական ուսանողների 44%-ին, մագիստրատուրայի ունկնդիրների 45%-ին և դոկտորանտուրայում հետազոտողների 63%-ին:

Համալսարան ընդունվելը Ճապոնացի երիտասարդների մեծամասնության գերնպատակն է: Համալսարաններում չկան մեր պատկերացմամբ ֆակուլտետներ և ամբիոններ: Դրանց փոխարեն գործում են ուսումնական *(«հակու·ոն»)* և գիտահետազոտական *(«հակուկեյ»)* բաժանմունքներ: Առաջին կուրսեցիների ընդունելությունը կատարվում է ըստ բաժանմունքների, համա-

պատասխան ծածկագրերի (կոդերի) վերծանմամբ, որի մասին դիմորդները տեղեկանում են պաշտոնական լրատվամիջոցների հրապարակած սանդղակից: Ընդունելության թեժ և լարված մրցակցության համեմատ, ուսուցման բուն գործընթացը դեռևս շարունակում է ավելի մեծ ուշադրություն հրավիրել ձևական կողմին, քան բովանդակային հագեցվածությանը: Հենց այս անհամապատասխանությունը վերացնելու նպատակով էլ 2005-2006 թթ. ուսումնական տարվանից փորձեր են ձեռնարկվում, որպեսզի անգլերենին տրվի պետական երկրորդ լեզվի կարգավիճակ, ուսումնական վեցօրյա շաբաթը դարձվի եռօրյա (երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ), հանրակթական պարտադիր դասընթացների ժամաքանակը կրճատվի 40%-ով, իսկ երեքշաբթի և հինգշաբթի օրերին անցկացվեն լրացուցիչ, ֆակուլտատիվ կամ մասնագիտական կողմնորոշման ու խորացման դասընթացներ:

Վերլուծաբանների կարծիքով, Ճապոնիայի կրթական համակարգն իր համապարփակ ձեռքբերումներով աշխարհում առայժմ չորրորդն է՝ զիջելով Սինգապուրին, Կորեայի Հանրապետությանը և Ֆինլանդիային:

Նկ.31.Ճապոնիայի առաջատար համալսարանները. Տոկիոյի, Օսակայի, Հոկկայդոյի, Կուամոտոյի, Կիոտոյի և Նագոյայի:

ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իսրայելը կամ Իսրայելի Պետությունն աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվել է 1948 թ.-ի մայիսի 14-ից: Զբաղեցնում է մոտավորապես *22 հազար* քառ. կմ մակերես: Բնակչության թվաքանակը կազմում է *7,5 մլն. մարդ* (2009 թ.), ուրբանիզացման մակարդակը՝ շուրջ *92 %:* Իսրայելը հանդիսանում է պառլամենտական հանրապետություն, որտեղ պետական կարգավիճակ ունեն եբրայերենն ու արաբերենը:

Նկատենք, որ իսրայելցիները, հատկապես հրեաները, տեխնոլոգիական-համակարգչային գրագիտության տեսանկյունից աշխարհում ամենապատրաստվածներից են, քանի որ ազգաբնակչության 75%-ն ազատ հնարավորություն ունի օգտվել ինտերնետի ծառայություններից, իսկ 14 տարեկանից բարձր տարիքի քաղաքացիների 62%-ն ամեն օր փաստացի օգտվում է դրանից: Այս ցուցանիշով Իսրայելն աշխարհում զիջում է միայն ԱՄՆ -ին:

Կրթության մասին օրենքն Իսրայելում ընդունվել է դեռևս 1953 թ.-ին: Կրթական համակարգի ժամանակային տևողության տեսանկյունից Իսրայելն աշխարհում զիջում է միայն Կորեայի Հանրապետությանը՝ Ճապոնիայի հետ միասին բաժանելով երկրորդ հորիզոնականը: Ըստ վերոհիշյալ օրենքի, Իսրայելում գործում են հինգ տեսակի դպրոց. պետական հանրակրթական, պետական կրոնական, ազգահայրենասիրական, համայնքային և արաբական: Կրթությունն այստեղ պարտադիր է 6-ից 15 տարեկանների համար, և որպեսզի հասանելի լինի հասունության ատեստատը, պարտադիր է ուսումնասիրել մաթեմատիկա, եբրայերեն, անգլերեն, հրեական ու համաշխարհային գրականու-

թյուն, քաղաքագիտություն ու ***Օրենք*** (***Թորա***՝ հուդդայականության սուրբ գիրքը): Արաբական դպրոցներում Օրենքի փոխարեն դասավանդվում է ***«Իսլամի պատմություն»:*** Ի տարբերություն աշխարհի մի շարք առաջատար երկրների, Իսրայելում կրթական համակարգը խիստ քաղաքականացված է: Այն գտնվում է կառավարության ամենօրյա ուշադրության կենտրոնում և կրթական ոլորտին առնչվող ցանկացած բարեփոխում կամ առաջին հայացքից աննշան թվացող որոշում ներդրվում կամ իրականացվում է համակողմանի քննարկումների արդյունքում: Դա թերևս կարելի է բացատրել այն հանգամանքով, որ երկրորդ աշխարհամարտից հետո ընկած 60-ամյա պատմական ժամանակաշրջանում աշխարհի ամենատարբեր անկյուններից Իսրայել են ներգաղթել ավելի քան 3 մլն. մարդ՝ իրենց հետ «Ավետյաց երկիր» տեղափոխելով տարարժեք ու տարաբնույթ կրթամշակութային արժեքային զուգորդումներ, որոնք կարիք ունեն համակարգման, տեղայնացման, հրեական ազգային գաղափարախոսության հետ ներդաշնակեցման: Այսօրվա հրեական դպրոցների, քոլեջների և համալսարանների շրջանավարտներն առանց դժվարության աշխատանքային գործունեություն են ծավալում բազմաթիվ տնտեսապես հզոր ու կայացած երկրներում, դրանց քաղաքական, տնտեսական, ֆինանսական համակարգերում, անդրազգային և միջազգային հեղինակություն վայելող կազմակերպություններում:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ժամանակակից Իսրայելի Պետության կրթական համակարգն անցել է ձևավորման, կայացման, զարգացման ու բարեփոխումների ոչ այնքան տևական, սակայն դժվարին ճանապարհ, ինչին մեծապես խոչնդոտել է արաբական աշխարհի կողմից չմարող լարվածությամբ հակազդեցությունը: Չնայած բոլոր դժվարություններին, անկախության հռչակման առաջին իսկ ամիսներից ձեռնարկվեցին պետահիրավական ծանրակշիռ միջոցառումներ, մասնավորապես, 1949 թ.-ին ընդունվեց «Պարտադիր կրթության մասին օրենքը» (հետագայում, 1978 թ.-ին այն նկատելիորեն լրամշակվեց), 1953 թ.-ին՝ մեզ արդեն հայտնի «Կրթության մասին պետական օրենքը», 1958 թ.-ին՝ «Բարձրագույն կրթության խորհրդի մասին օրենքը», 1968 թ.-ին՝ «Դպրոցական վերահսկողության և տեսչությունների մասին օրենքը», 1988 թ.-ին՝ «Հատուկ կրթության մասին օրենքը» (այն վերաբերում էր հոգեբանական և ֆիզիկական շեղումներ ունեցող երեխաներին), իսկ 1997 թ.-ին՝ « Երկարօրյա և ընդգրկուն կրթության մասին օրենքը»:

Պետության կայացման առաջին տարիներին Կառավարությունը սահմանել էր 3-ից 15 տարեկանների համար պարտադիր և անվճար կրթության իրավունք՝ հովանավորելով նախադպրոցական (3-ից 6 տարեկանների), հանրակրթական (առաջինից մինչև 10-րդ դասարանցիների) և բուհական կրթամակարդակների զարգացման ծրագրերը:

1968 թ.-ից հետո ընկած ժամանակահատվածում, երբ կուտակվել էր բավականաչափ քաղաքական կայունություն և հեղինակություն, հաստատուն քայլերով զարգանում էր ազգային մանկավարժության հենքը՝ ներդրվեցին կրթական համակարգի որոշակի սանդղավորումներ.

1. նախադպրոցական կրթություն (մանկապարտեզ) – 2-ից 6 տարեկանների համար.
2. առաջին մակարդակի հանրակրթություն կամ տարրական կրթություն (1-6 դասարաններ) – 6-ից 12 տարեկանների համար.
3. երկրորդ մակարդակի ստորին աստիճանի հանրակրթություն կամ ընդհանուր միջնակարգ կրթություն (7-9 դասարաններ) – 12-ից 15 տարեկանների համար.
4. երկրորդ մակարդակի բարձր աստիճանի հանրակրթություն կամ լրիվ միջնակարգ կրթություն (10-12 դասարաններ) – 15-ից 18 տարեկանների համար.
5. միջին մասնագիտական (քոլեջային) կրթություն – 15 տարեկանից բարձր պատանիների ու երիտասարդների համար.
6. բարձրագույն մասնագիտական (համալսարանական) կրթություն – 18 տարեկանից բարձր երիտասարդների համար.
7. հետբուհական կրթություն (մագիստրատուրա, դոկտորանտուրա) – 23 տարեկանից բարձր մարդկանց համար:

1953 թ.-ից, հուդդայական եկեղեցու և դրա բարձրաստիճան սպասավորների ճնշման ներքո, խստագույնս կարևորելով հրեական ժողովրդի կյանքի պաշտամունքային արժեքները, օրենքով ամրագրվեց կրոնական դպրոցների գործունեությունը: Կրթական բարեփոխումների հզոր ալիք բարձրացավ 1958 թ.-ից սկսած, երբ պետությունը մի կողմից օրենքով կարգավորեց իր վերահսկողական գործառույթները քոլեջների և համալսարանների գործունեության նկատմամբ, իսկ մյուս կողմից դրանց շնորհեց վարչարարական ու տնտեսավարման ինքնավարության լայն շրջանակ:

Իսրայելի բոլոր քոլեջներում և համալսարաններում ներդրվեց ուսումնառության բացարձակապես վճարովի համակարգ՝ առաջնորդվելով պետական

բյուջեի գերարդյունավետ օգտագործման սկզբունքներով, ինչպես նաև դրանց հնարավորություն տրվեց զբաղվել գիտական ուսումնասիրությունների ու հետազոտությունների արդյունքների առևտրային այնպիսի գործունեությամբ, որը չէր պարունակի պետական գաղտնիք և չէր վնասի Իսրայելի Պետության տնտեսաքաղաքական զարգացմանը: Այսօրինակ քաղաքականության բարձր արդյունավետության մասին է խոսում թեկուզև այն փաստը, որ Երուսաղեմի համալսարանն այսօր արդեն գործում է տարեկան 480 մլն. ԱՄՆ դոլար բյուջետային կտրվածքով, որից պետական օժանդակության մասնաբաժինը կազմում է ընդամենը 235 մլն. ԱՄՆ դոլար: Քանի որ խոսք գնաց իսրայելական համալսարանների արդյունավետ առևտրային գործունեության մասին, ապա դրանում կարելի է համոզվել ստորև ներկայացվող աղյուսակի տվյալներից:

Իսրայելի առաջատար բուհերի տարեկան բյուջեն Աղյուսակ 4.

Համալսարանի անվանումը	*Ուսանողների թվաքանակը*	*Տարեկան բյուջեն (մլն. ԱՄՆ դոլար)*
Երուսաղեմի համալսարան	24 400	480
Թել Ավիվի համալսարան	28 300	297
Հայֆայի համալսարան	13 100	104
Դ. Բեն –Հուրիոնի անվ. համալսարան	17 050	102
Բար–Իիլանի անվ. համալսարան	18 600	101

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթությունն Իսրայելում իրականացվում է պետական և համայնաքային ենթակայության (մունիցիպալ) տակ գտնվող մսուրներում (*«միշպահթոն»* - ներում) ու մանկապարտեզներում (*«մատն»* -ներում), որտեղ ուսումնառություն են ստանում 3 ամսականից բարձր և մինչև 6 տարին լրացած երեխաները: Մսուրների մեծամասնությունը համայնքային ենթակայության է և վճարովի: Սաներին ընդունում են նախապայմանով, որ երեխայի մայրն ունի պետական աշխատանքային զբաղվածություն: Գործում են նաև մասնավոր մսուրային խմբակներ՝ մինչև 8-10 երեխա ընդգրկվածությամբ: Մանուկներին սովորաբար խնամում են 2-3 դայակ (մեկ դայակին բաժին է ընկնում 2-3 սան),

մեկական մանկական բժիշկ և հոգեբան: Յուրաքանչյուր մսուր և մանկապարտեզ ունի սեփական ավտոբուս՝ մանուկների տեղափոխման համար:

Մանկապարտեզներում գործում են կրտսեր և ավագ խմբակներ: Երեխաների կրտսեր խումբը (3-4 տարեկանները) մանկապարտեզում անցկացնում է ժամը 8-ից 14-ը, մասնավոր դեպքերում մինչև ժամը 16-ն ընկած ժամանակահատվածը, օրվա մի որոշ մասն անցկացնելով կից գտնվող զբոսայգում կամ պուրակում, իսկ հիմնական մասը՝ խաղասենյակային պայմաններում, որտեղ նրանց համար կազմակերպվում են տարատեսակ խմբակային խաղեր ու վարժանքներ: Երեխաներին տաք սնունդ չի մատուցվում, թեև ծնողների ցանկությամբ և համապատասխան հավելավճար մուծելու դեպքում կարելի է լուծել նաև այդ հարցը: Երեխաների ավագ խմբի՝ 5-6 տարեկանների համար նույնպես մանկապարտեզ հաճախելը վճարովի է: Այդ խմբի երեխաները մանկապարտեզ են հաճախում նույն ժամանակացույցով, ինչ որ կրտսեր սաները: Ազատ խաղային մեթոդներով մանուկներին սովորեցնում են հաշվել, ընթերցել պարզ տեքստեր, կատարել թատերականացված դերակատարումներ՝ օգտագործելով տեսաձայնագրիչներ ու հեռուստացույցներ, իսկ ռիթմիկայի և երգեցողության դասերը վարում է հատուկ վերապատրաստում անցած ուսուցչուհին՝ դասերի համար ներգրավելով երաժշտական գործիքներ: Երեխաների մեջ դեռ փոքրուց սերմանվում է սեր հայրենիքի, հայրենի բնակավայրի, ազգային կենսակերպի ու գրքի նկատմամբ: Մանկապարտեզներն աշխատում են շաբաթվա մեջ վեց օր:

Իսրայելում գործում են նաև համայնքային մանկապարտեզներին այլընտրանք հանդիսացող հաստատություններ, որոնք գտնվում են հրեական կանանց կազմակերպությունների (ՆԱԱՄԱԹ, ՎԻՑՕ և այլն) ենթակայության տակ: Այդ հաստատություններն ընդունում են 2 տարին լրացած մանուկներին՝ աշխատելով առավոտյան ժամը 7-ից մինչև 17-ը, կազմակերպում են երեքանգամյա սնունդ և կեսօրյա քուն: Չնայած որ մսուրներն ու մանկապարտեզները վճարովի են, պետության կողմից իրականացվում է արտոնությունների և զեղչերի ճկուն համակարգ: Նախադպրոցական հաստատությունների ավագ խմբերում գործում են անվճար նախպատրաստական դասընթացներ, որոնց ընթացքում երեխաները սովորում են գրել, կարդալ և հաշվել: Իսրայելում բնակվող 2-5 տարեկանների 75 %-ը հաճախում է մանկապարտեզ, ինչը կազմում է ավելի քան 400 հազար երեխա: Մանկապարտեզների շարքում կան նաև կրոնական ուղղվածության հաստատություններ, հետևաբար, երեխայի ծնողներն իրենց դիմումներում անպայմանորեն պետք է նշեն, թե ինչպիսի մանկապարտեզ են

նախընտրում իրենց երեխաների համար՝ կրոնական, թե՞ աշխարհիկ: Ծայրահեղ ուղղափառ պետական և համայնքային մանկապարտեզներ են հաճախում հրեական ծագումով երեխաների շուրջ 25%-ը:

Նկ.32. Իսրայելի նախադպրոցական հաստատությունները Մերձավոր Արևելքում և աշխարհում վայելում են բարձր հեղինակություն:

ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դժվար է պատկերացնել, սակայն իրականությունն այն է, որ դեռևս 60 տարի առաջ Իսրայելի Պետության տարածքում գործում էին հատուկենտ դպրոցներ, որոնցում սովորում էր ընդամենը 1600 աշակերտ: Չկային մայրենիով (իվրիտով) հրատարակված դասագրքեր և ուսումնամեթոդական ձեռնարկներ, մանկավարժական կադրեր պատրաստող համապատասխան կրթական հաստատություններ: Արաբական պետություններով շրջապատվածության և պաղեստինիա-իսրայելական հակամարտության պայմաններում, չունենալով քիչ թե շատ նշանակալի բնառեսուրսային ներուժ, Իսրայելի նորանկախ պետության ղեկավարությունը համոզված էր, որ ամեն ինչ պետք է սկսել բանակաշինությունից ու կրթական համակարգի ձևավորումից: Կրթության մասին հայտնի օրենքի ընդունումից հետո, անհրաժեշտ էր առաջնահերթ ուշադրություն դարձնել տարրական կրթության սկզբունքային հիմնադրույթների հստա-

կեցմանը: Արդեն նախորդ դարի 50-ական թվականների սկզբից որոշվեց, որ տարրական կրթությունը պետք է սահմանել սկսած 6 տարին լրացած երեխաների համար և 6-ամյա (1-6 դասարաններ) ժամկետով:

Տարրական դասարաններում հիմնական ուշադրությունը դարձվում է տառաճանաչությանը, թվաճանաչությանը, ընթերցանությանը, պարզ-վերլուծական մտածողությանը և համեմատելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, հետևաբար, ուսուցիչների մեծամասնությունը խուսափում է տնային հանձնարարություններ առաջադրելուց և դասերի յուրացման տեսական ու գործնական աշխատանքներն ամբողջությամբ իրականացվում են դպրոցում, դասարանային պայմաններում՝ ըստ աշակերտական խմբերի: Մի շարք դպրոցներում առաջին դասարանցիները հանձնում են փոխադրական քննություններ, և այն երեխաները, ովքեր չեն կարողանում հաղթահարել քննական արգելքները, ստիպված են ընդգրկվել արագացված ուսուցման հատուկ դասարաններում, որպեսզի մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը (սեպտեմբերի 1-ը) լրացնեն առաջադիմության հետ կապված բացթողումները:

Դպրոցներում գործող հոգեբանների խորհուրդն ուսումնասիրում է յուրաքանչյուր աշակերտի առաջադիմության, առաջխաղացման, հաղորդակցվելու ազատության ու անկաշկանդվածության մակարդակը՝ նպատակ ունենալով առանձնացնել առավել ընդունակ երեխաներին, ովքեր հետագայում ընդգրկվում են հատուկ ուշադրության և հսկողության տակ գտնվող դասարաններում: Դրանցում դասավանդման մեթոդաբանությունը, գնահատման համակարգը և դասաժամերի ծանրաբեռնվածությունը բոլորովին այլ է: Առավել աչքի ընկնող աշակերտները գտնվում են պետական հովանավորության ներքո: Նրանք ստանում են կրթաթոշակ, անվճար սնունդ և բուժօգնություն, իսկ ամառային հանգիստն անցկացնում են որևէ առողջարանային ճամբարում: Սկսած չորրորդ դասարանից, համադասարանցիները դպրոցական աշակերտական խորհրդի կազմում ներկայացուցիչ ունենալու նպատակով իրենց միջից ընտրում են ամենաարժանավորին: Ի դեպ, աշակերտական խորհրդի նիստերին պարտադիր մասնակցում են դպրոցի տնօրենը և տեղական ինքնակառավարման մարմինների որևէ պատվիրակ:

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Միջնակարգ կրթությունը (7-12 դասարաններ) բաժանվում է երկու մակարդակի. ***ոչ լրիվ*** կամ ***թերի միջնակար· դպրոց*** (7-9 դասարաններ) և ***լրիվ***

միջնակար· կամ ***ավա· դպրոց*** (10-12 դասարաններ): Թերի միջնակարգ դպրոցն անցողիկ տեղ է զբաղեցնում տարրական և լրիվ միջնակարգ կրթության միջև: Այսօրինակ դպրոցներում ուսումնասիրում են մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, պատմություն, համաշխարհային գրականություն, քաղաքացիական իրավունք, հուդդայականության պատմություն (ԹԱՆԱՀ), երկու օտար լեզու, եբրայերեն (արաբերեն) լեզու և գրականություն: Թերի միջնակարգ դպրոցներում դասարանները մասնատվում են 2-3 խմբի՝ ըստ աշակերտների ընդունակությունների: Դասարանների բաժանումն իրականացվում է դպրոցներում մշտապես գործող խորհրդատվական խորհուրդների երաշխավորությունների հիման վրա՝ հաշվի առնելով սովորողների առաջադիմությունը, նախասիրությունները, հաղորդակցվելու կարողությունները, լեզվամտածողության խորաթափանցությունը:

Ընդհանուր առմամբ, դպրոցահասակ իսրայելցիների (12-15 տարեկաններ) 70%-ը սովորում է պետական դպրոցներում, 25%-ը հաճախում է կրոնական թեքությամբ պետական դպրոց, իսկ մնացած 5%-ը սովորում է բուն եկեղեցական դպրոցներում: Թերի միջնակարգ դպրոցներում ուսումնական տարին մասնատվում է երկու կիսամյակի կամ երեք եռամսյակի, հետևաբար, մեկ ուսումնական տարվա ընթացքում աշակերտներին 2-3 անգամ բաժանվում են ընթացիկ առաջադիմության թերթիկներ, որոնցում գիտելիքները գնահատվում են կամ 5 միավորանոց, կամ 10 բալանոց, կամ էլ 100 տոկոսանոց սկզբունքով՝ նկատի ունենալով, որ դրական են համարվում 3-5 միավորը, 4-10 բալը, 55-100 տոկոսը:

Լրիվ միջնակարգ դպրոցները, որոնք նախատեսված են 15-18 տարեկանների համար, ստորաբաժանվում են երեք խմբի. ***ակադեմիական, մասնա·իտական*** կամ ***արհեստա·ործական, համակցված*** կամ ***կոմբինացված***:

Ակադեմիական միջնակարգ դպրոցներում դասավանդվում է 1-12 դասարանների ողջ ծրագրային նյութը, որի ընթացքում աշակերտները ստանում են ծավալուն և լայն մտահորիզոն ընդգրկող գիտելիքներ, ինչն առանց լրացուցիչ պարապմունքների կարող է բավարար լինել հետագա շարունակական՝ միջին մասնագիտական ու բուհական կրթության ձեռքբերման համար: Ակադեմիական դպրոցների շրջանավարտները հանձնում են պետական ավարտական քննություններ, որոնց արդյունքներով ստանում են երրորդ (3 միավորանոց), երկրորդ (4 միավորանոց) կամ առաջին (5 միավորանոց) կարգի հասունության վկայական:

Մասնագիտական կամ արհեստագործական դպրոցներում ընդհանուր հանրակրթական դասընթացներն ուսումնասիրելուց բացի, աշակերտները ձեռք են բերում որոշակի մասնագիտություն (արհեստ): Շրջանավարտները կարող են հանձնել պետական ավարտական քննություններ և ստանալ հասունության վկայական, կամ քննություններ չհանձնելով՝ ստանալ տեղեկանք 12-ամյա կրթական ծրագրի յուրացման վերաբերյալ, ինչն այնուամենայնիվ թույլ է տալիս զբաղվել աշխատանքային գործունեությամբ՝ ըստ դպրոցում ձեռքբերած կամ դրան հարակից մասնագիտության: Եթե աշակերտի մոտ ցանկություն կա խորացնել մասնագիտական գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, ապա նրան հնարավորություն է տրվում ուսումը շարունակել մասնագիտական դպրոցների 13-14 դասարաններում, որը հաջողությամբ ավարտելուց հետո կարելի է ստանալ կրտսեր տեխնիկի կամ ինժեների որակավորում:

Մասնագիտական դպրոցների մասսայականությունը մեծ է ոչ միայն դպրոցահասակների, այլև մեծահասակների շրջանում, ինչը վերջիններիս հնարավորություն է տալիս վերաորակավորվել կամ վերապատրաստվել՝ համաձայն տվյալ ժամանակահատվածում գործող աշխատաշուկայի թելադրած պահանջների:

Համակցված կամ կոմբինացված լրիվ միջնակարգ դպրոցներում գործում են և' ակադեմիական, և' մասնագիտական դասարաններ:

Լրիվ միջնակարգ կրթության համակարգում տարեցտարի աճում է ***գիշերօթիկ դպրոցների*** և ***արհեստագործական վարժարանների*** դերն ու նշանակությունը: Գիշերօթիկ դպրոցներում աշակերտները հանրակրթական առարկաներին զուգընթաց ուսումնասիրում են նաև որոշ գյուղատնտեսական մասնագիտություններ՝ հողաշինարարություն, հողային քարտեզագրություն, անասնաբուծություն և այլն, կամ էլ ռազմագիտություն: Արհեստագործական վարժարանների սովորողներն օրվա առաջին կեսն (մինչև ժամը 15-ը) անցկացնում են կրթօջախում, իսկ երեկոյան ժամը 17-19 – ի սահմաններում աշխատում են՝ ըստ ընտրած մասնագիտության, որի դիմաց ստանում են համապատասխան օրավարձ: Վերջին 10 տարում կտրուկ ավելացել է ***երեկոյան*** և ***հեռակա*** դպրոցներ հաճախողների թվաքանակը:

Այսպիսով, Իսրայելի կրթական համակարգում ամենամարդաշատը հանրակրթության ոլորտն է: Այդ են վկայում 2009 թ.-ի վիճակագրական տվյալները (տե՛ս աղյուսակ 5.):

Կրթօջախների և սովորողների բաշխվածությունն՝ ըստ կրթահամակարգի ոլորտների

Աղյուսակ 5.

Կրթության ոլորտը	Կրթօջախների թվաքանակը (հատ)	Սովորողների թվաքանակը (մարդ)
Նախադպրոցական	512	420 000
Տարրական	1506	780 000
Թերի միջնակարգ	784	267 000
Լրիվ միջնակարգ	643	325 000
Միջին մասնագիտական	161	63 000
Համալսարանական	8	155 000

Նկ.33. Իսրայելի հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդվում են մի շարք արհեստագործական դասընթացներ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության ոլորտից մասնագիտական կրթության ոլորտին անցումը պայմանավորված է հասունության վկայականի (*«թեուդաթ բագրուտ»*-ի) մակարդակով, առանցքային մասնագիտական առարկաների ամփոփիչ գնահատականներով և հոգեչափական թեստի արդյունքներով: Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) յուրաքանչյուր հաստատության ընդունող հանձնաժողով մանրամասն քննարկում է դիմորդների ներկայացրած փաստաթղթերը, որից հետո բոլորին տրամադրում է նախընտրելի մասնագիտությունների ցանկ, խորհրդատվությունների միասնական փաթեթ ու պահանջվող մասնագիտական գրականություն՝ դիմորդներից գանձելով 200-ական շեկել (իսրայելական 4 շեկելը համարժեք է ԱՄՆ 1 դոլարին):

Իսրայելում գոյություն ունի հասունության վկայականի եռաստիճան սանդղակ՝ 3, 4 և 5 միավորանոց: Վկայականի միավորային արժեքը որոշվում է ավարտական 11-12 դասարաններում հանձնած գրավոր թեստային աշխատանքների գումարային ցուցանիշներով՝ 100 բալանոց համակարգով. 55-75 բալ՝ 3 միավոր, 76-90 բալ՝ 4 միավոր, 91-100 բալ՝ 5 միավոր: Քոլեջ կամ համալսարան ընդունվելիս, եթե տվյալ առարկայի ամփոփիչ գնահատականը 3 է, ապա այն բազմապատկվում է 7-ով, 4-ի դեպքում՝ 12,5-ով, իսկ 5-ի դեպքում՝ 20-ով: Քանի որ իսրայելական քոլեջներում մրցակցային ստորին շեմը բավականաչափ բարձր է (1 տեղին՝ 6-8 հավակնորդ), հետևաբար, ապագա ուսանողները նախընտրում են այն ուսումնական հաստատությունները, որոնց կողմից սահմանված մրցութային առարկաներից իրենք կուտակել են 5 կամ նվազագույնը 4 միավոր: Իսրայելական քոլեջների կողմից ամեն տարի հայտարարվող մրցութային 6-7 առարկաների շարքում պարտադիր են ԹԱՆԱՀ-ը, մաթեմատիկան ու անգլերենը, իսկ եբրայերենի (արաբերենի) նվազագույն իմացությունը պետք է կազմի 45 բալ և ավելի:

Իսրայելի քոլեջները բաժանվում են երեք խմբի. *տեխնոլոգիական, մանկավարժական* և *գեղարվեստաթատերական:*

Ամենամեծաթիվը *տեխնոլոգիական քոլեջներն* են (թվով՝48-ը), որոնք գտնվում են Իսրայելի աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության կառուցվածքում գործող Պետական Տեխնոլոգիական Կենտրոնի ենթակայության տակ: Տեխնոլոգիական քոլեջները պատրաստում են բարձրակարգ տեխնիկներ և ինժեներներ՝ էլեկտրոնիկայի, համակարգչային ծառայությունների որակի հսկողության, շուկայավարության, շուկայաբանության, բուժտեխնիկայի սպասարկման, արդյունաբերական դիզայնի, ճարտարապետության, մեխանիկայի, կենցաղային տեխնիկայի վերանորոգման, շինարարու-

թյան, քիմիական և դեղագործական արտադրությունների, ինչպես նաև կենսատեխնոլոգիայի բնագավառներում: Ուսման տևողությունը 2-3 տարի է: Դիպլոմային նախագծերը հաջողությամբ պաշտպանած շրջանավարտներին տրվում է ավարտական դիպլոմ, իսկ առանձին դեպքերում շնորհվում է նաև բակալավրի աստիճան:

Մանկավարժական քոլեջները (թվով՝ 37-ը) գտնվում են կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ, պատրաստում են դայակներ, դաստիարակներ, վարպետ-մանկավարժներ, ուսուցիչներ: Մանկավարժական քոլեջները տրամադրում են ակադեմիական (4 տարով) և բուն մանկավարժական (3 տարով) կրթություն: Ակադեմիական մանկավարժական քոլեջների շրջանավարտներին շնորհվում է բակալավրի աստիճան և դիպլոմավորված հետազոտող-մանկավարժի որակավորում: Բուն մանկավարժական քոլեջներն ունեն ընդհանուր-պետական (թվով՝ 29-ը) կամ եկեղեցական (թվով՝8-ը) կարգավիճակ, թեև երկու դեպքում էլ շրջանավարտները ստանում են ուսուցիչ-տեսաբանի որակավորում:

Գեղարվեստաթատերական քոլեջները (թվով՝ 12-ը) գործում են կրթության և մշակույթի նախարարությունների համատեղ ենթակայության ներքո: Ըստ մշակութային բնագավառի (երաժշտական կատարողական արվեստ, պարարվեստ, բեմական արվեստ, գծանկար, գեղանկար, քանդակագործություն, հագուստի ձևավորում, լուսանկարչություն), ուսման տևողությունը 3-4 տարի է: Գեղարվեստաթատերական քոլեջների շրջանավարտների կեսից ավելին հետավարտական 2-3 տարում աշխատանքի է անցնում արևելա և արևմտաեվրոպական երկրներում: Ի դեպ, այսօրինակ քոլեջների շարքում համաեվրոպական համբավ են վայելում Թել Ավիվի ***Ավնու անվան ·եղարվեստի և դիզայնի,*** ջազի և ժամանակակից երաժշտության ***«Ռիմոն»***, դերասանական արվեստի «***Նիսան Նաթիվ»***, Երուսաղեմի ***կինոյի ու հեռուստատեսության քոլեջները:*** Վերոնշյալ քոլեջներում ուսման տարեկան վարձը կազմում է միջինը ***7000-8000 եվրո*** :

Այսպիսով, Իսրայելի 97 քոլեջում սովորում է 45 000 ուսանող, իսկ 64 արհեստագործական ուսումնարանում՝ 18 000 ուսանող:

Իսրայելի ՄԿՈՒ համակարգի առաջատար հաստատությունը ***Գոդելմանի անվան բժկատեխնոլո·իական քոլեջն*** է, որը գտնվում է Աշկելոնա քաղաքում (45 000 բնակիչ): Քոլեջում սովորում է 1400 ուսանող (350-ն՝ օտարերկրացի), իսկ քոլեջին պատկանող հարակից կլինիկայում աշխատում է շուրջ 2000 թերապևտ, վիրաբույժ, ատամնաբույժ, մանկաբարձ, վնասվածքաբան, ոսկրաբան, մարզական բժիշկ: Կլինիկայում ամեն տարի իրենց լիարժեք բուժումն են

ստանում հազարավոր իսրայելցիներ ու օտարերկրացիներ: Քոլեջում ուսման տևողությունը 4-5 տարի է, իսկ տարեկան ուսման վարձը՝ 14 000-18 000 եվրո (ավելի բարձր, քան որոշ համալսարաններում):

Նշանակությամբ երկրորդը՝ Թել Ավիվի ***«Կամտեկ» տեխնոլոգիական քոլեջն*** է, որը հիմնադրվել է ամերիկյան համաշխարհային ճանաչում ունեցող «Մայքրսոֆթ» ընկերության կողմից: Քոլեջում սովորում է 1200 ուսանող, ովքեր հետագայում դառնում են ծրագրավորողներ, համակարգչային դաշնքացի դասավանդողներ, համակարգչային ծառայությունների մատուցման կենտրոնների մենեջերներ: Քոլեջում ուսումնառությունը ներառում է 800 ժամ լսարանային (տեսական) դասախոսություն և 1200-1400 ժամ ուսումնաարտադրական (գործնական) պարապմունք: «Կամտեկ»-ի առանձնահատկություններից է տեսական և գործնական պարապմունքների համակարգված զուգակցումը, ինչին մեծապես օժանդակում է քոլեջին կից գործող արտադրամասը, որտեղ ուսանողները ոչ միայն հղկում են իրենց գործնական կարողություններն ու մասնագիտական հմտությունները, այլև կատարում են բազմաթիվ հեղինակավոր մեքենաշինական ընկերությունների բարձր վճարվի պատվերները:

Իսրայելական քոլեջներից համաշխարհային ճանաչում ունեն Ցրիֆին քաղաքի ավտոմոբիլաշինական տեխնոլոգիաների, Թել Ավիվի «Միգդուալ-Օռ» ռազմական, Հայֆայի Անատ Բազիլայի անվան թատերական և Բաթ Յամայի «Յունիվերսլ» լեզվաբանական քոլեջները:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Իսրայելի Պետության առանձնահատկություններից է այն իրողությունը, որ ազգաբնակչության 20%-ն ունի բարձրագույն կրթություն և այս տեսանկյունից աշխարհում զիջում է միայն ԱՄՆ-ին: Ընդամենը 60 տարվա ինքնիշխան պետականության պայմաններում Իսրայելին հաջողվել է հսկայական առաջընթաց արձանագրել տնտեսության գիտատար և աշխատատար արտադրություններում, ինչը կարելի է մեկնաբանել ոչ միայն տարաբնույթ պետահիրավական ու տնտեսաքաղաքական ձեռքբերումներով, այլև՝ կրթական բարեփոխումների շարունակական և հետևողական ընթացքով: Այսօր Իսրայելն աշխարհի պետությունների շարքում առաջինն է յուրաքանչյուր 1000-ական բնակչի հաշվով ինժեներների, բժիշկների, գիտաշխատողների ու հրատարակվող գիտական հոդվածների թվաքանակով, մեկ բնակչի հաշվով արտադրված արեգակնային (հայելային) էլեկտրաէներգիայի ծավալով, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների

արտադրության աճի տեմպերով, կաթիլային ոռոգման ներդրման մասշտաբով, կրթական հաստատությունների համակարգչային հագեցվածության մակարդակով և այլն:

Նկ.34. Իսրայելի քոլեջները. թատերական, Գոդելմանի անվան բժշկատեխնոլոգիական և «Կամտեկ»:

Այս և շատ ուրիշ հաջողություններ պայմանավորված են Իսրայելի բարձրագույն կրթահամակարգի աննախընթաց ձեռքբերումներով, որոնց հիմնական կրողները 8 համալսարանն են: Դրանցից 6-ը դասվում են Ասիայի լավագույն 100 համալսարանի շարքին, իսկ Երուսաղեմի հրեական, Թել Ավիվի և Հայֆայի համալսարաններն աշխարհի լավագույն 200 կրթօջախի ցանկում զբաղեցնում են համապատասխանաբար 109-րդ, 138-րդ ու 159-րդ տեղերը, թեև 2000 թ.-ին դրանք գտնվում էին համապատասխանաբար 102-րդ, 114-րդ և 132-րդ հորիզոնականներում:

Որոշակի առումով արձանագրված հետընթացը չի կարելի մեկնաբանել, որպես կրթության որակի անկում: Դա պայմանավորված է ոչ թե համալսարանական կրթահամակարգի ձախողումներով, այլ այն հանգամանքով, որ լավա-

գույնների ցանկը կազմելիս ամեն տարի ավելացվում են նոր չափանիշներ, մասնավորապես, ուսման վարձի մատչելիությունը (Իսրայելում այն 20-30%-ով ավելի բարձր է, քան Արևմտյան Եվրոպայում), ուսանողության միջին տարիքը (եթե Եվրոպայի շատ երկրներում համալսարան կարելի է ընդունվել 17-18 տարեկանում, ապա Իսրայելում ուսանող կարելի է դառնալ 21 տարին լրանալուց հետո), դասախոսական անձնակազմում կանանց տոկոսային մասնաբաժինը և այլն: Այսօրվա դրությամբ, Իսրայելի համալսարաններում սովորում է 155 հազար ուսանող, որից 28 հազարն՝ օտարերկրացի:

Իսրայելի բարձրագույն կրթական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք. բակալավրիատ, մագիստրատուրա և դոկտորանտուրա: Բակալավրի աստիճան շնորհվում է համալսարանական 3-4 տարվա ուսումնառության, մագիստրոսի աստիճան՝ ևս 2-3 տարվա մասնագիտական խորացված ուսուցման, իսկ դոկտորի աստիճան՝ լրացուցիչ 2-4 տարվա ընթացքում կատարած գիտահետազոտական աշխատանքների ու պաշտպանած գիտական թեզի արդյունքների հիման վրա: Բակալավրի աստիճան կարելի է ստանալ նաև որոշ համալսարանական քոլեջներում կամ տարածաշրջանային կարգավիճակ ունեցող Սապիրայի և Թել Ավիվի քոլեջներում:

Բուհական ընդունելության քննությունները հաջողությամբ հանձնելու համար կարելի է դիմել նախապատրաստական դասընթացների մասնավոր կենտրոններից որևէ մեկին, որոնք 80-200 ակադեմիական դասաժամի ընթացքում դիմորդներին սովորեցնում են թեստային առաջադրանքները լրացնելու կանոնները, սակայն օտարերկրացիների համար առաջանում են որոշակի դժվարություններ, քանի որ դասընթացների հիմնական մասն անցկացվում է իվրիտով կամ անգլերենով: Լեզվի իմացության մակարդակը կարելի է բարելավել հատուկ այդ նպատակով ստեղծված ուսումնական կենտրոններում կամ ***«ուլպան»*** -ներում: Դասընթացները տևում են 5-8 ամիս, շաբաթական 20-25 ժամ ծանրաբեռնվածությամբ: Մեկ ամբողջական դասընթացի ուսման վարձը կազմում է 1000 ԱՄՆ դոլար կամ 3500-4000 շեկել:

Նկ.35. Թել Ավիվի բաց և Երուսաղեմի համալսարանները: Հայֆայի Տեխնիոնը:

Իսրայելի գլխավոր համալսարանները

Աղյուսակ 6.

N	Համալսարանի անվանումը	Գտնվելու վայրը	Հիմնադրման տարին	Ուսանողների թվաքանակը	Առաջտար ֆակուլտետները
1	Տեխնիոն	Հայֆա	1924	13 200	ինժեներական գործ, մեխանիկա, ինֆորմատիկա,
2	Հրեական համալսարան	Երուսաղեմ	1925	24 400	կրոնագիտություն, արաբագիտություն, հոգեբանություն
3	Հաիմ Վեյցմանի անվան ինստիտուտ	Ռեհովոտ	1949	740	գենետիկա, բժշկագիտություն
4	Բար-Իլանի համալսարան	Ռամաթ Հան	1955	18 600	ինֆորմատիկա, լեզվաբանություն
5	Թել Ավիվի համալսարան	Թել Ավիվ	1956	28 300	էլեկտրոնիկա, միջուկային ֆիզիկա
6	Հայֆայի համալսարան	Հայֆա	1963	13 100	օվկիանոսագիտություն, հնեաբանություն
7	Բեն Հուրիոնի անվան համալսարան	Բեեր-Շևա	1969	17 050	էկոլոգիա, քիմիա
8	Բաց համալսարան	Թել Ավիվ	1976	39 400	պատմություն, փիլիսոփայություն

ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դժվար է ներկայացնել դանիական կրթական համակարգի ամբողջական համայնապատկերն իր ոչ միանշանակ ընկալվող և ընդունելի առավելություններով ու առանձնահատկություններով: Նպատակահարմար կլիներ նախ և առաջ ծանոթանալ հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտին, որը մեր համոզմամբ կարող է ուսանելի լինել XXI դարի դպրոցաշինության ռազմավարական ու մարտավարական ծրագրեր իրականացնողների և դրանցով հետաքրքրվողների լայն շրջանակի համար, այլապես դժվար թե հասկացվեն Դանիայի ձեռքբերումներն արհեստագործական (աշկերտական) ու միջին մասնագիտական կրթության, ինչպես նաև մեծահասակների ցկյանս (ողջ կյանքի ընթացքում) ուսումնառության կազմակերպման բնագավառներում, որոնք այսօր արդեն դարձել են համաեվրոպական միասնացված տարածքի կրթական քաղաքականության յուրատեսակ չափանիշ:

Ընդհանուր տեղեկություններ: Երբեմնի (IX-XVI դ.դ.) հզոր Դանիական կայսրության իրավահաջորդ Դանիայի Թագավորությունը սահմանադրական միապետություն է Հյուսիսային Եվրոպայում: Զբաղեցնում է մոտավորապես ***43 հազար քառ. կմ*** մակերես՝ առանց Ֆարերյան կղզիների և Գրենլանդիա կղզու (2,17 մլն. քառ.կմ): Տեղաբաշխված է Յուտլանդիա թերակղզու հյուսիսում և Դանիական կղզիախմբի մանր ու միջին 409 կղզում, որոնցից առավել խոշորներն ու խիտ բնակեցվածներն են Զելանդիան, Ֆյունը, Լոլանդը և այլն:

Դանիան իր աշխարհագրական դիրքի առանձնահատկություններով թերակղզային, ծովամերձ և հարթավայրային պետություն է: Անդամակցում է ՆԱՏՕ-ին, որպես հիմնադիր կազմի պետություն ու Եվրամիությանը (1973 թ.-ից), թեև առայժմ խուսափում է եվրոպական միացյալ փոխարժեքի (եվրոյի) գոտի մտնելուց:

Բնակչության թվաքանակը կազմում է ***5,5 մլն. մարդ*** (2009 թ.), որի 49%-ը տղամարդիկ են՝ կյանքի 76 տարի միջին տևողությամբ, այն դպքում, երբ կանանց (բնակչության ընդհանուր թվաքանակի 51%-ը) կյանքի միջին տևողությունը 83 տարի է: Ազգաբնակչության տարիքային կազմն ունի հետևյալ պատկերը. 1-17 տարեկաններ՝ 21%, 18-66 տարեկաններ՝ 65%, 67 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցողներ՝ 14%:

Արևմտաեվրոպական քաղաքակրթության հարստացման գործում մեծ ավանդ են ունեցել աշխարհահռչակ բնագետ-ֆիզիկոս ***Նիլս Բորը***, ֆիզիոլոգ և գենետիկայի հիմնադիր ***Վիլհելմ Յոհանսենն*** ու մանկագիր ***Հանս Քրիստիան Անդերսենը***:

Ըստ պաշտոնական վիճակագրության, Դանիայում հաշվում են ավելի քան 2 մլն. ընտանիք, որոնցից յուրաքանչյուր երկրորդում կա գոնե մեկ աշակերտ կամ ուսանող: Ի դեպ, «ժողովրդագրական ճգնաժամի» պատճառով (ազգաբնակչությունը տարեկան նվազում է 0,03%-ով) Դանիայում իրականացվում է ակտիվ ժողովրդագրական քաղաքականություն, մասնավորապես, պարզեցվում են ներգաղթի օրինականացման հիմքերը և հստակեցվում են ներգաղթողների իրավական պարտավորությունները: Դանիայի ներկայիս ազգաբնակչության 6 %-ից ավելին կամ շուրջ 340 հազար մարդ գաղթականներ են: Հայկական համայնքում հաշվում են մոտավորապես ***2 հազար*** մարդ, որոնց 3/4 – ից ավելին այստեղ է հաստատվել վերջին 20 տարում:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դանիայի ժամանակակից կրթական համակարգը գործում է 1994 թ.-ից ընդունված կրթության մասին նոր օրենքի շրջանակներում : Թեև վերջինս 7-16 տարեկանների համար սահմանում է պարտադիր 9-ամյա կրթություն, սակայն չի նախատեսում դպրոցի ամենօրյա պարտադիր հաճախում: Ընտանիքներում ծնողներն ազատ են իրենց զավակների դպրոցական հաճախումների պարբերականության և ծանրաբեռնվածության ընտրության հարցում: Սկանդինավյան այս երկրում պարտադիր (հատուկ) կրթությունն անվճար է, եթե այն իրակա-

նացվում է տեղական ինքնակառավարման մարմինների (քաղաքապետարանների) անմիջական ենթակայության տակ գտնվող ուսումնական որևէ հաստատությունում, որոնց զուգահեռաբար գործում են նաև մասնավոր, ոչ պետական մանկապարտեզներ, դպրոցներ, գիմնազիաներ ու քոլեջներ:

Դանիան աշխարհի այն եզակի պետություններից է (Իսլանդիայի և Ֆինլանդիայի հետ միասին), որտեղ քաղաքային բնակավայրերն ունեն նվազագույնը 200 բնակիչ, և քանի որ ազգաբնակչության կենսամակարդակը բավականաչափ բարձր է (մեկ բնակչի հաշվով ՀՆԱ-ի մասնաբաժինը կազմում է 36 000 ԱՄՆ դոլար), հետևաբար, մասնավոր դպրոցների ուսման վարձավճարները նույնպես բարձր են՝ Եվրոպայում ամենաբարձրը (ամսական վարձը տատանվում է 150-250 եվրո սահմաններում, տարվա կտրվածքով՝ 1500-2500 եվրո), իսկ աշխարհում զիջում են միայն ԱՄՆ-ին ու Ճապոնիային: Թերևս այդ է պատճառը, որ մասնավոր հատվածի ծառայություններից այսօրվա դրությամբ օգտվում է հանրակրթական դպրոցներ հաճախողների 12%-ը և գիմնազիաներում ընդգրկված աշակերտների 4,5%-ը:

Կրթական գործընթացներն իրականացվում են նախադպրոցական, հանրակրթական, արհեստագործական, տեխնիկատեխնոլոգիական և համալսարանական ուսումնական հաստատություններում: Դանիան Եվրոպայի միակ պետությունն է, որտեղ օրենքով արգելված է մասնավոր համալսարանական կրթությունը, սակայն դա ամենևին էլ չի խանգարում, որպեսզի դանիական կրթական համակարգը լինի անչափ գրավիչ ու մատչելի:

Ավելացնենք նաև, որ Դանիան աշխարհում առաջինն է ՀՆԱ-ի ընդհանուր կառուցվածքից կրթության ոլորտին հատկացվող 8 %-ոց ֆինանսական միջոցների ծավալով:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դանիայի կրթական համակարգի ստորին մակարդակը՝ նախադպրոցական կրթությունը, որպես այդպիսին, դեռևս լիարժեք ձևավորված չէ: Դրա պատճառն այն է, որ դանիացիների մեծամասնությունը նախընտրում է 2-6 տարեկան երեխաների համար վարձել մասնավոր հիմունքներով աշխատող տնային դայակներ, ովքեր նախապես պետք է գրանցված լինեն քաղաքապետարանների ենթակայությամբ գործող սոցիալական սպասարկումների ու ծառայությունների վարչության որևէ բաժանմունքում, ունենան համապատասխան

կրթություն, տեղեկանք առողջության մասին և բնակվեն պատվիրատուի բնակատեղից առավելագույնը մինչև 5 կմ հեռավորության գոտում:

Դայակների աշխատանքային առօրյան տևում է առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 20-ը: Քաղաքապետարանների համապատասխան աշխատանքային խմբերը կազմակերպում են անսպասելի շրջայցեր, որպեսզի կանխեն ու բացահայտեն երեխաների նկատմամբ կիրառվող բռնության դեպքերը, ապազգային, ազգայնամոլական կամ կրոնամոլական դաստիարակության միջադեպերը, գնահատեն մանուկների լեզվական և հաղորդակցման կարողությունները, անհրաժեշտության դեպքում տրամադրեն հոգեբանական ծառայություն ու մեթոդաբանական խորհրդատվություն:

Դանիայի նախադպրոցական համակարգում գործում է *352* մանկապարտեզ, որից *244*-ը՝ ոչ պետական: Բոլոր մանկապարտեզները (պետական և ոչ պետական) ֆինանսավորվում են քաղաքային բյուջեից, հետևաբար, յուրաքանչյուր նախադպրոցական տարիքի երեխայի համար պետությունն ապահովում է մանկապարտեզում տեղ ունենալու հավասար հնարավորություն:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դանիայի հանրակրթական (միջնակարգ կրթական) համակարգը հենվում է *1726* պետական և *452* ոչ պետական (մասնավոր) միջնակարգ դպրոցների գործունեության վրա: Ի տարբերություն եվրոպական մյուս պետությունների, դանիական հանրակրթական ուսումնական հաստատություններում չկան տարրական (նախնական), միջին և ավագ դասարաններ, այսինքն՝ ողջ հանրակրթությունը գործում է, որպես մեկ միասնական ու շարունակական ամբողջություն՝ ներառելով պարտադիր 9-ամյա (1-9 դասարաններ) կրթություն բոլոր 7-16 տարեկանների համար:

Դանիայի կազմում ընդգրկված Զելանդիա կղզու *Սորյո* քաղաքի համանուն կոմունայում է գտնվում Եվրոպայում մինչ օրս պահպանված ամենահին միջնակարգ դպրոցը, որն այսօր էլ ունի 254 աշակերտ:

Դանիական դպրոցի կառուցվածքն ու աշխատակարգը խիստ առանձնահատուկ են:

Այսպես կոչված *ֆոլկեսկոլերը* (Folkeskole, միջնակարգ դպրոց) հանդիսանում են ապագայի դպրոցի նախատիպ, որի մասին հատուկ ուսումնասիրություններ է կատարել նախորդ դարի 80-ական թվականների հայտնի գիտնական, մանկավարժության տեսաբան անգլիացի Ռոբերտ Փաուելը: Իր մեծ աղ-

մուկ հանած «Ազատ դպրոցի դանիական ավանդույթը բոլորիս համար որպես ուղենիշ» աշխատությունում անգլիացի մանկավարժը գրել է. «Աշխարհի բոլոր անչափահասներն այնքան իրաի նման են, որ գնացք նստելիս, ազատ նստելատեղերի առկայության դեպքում ոտքերը մեկնում են դիմացի նստելատեղին, սակայն դանիացի նրանց հասակակիցը տարբերվում է նրանով, որ նախապես հանում է իր մարզակոշիկները»: Ասվածի իմաստն այն է, որ առանց գիտելիքների գնահատման թվանշանային համակարգի, պետական կրթական չափորոշիչների, առարկայական հայտորոշիչների ու ծրագրերի, դասասենյակային միջավայրի և պետականորեն երաշխավորված դասագրքերի գործող ֆոլկեսկոլը նախապատրաստում է շատ ավելի առողջ ու բարեկեցիկ, մտածող և ստեղծագործող սերունդ, քան աշխարհի որևէ մեկ այլ երկրի հանրակրթական համակարգը:

Նկ.36. Սորյոյի միջնակարգ դպրոցը՝ հիմնադրված 1140 թ.-ին, Աբսալոն եպիսկոպոսի կողմից, որն ի սկզբանե նախատեսված է եղել հարուստների երեխաների համար: Ժամանակակից դանիական դպրոցի մասնաշենք Օդենսե քաղաքաում: Դպրոցում չկան դասասենյակներ և դրանց փոխարինում են հատուկ առանձնացված դասապատրաստման անկյուններ, որտեղ աշակերտները չեն կաշկանդվում սեղան-աթոռների անհարմարությունից:

Այս ամենի հիմքում ընկած է ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների դանիական տարբերակը, որտեղ ուսուցիչը ոչ թե դասավանդող է, գնահատող, սաստող, պատժող կամ վերահսկող, այլ ընդամենը խորհրդատու է, կազմակերպիչ, ավագ գործընկեր, անվիճարկելի հեղինակություն, օգնական և համախոհ:

Ուսուցչի առաքելությունն է ոչ թե աշակերտներին հաղորդել հնարավորինս շատ գիտելիքներ, փաստեր, անուններ, կանոններ և սահմանումներ, այլ սովորեցնել հաղորդակցվել, սովորեցնել սովորել, սովորեցնել վերլուծել, սովորեցնել կողմնորոշվել: Ֆոլկեսկոլերի համար անընդունելի են ցանկացած չափորոշիչ կամ կրթական ծրագիր, քանի որ յուրաքանչյուր միջնակարգ դպրոց ունի իր առանձնահատկությունը: Վերջին 15-20 տարում կառուցված դպրոցներում որքան էլ զարմանալի է, չկան դասասենյակներ և աշակերտական նստարան-աթոռների զուգահեռ դասավորությամբ շարքեր: Դանիայի կրթության (լուսավորության) նախարարի հավաստմամբ, դպրոցը պետք է լինի աշակերտներին զբաղեցնելու, հետաքրքիր առօրյա անցկացնելու համար, հետևաբար, տարբեր ընդունակություններով օժտված անհատականություններին տարբերակված ուսումնառության հնարավորություններ տրամադրելու համար:

Առանձնացվում են ֆոլկեսկոլի ընդհանուր կառուցվածքում գործող երեք հանրակրթական ենթամակարդակ.

1.Լրիվ միջնակարգ՝ նախապատրաստական դասարան (6 տարեկանների համար) + պարտադիր 9 -ամյա միջնակարգ դպրոց (7-16 տարեկանների համար) + լրացուցիչ 10-րդ դասարան (17 տարեկանների համար).

2.Թերի միջնակարգ՝ նախապատրաստական դասարան (6 տարեկանների համար) + 8-ամյա միջնակարգ դպրոց (7-16 տարեկանների համար).

3.Հավաքական միջնակարգ՝ նախատեսված եռամյա կամ քառամյա կրթության համար, երբ աշակերտները 1-4 դասարաններում սովորում են մի մասնաշենքում, 5-7 դասարաններում՝ մեկ ուրիշ մասնաշենքում, իսկ 8-10 դասարաններում՝ բոլորովին այլ մասնաշենքում:

Ի տարբերություն պետական ֆոլկեսկուլի, մասնավոր դպրոցների շարքում առանձնացվում են.

1.Գյուղական միջավայրում գործող անկախ դպրոցներ կամ *·ռունտվի·աներ* (Grundtvigien, փոքրիկ).

2.Եկեղեցական (կաթոլիկ, լյութերական դավանանքի, մահմեդական և այլն) դպրոցներ.

3.Առաջանցիկ-ազատ դպրոցներ.

4.Մասնագիտացված (լեզուների, արվեստի, հումանիտար, բնագիտամթեմատիկական) դպրոցներ.

5.Գերմաներենի խորացված ուսուցմամբ դպրոցներ.

6.Ազգային փոքրամասնությունների համար նախատեսված դպրոցներ:

Հետաքրքիր է նկատել, որ միջնակարգ դպրոցների աշակերտության 25% -ն ուսումը թողնում է անավարտ, սակայն նրանց հնարավորություն է տրվում հետագայում մեկամյա դասընթացների միջոցով լրացնել ուսումնառության բացերը: Հանրակրթության և մասնագիտական կրթության միջև անցողիկ դիրք են գրավում գիմնազիաները:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ՀԱՄԱԿԱՐԳԸ

Դանիայի Թագավորության մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի հիմքը կազմում են մասնագիտական ուսումնարանները և մասնագիտացված քոլեջները:

Մասնագիտական ուսումնարանները տրամադրում են երկամյա նեղ մասնագիտական ուսումնառություն՝ ձեռնարկատիրության (բիզնեսի), տեղեկատվական և արտադրական տեխնոլոգիաների, առևտրի ու հյուրանոցային ենթակառուցվածքների սպասարկման բնագավառներում: Տեսական և գործնական պարապմունքներով համակցված ուսումնառությունը ենթադրում է լսարանային դասընթացների ու արտադրական աշխատանքների 2:3 հարաբերակցություն, իսկ ավարտական վկայականի շնորհումը նախատեսում է հետազոտական նախագծի հաջողված պաշտպանություն, որի մշակմանը հատկացվում է երեք ամիս:

Մասնագիտացված քոլեջներում ուսումնաարտադրական ծրագրերը կազմված են 3-4 տարվա կտրվածքով՝ առավել մեծ ուշադրություն հրավիրելով տնտեսության ոչ արտադրական (սպասարկման) ոլորտի ճյուղերին (ձեռնարկատիրություն, ապահովագրական և բանկային գործ, կրթության կառավարում, զբոսաշրջություն): Տեսական և գործնական պարապմունքները բաշխվում են 3:2 հարաբերակցությամբ, իսկ ավարտական դիպլոմի ու բակալավրի աստիճանի շնորհումը ենթադրում են հետազոտական դիպլոմային նախագծի կամ նորարարական ծրագրային առաջարկի հաջողված պաշտպանություն, որի մշակմանը տրամադրվում է 6-8 ամիս:



Նկ. 37.Դանիայի քոլեջներում իրականացվում են նաև մեծահասակների համար նախատեսված կարճաժամկետ կրթական ծրագրեր:

Մասնագիտական ուսումնարաններում դասավանդվող, այսպես կոչված ***«AP» (ԱՊ)*** ուսումնաարտադրական ծրագրերը մշակվում են ուսումնարանների մանկավարժական անձնակազմի և ապագա աշխատանքային կադրերով շահագրգռված գործատուների ու արդյունաբերողների ակտիվ մասնակցությամբ: Տեսական պարապմունքների հիմնական ծանրաբեռնվածությունն (մինչև 80%-ը) ընկնում է ուսումնարանների հաստիքային մանկավարժ-դասախոսների ուսերին, մինչդեռ արտադրական պրակտիկաները և գործնական պարապմունքներն ամբողջությամբ ընթանում են գործատուների կողմից ձևավորված մասնագիտական կոմունաների (հանձնախմբերի) անմիջական մասնակցությամբ, ուղղորդմամբ ու վերահսկողությամբ: Դանիական ուսումնարաններում դասավանդումը կրում է նեղ մասնագիտական բնույթ, որոնցում պատրաստվում են մասնագիտական խիստ որոշակի որակավորմամբ մասնագետներ, ինչպես ասենք՝ բեռնատարի մեխանիկ, մարդատար ավտոբուսի մեխանիկ, ուղևորատար ավտոմոբիլի մեխանիկ, ավտոշարժիչի մեխանիկ, կամ ասենք՝ քարտուղար-գործավար, գանձապահ-գործավար, հաշվետար-գործավար, կառավարիչ-գործավար, ցրիչ-գործավար, ծրագրավորող-գործավար և այլն:

Դասավանդումն ընթանում է 5-8 հոգանոց խմբերով՝ ապահովելով գիտելիքների այնպիսի մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս հետագայում, առանց էական դժվարությունների, ուսումը շարունակել ցանկացած դանիական համալսարանում:

Դանիայի Թագավորության միջին մասնագիտական (քոլեջային) համակարգը ներառում է 114 քոլեջ (48-ը՝ ձեռնարկատիրական, 37-ը՝ տեխնիկական, 10-ը՝ տեխնիկատեղեկատվական, 19-ը՝ գյուղատնտեսական) և 65 մասնագի-

տացված կենտրոն (ռեստորանային, ճաշարանային, խոհանոցա-հրուշակագործական, վարսավիրական, ապահովագրական և այլն):

Դանիայի ամենամեծ քոլեջում սովորում է 6779 ուսանող, իսկ ամենափոքրում՝ 38: Թեև դանիական քոլեջները չունեն մեկ միասնական (կենտրոնացված) ենթակայություն, սակայն դրանք բոլորն էլ խմբավորվում են՝ ըստ ոլորտային կառավարման խորհուրդների: Այդպիսիք ութն են.

1. Տեխնոլոգիա և հաղորդակցություն (կապ).
2. Շինարարություն և նախագծում.
3. Արհեստագործություն և ինժեներական նախագծում.
4. Ֆերմերային տնտեսություն և մթերում.
5. Հասարակական սնունդ և առաքում.
6. Մեխանիկա, տրանսպորտ և բեռնափոխադրում.
7. Առևտուր, հաճախորդների սպասարկում և ապահովագրություն.
8. Գործավարություն և ֆինանսավարկային գործունեություն:

Ի դեպ, դանիական քոլեջների շրջանավարտներին տրվում է երկու վկայական, մեկը՝ տեղական, մյուսը՝ Եվրամիության աշխատաշուկայի պահանջների համակողմանի հաշվառմամբ, ինչը հնարավորություն է տալիս հեշտությամբ աշխատանք գտնել ոչ միայն Եվրոպայում, այլև՝ Կանադայում ու ԱՄՆ-ում:

Ներկայումս արհեստագործական ու միջին մասնագիտական ուսումնակրթական ծառայություններ են տրամադրում շուրջ 140 գիմնազիաներից 34-ը, միայն այն տարբերությամբ, որ դրանք բոլորն էլ գտնվում են կրթության և լուսավորության նախարարության ենթակայության ներքո, իսկ ուսումնաարտադրական պրակտիկաներն անցկացվում են կարճաժամկետ ծրագրերով ու կրթօջախներին կից գործող արհեստանոցներում և արտադրամասերում, առավելապես նախատեսված լինելով հետագա շարունակական, համալսարանական կրթության համար:

Օգտագործված աղբյուրները

1.http:// Education in France.fr;
2.http:// www.educationfrance.com/
3.http://rechech.gouv.fr/;
4.http:// www.education.fr.
5.http:// Education in Germany.de;
6.http:// www.educationgermany.com/
7.http://VET.de/;
8.http:// www.education.de.
9.http://education.nic.in/higedu.asp
10.http://www.indianembassy.tj/history&culture/obraz_ind.htm
11.http://www.examen.ru/db/Examine/56A5FC51728F4098C325708A002794DB/
12.www.studentindia.com;
13.www.iisc.ernet.in
14.www.iitkgp.ernet.in;
15.www.caluniv.ac.in
16.http://www.thegoodguides.com;
17.http://www.unsw.edu.au
18.http://www.holmescolleges.com;
19.http://www.bond.edu.au
20.http://www.russo.qlb.edu.au;
21.http://www.gu.edu.au
22.http://www.usyd.edu.au;
23.http://www.mq.edu.au
24.http://www.infokorea.ru;
25. http://www.korea.net
26. http://www.cwd.go.kr/ ;
27.http://www.assembly.go.kr/
28.http://english.yna.co.kr/;
29.http://english.chosun.com/
30.http://joongangdaily.joins.com/;
31.http://times.hankooki.com/
32.http://www.hani.co.kr/;
33.http://vestnik.tripod.com/
34.www.waikato.ac.nz;
35.www.massey.ac.nz
36.www.kiwiquals.govt.nz;
37.www.nhce.ac.nz
38.www.eit.ac.nz;
39.www.uunz.ac.nz
40.http://www.osaka-u.ac.jp;
41.http://www.u-tokyo.ac.jp
42.http://www.edu.jp;
43.http://www.edu-vet.jp
44.www.inaru.co.il;
45.www.gu.edu.il
46.www.gu.il;
47.www.ZMAN.com
48.www.go.edu.dk;
49.www.educationsystems.dk

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբանի փոխարեն. 3

Ֆրանսիայի Հանրապետության կրթական համակարգը. 4

Գերմանիայի Դաշնային Հանրապետության կրթական համակարգը 24

Հնդկաստանի Հանրապետության կրթական համակարգը. 44

Ավստրալական Միության կրթական համակարգը. 62

Կորեայի Հանրապետության կրթական համակարգը. 83

Նոր Զելանդիայի կրթական հգամակարգը. 97

Ճապոնիայի կրթական համակարգը. 113

Իսրայելի Պետության կրթական համակարգը. 133

Դանիայի Թագավորության կրթական համակարգը. 149

Օգտագործված աղբյուրները. 158

ԳԱԳԻԿ ՊԱՐՈՒՅՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հրատարակչական աշխատանքները՝

Մարիամ Պետրոսյանի

Աստղիկ Միրզաթունյանի

Աշխեն Այվազյանի

Ստորագրված է տպագրության 15. 02. 2011 թ.:

Ծավալը՝ 10 մամուլ:

Ֆորմատ՝ 70Х100 $^{1}/_{16}$:

Տպագրությունը՝ օֆսեթ:

«Կրթության ազգային ինստիտուտ», Երևան, Տիգրան Մեծի 67, հեռ.՝ 57 48 20: